ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՄԲԻՈՆ

ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ասպիրանտների, մագիստրանտների, հայցորդների գիտաժողովի նյութերի

Երևան
ԵրՃՇՊՀ
2012

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ասպիրանտների, մագիստրանտների, հայցորդների գիտաժողովի նյութերի

Երևան 2012

ՀՏԴ 330
ԳՄԴ 65
Գ 602

Գիտական աշխատությունների ժողովածու / ՀՀԿԳՆ; ԵՃՇՊՀ, «ԷԻԿ» ամբիոն.- Գ 602: Եր.: Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարանի հրատարակչություն, 2012-47 էջ:

Սույն ժողովածուն ընդգրկում է Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարանի «Էկոնոմիկայի, իրավունքի և կառավարման» ամբիոնի ամենամյա գիտաժողովի նյութերը:

Ժողովածուն հասցեագրված է ասպիրանտներին, մագիստրանտներին, ուսանողներին, ինչպես նաև ընթերցող լայն շրջանակներին:

Ժողովածուում տպագրված յուրաքանչյուր հոդված ունի գրախոսական՝ գիտությունների դոկտորի (թեկնածուի), և որպես կանոն, մասնագիտական ամբիոնի եզրակացություն:

Сборник включает материалы ежегодной научной конференции кафедры “Экономики, права и управления” Ереванского государственного университета архитектуры и строительства, посвященой 90-летию образавания университета.

Адресован аспирантам, магистрантам, студентам, а также широкому кругу читателей. Каждая статья имеет рецензию специалиста данной области и как правило, заключение профилирующей кафедры.

Գիտաժողովի կազմկոմիտե՝ Հովհաննես Թոքմաջյան՝ ԵրՃՇՊՀ ռեկտոր, տ.գ.դ-ր., պրոֆ. նախագահ
Յուրի Սաֆարյան՝ Համալսարանի ԳԱԳ պրոռեկտոր, ճարտ.դ-ր., պրոֆ.
Արեստակ Սարուխանյան՝ Գիտական խորհրդի նախագահի տեղակալ, պրոռեկտոր
Գեորգի Կոշկարյան՝ Կրթության որակի գնահատման և վերահսկման բաժնի պետ
Տիգրան Մարտիրոսյան՝ Տնտեսագիտության ֆակուլտետի դեկան, տնտ.թ.
Տիգրան Բարսեղյան՝ Ճարտարապետության ֆակուլտետի դեկան, ճարտ.թեկն. պրոֆ.
Պետրոս Համբարձումյան՝ ԱՔԾ ֆակուլտետի դեկան, տ.գ.թ., դոցենտ
Լևոն Թոքմաջյան՝ ՀՆՏՏ ֆակուլտետի դեկան, տ.գ.դ.
Սարգիս Ստեփանյան՝ ԷԻԿ ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոց., փոխ նախագահ
Վարդգես Գրիգորյան՝ ՇԱՏԿ ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆ.
Վաղարշակ Մադոյան՝ Լեզուների ամբիոնի վարիչ, բ.դ-ր., պրոֆ.
Արա Հովհաննիսյան՝ տ.գ.թ., դոցենտ, ԷԻԿ ամբիոն
Աշոտ Մարկոսյան՝ տնտ.գ.դ-ր, նախագահ
Ջառա Մանվելյան՝ տնտ.թ., ասիստենտ, ԷԻԿ ամբիոն
Ռաֆաել Գրիգորյան՝ տնտ.թ., ասիստենտ, ԷԻԿ ամբիոն

Խմբագրական կոլեգիա՝ Իրինա Վանյան՝ տնտ.թ., դոց. , ԷԻԿ ամբիոն
Վահե Պետրոսյան՝ ասիստենտ, ԷԻԿ ամբիոն
Ռոբերտ Պետրոսյան՝ ասիստենտ, ԷԻԿ ամբիոն
Հայկ Մարության՝ ասիստենտ, ԷԻԿ ամբիոն
Աննա Բատիկան՝ ասիստենտ, ԷԻԿ ամբիոն
Աստղիկ Գրիգորյան՝ դասախոս, ԷԻԿ ամբիոն
Արմեն Շահինյան՝ դասախոս, ԷԻԿ ամբիոն

ՀՏԴ 330
ԳՄԴ 65

Ժողովածուն հրատարակվում է ԵրՃՇՊՀ Գիտական Խորհրդի որոշմամբ:

ISBN 978-9939-63-114-1

© Երևանի ճարտարապետության և
շինարարության պետական համալսարան, 2012



Դասախոս՝
Աննա Կոստանյան



Ուսանող՝
Էդգար Հովեփյան

ՀՏԴ 330.341.1 (ԵՃՇՊՀ, «Էկոնոմիկայի, իրավունքի և կառավարման» ամբիոն)

ԷԿՈ ՔԱՂԱՔՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Տվյալ հոդվածում ներկայացված է էկո քաղաքների էությունը, տրված են որոշ բնութագրեր էկո քաղաքների անհրաժեշտության վերաբերյալ: Ներկայացված են որոշ տեխնոլոգիական խնդիրներ կապված էկո քաղաքների պլանավորման և էկո տների կառուցման վերաբերյալ, ինչպես նաև այլընտրանքային էներգիայից օգտվելու տեխնոլոգիաները Հայաստանի Հանրապետությունում:

Աշխարհում ի հայտ են գալիս և ավելի մտահոգիչ են դառնում այնպիսի խնդիրներ, ինչպիսին է գլոբալ տաքացումը, որը շատերին ստիպեց մտածելու էկոլոգիական խնդիրների լուծման մասին: Այդ լուծումներից մեկն է հանդիսանում էկոլոգիապես մաքուր քաղաքների կառուցումը: Եթե չկան կանաչապատ տարածքներ որոնք անհրաժեշտ են արտանետված ածխածնի կլանման համար, ապա անհրաժեշտ է հնարավորինս կրճատել ածխածնի արտանետման ծավալները:

Ներկայումս օգտվում են նաֆթից և գազից, քանի որ դա համեմատաբար ավելի էժան է քան էկոլոգիապես մաքուր տեխնոլո գիաների կիրառումը, սակայն այդ վառելիքային ռեսուրսները, ոչ միայն սպառվող են, այլև վերականգնվում են դարերի ընթացքում:

Միջազգային փորձը ցույց է տալիս, որ բոլոր երկրները չէ, որ հնարավորություն ունեն կառուցոլու էկո-քաղաքներ, ինչը կապված է ոչ միայն ֆինանսական խնդիրների հետ, այլև բնական պայմանների և աշխարհագրական դիրքի:

Հայաստանի Հանրապետությունը ներկայումս չունի այնպիսի տեխնոլոգիաներ և ֆինանսական միջոցներ, որպեսզի կարողանա կառուցել էկո-քաղաք, բայց պետք է մտածել այդ ուղղությամբ հետազոտություններ կատարելու մասին, ինչը հնարավորություն կտա ստեղծելու Հայաստանի պայմաններում կիրառելի տեխնոլոգիաներ այլընտրանքային էներգիայի աղբյուրներից օգտվելու համար: Պետք է մշակել ծրագրեր կապված էկո-քաղաքի հետ, որը պետք է կառուցվի ապագայում: Տեխնոլոգիաները որոնք օգտագործում են այն երկրները, որոնք զբաղվում են էկո-քաղաքների խնդիրներով, թանկ են իրենց եզակիության պատճառով, բայց մեծ է հավանականությունը, որ նմանատիպ տեխնոլոգիաները մոտ ապագայում հասանելի կլինեն պահանջարկի աճի պատճառով:

Վառելիքային ռեսուրսների բացակայության պայմաններում (նավթ, գազ, քարածուխ և այլն) Հայաստանի Հանրապետությանը անհրաժեշտ է օգտվել այլընտրանքային էներգիայի աղբյուրներից:

Արեգակնային էներգիա

Պարիս Հերունին Հայաստանում առաջիններից էր, ով սկսեց լրջորոն հետազոտություններ կատարել արեգակնային հսկայական էներգիան օգտագործելու ոլորտում, նրա հայտնագործած սարքերը հնարավորություն են ստեղծում արեգակի ճառագայթներն կենտրոնացնել մեկ վայրում, ինչի արդյունքում տեղի է ունենում էներգիայի հսկայական կուտակում: Պարիս Հերունու մահվանից հետո (2008թ. դեկտեմբեր) նրա ղեկավարած ծրագրերի մի մասը չստացավ ֆինանսավորում և այժմ գտնվում է «սառեցված» վիճակում:

«Industrial Technologies CO» հայկական ընկերությունը զբաղվում է կիսահաղորդիչ արեգակնային մարտկոցների արտադրությամբ և նույնիսկ արտահանում է երկրի սահմաններից դուրս: 2006թ-ից «ՄԱԿ»-ը Հայաստանում, մասնավորապես Գյումրի քաղաքում, իրականացնում է արեգակնային մարտկոցների օգնությամբ այլընտրանքային էներգիայից օգտվելու ծրագրեր: «ՄԱԿ»-ի աջակցությամբ Գյումրիի մեկ-երկու շենքերի վրա փորձնականորեն տեղադրված են արեգակնային մարտկոցներ, որն ապահովում է շենքում առկա բնակարանների տաք ջրամատակարարումը:

Հայաստանի Հանրապետությունը չունի փորձ էկո-քաղաքների պլանավորման և կառուցման ոլորտներում, բայց փորձ ունի այլընտրանքային էներգիայի տեխնոլոգիաների կիրառման մեջ: Արդեն այսօր մի շարք ընտանիքներ իրենց նախապատվությունը տալիս են արեգակնային մարտկոցների միջոցով ստացվող էներգիայից օգտվելուն: Նրանք իրենց բնակարաններում տեղադրել են համակարգեր, որոնք հնարավորություն են տալիս էականորեն հեշտացնելկ իրենց կյանքը:

Ջերմակիրների հնարավոր հանքավայրեր

ՀՀ տարածքում ջերմակիրների հնարավոր հանքավայրերից առանձնացվում են.

- Տաք չոր ապարներ (Արագածոտն, Շիրակ, Գեղարքունիք, Սյունիք և ԼՂՀ),
- Հրաբխային մագմայի օջախներ (Գեղարքունիք, Սյունիք և ԼՂՀ),
- Ստորգետնյա ջրեր (Երևան, Արարատ, Արմավիր, Գեղարքունիք, Սյունիք և ԼՂՀ):

Հարկ է նշել, որ հանքային աղբյուրները որպես ջերմակիրների ինքնուրույն հանքավայր չեն դիտարկվում:

Հողմային էներգիա

Հայաստանում այնքան էլ դյուրին չէ օգտագործել քամու միջոցով ստացված էներգիան, քանի որ Հայաստանը լեռնային երկիր է և քամու հոսանքները կայուն չեն, այսինքն չունեն նույն ուղղությունը, բացի դրանից հողմային կայանների կառուցումը պահանջում է լուրջ ներդրումներ և ներկայիս տեխնիկական հնարավորությունները թույլ չեն տալիս քամու էներգիայից օգտվելու սարքերը տեղադրել մեծ թեքություններ ունեցող մակերևույթներում՝ լեռների վրա: Հայաստանում այդ ուղղությամբ կատարվել են հետազոտություններ և նույնիսկ կառուցվել են հողմային կայաններ, որոնցից մեկը Պուշկինի լեռնանցքում գտնվող հողմային կայանն է:

Արևային մարտկոցներ

Արևային մարտկոցները հանդիսանում են ամենատարածված տարբերակը արևային էներգիայից էլեկտրոէներգիա ստանալու համար, ներկա դրությամբ այդ տեխնոլոգիան լայնորեն կիրառվում է Ամերիկայի Միացյալ Նահանգներում, Եվրոպայում և Չինաստանում, հարկ է նշել, որ այս պահին ամբողջ աշխարհում արտադրվող արևային մարտկոցների ծավալի 50%-ը արտադրվում է Չինաստանում:

Արևային մարտկոցներ են արտադրվում նաև Հայաստանի Հանրապետությունում: «Industrial Technologies CO» հայկական ընկերությունը զբաղվում է կիսահաղորդիչ արևային մարտկոցների արտադրությամբ: Նշենք, որ ընկերության արտադրած արևային մարտկոցները կիրառվում են արդեն Գառնիի մոտ գտնվող Գեղադիր գյուղում: Այս տարի նախատեսվում է գյուղում տեղադրել ևս քսանից երեսուն մարտկոց: Ինչ վերբերվում է մարտկոցների արժեքին՝ կարելի է նշել, որ 1 կՎտ հզորությամբ պանելն արժե 5-6 հազ. դոլար: Այն հայելու միջոցով կուտակում է արևի էներգիան՝ վերածելով այն էլեկտրաէներգիայի:

Գյուտի հեղինակն է Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի դասախոս Ռուբեն Վարդանյանը, ում կարծիքով՝ Հայաստանում հարկավոր է զարգացնել կիսահաղորդիչ արևային մարտկոցների արտադրությունը: Նա նշեց, սակայն, որ պետական աջակցություն և վստահություն դեռևս չկա նման գիտական հետազոտությունների նկատմամբ:

Ի՞նչ են իրենցից ներկայացնում արևային մարտկոցները

Արևային մարտկոցները իրենցից ներկայացնում են կոմպակտ վահանակներից բաղկացած մանրաբյուրեղային կիսահաղորդիչներ(կրեմնի) բաղկացած քառակուսի բջիջներից: Արևային մարտկոցները հնարավորություն են տալիս արևի ճառագայթներից ստացվող էներգիան փոխակերպելու մեզ համար այդքան անհրաժեշտ էլեկտրականության: Եթե արևային մարտկոցները դիտարկենք տան համար, ապա ֆիզիկայի տեսանկյունից այն կարելի է մեկնաբանել որպես ֆոտո-էլեկտրական գեներատոր, որն ունի մոդուլային կառուցվածք: Միասին այդ մոդուլները իրենցից ներկայացնում են արդյունավետ փոխակերպիչ սարք (կախված սահմանված պարամետրերից մոդուլներն միմյանց հետ կարող են միացված լինել ինչպես զուգահեռ, այնպես էլ հաջորդական միացումներով): Յուրաքանչյուր մարտկոցի մակերևույթ ունի հատուկ պաշտպանիչ շերտ, որը պատրաստված է յուրահատուկ հյուսվածքներ ունեցող ջերմամշակված ապակուց: Արևային մարտկոցները որպես կանոն տեղադրվում են տանիքների վրա, որը ամենահարմար տարբերակն է հանդիսանում, քանի որ լուսավորությունը չի փոխվում, սակայն, եթե որոշակի պատճառներով հնարավորություն չկա արևային մարտկոցները տեղադրելու տանիքի վրա, այն կարելի է տեղադրել գետնին՝ եռանկյունաձև տեսքով, որոնք թեքված կլինեն դեպի հարավ:

Ինչի՞ց է կախված արևային մարտկոցների արդյունավետությունը

Որքան մեծ է տան համար նախատեսված արևային մարտկոցների նվազագույն հզորությունը, այնքան մեծ է ավելի շատ էլեկտրական էներգիա ստանալու հնարավորությունը: Չնայած այդ փաստի, շատ մեծ նշանակություն ունի լույսի «ակտիվության» դերը մարտկոցների աշխատանքի վրա, որքան շատ լինեն արևային օրերը տարվա ընդացքում, այնքան արևային մարտկոցներ կաշխատեն ավելի արդյունավետ: Հետազոտությունները ցույց են տալիս, որ 7000Վտ հզորությունը բավարար է առանձնատունը անհրաժեշտ էներգիայով ապահովելու համար:

Հարկ է նշել որ արևային մարտկոցներն օգտագործում են ոչ միայն էլեկտրական էներգիա ստանալու, այլև տանը տաք ջրամատակարարում ապահովելու համար: Գոյություն ունեն հատուկ համակարգեր և սարքավորումներ նախատեսված տաք ջրամատակարարման համար, որոնց հիմքում ընկած են այլընտրանքային էներգիաի աղբյուրները: Այս համակարգերը իրենց կիրառությամբ գրեթե չէն տարբերվում արևային մարտկոցներից: Տեղադրվում է բաք՝ մինչև 60լ տարողությամբ, որը տաքանում է արևից ստացած էներգիայի շնորհիվ:

Արևային մարտկոցների որակական հատկանիշները կարելի է բնութագրել հետևյալ կերպ՝

- համակարգը ավտոմատացված է,

- բացարձակ անձայն է,
- հարմարավետ են կիրառման մեջ,
- էկոլոգիպես մաքուր են,
- երկարակյաց են,
- դիմացկուն են (դիմանում են անձրևին, կայծակին):

Արևից ստացված էներգիան, որը փոխակերպվում է էլեկտրական էներգիայի լիցքավորման կարգավորիչի օգնությամբ կուտակվում է էներգակիր մարտկոցներում: Սակայն մարտկոցներում կուտակված էլեկտրոներգիայի լարումը կայուն չէ և պիտանի չէ տնային պայմաններում օգտագործելու համար, այդ իսկ պատճառով օգտվում են փոխակերպիչ սարքից, որը մարտկոցներում կուտակված էներգիան փոխակերպում է 220վլտ հաստատուն լարման:

Էկո-քաղաքի տեխնիկական խնդիրները

Էկո-քաղաքների 3 հիմնական խնդիրներն են հանդիսանում՝

1. կլիմայի փոփոխությունը
2. բնության պահպանումը
3. ջրային ռեսուրսների պահպանումը

Էկո-քաղաքների արդյունավետությունը պայմանավորված է նրանով, որ նրանք «սնվում են» բացառապես արևային էներգիայից:

Քաղաքներում շրջակա միջավայրին ամենամեծ վնասը հասցնում են ոչ թե ավտոմեքենաները, այլ բազմաբնակարան շենքերը, բիզնես համալիրները և մնացած հսկայական կառույցները: Նրանց հաշվին են գրանցվում քաղաքում վնասակար գազերի արտանետման ընդհանուր ծավալի 45%-ը:

Փորձերը ցույց են տալիս, որ եթե մեկ միջին հարկայնության շենք օգտագործի միայն արևային էներգիա, ապա էլեկտրոէներգիայի արտադրման տարեկան ցուցանիշը կկրճատվի 10000 ԿՎտ-ով, որի արտադրության համար մթնոլորտ է արտանետվում 12,5 տոննա ածխաթթու գազ: Նշենք որ նման քանակության ածխաթթու գազը կլանելու համար անհրաժեշտ է ունենալ մոտ 1,5 հեկտար անտառապատ ծածկույթ: Բայց գիտնականների, ինժեներների և ճարտարապետների նոր սերունդը վերանայում են շինարարական հին մեթոդները և առաջարկում լիովին նոր շինարարական տեխնալոգիաներ և մոտեցումներ: Ֆոտո-էլեկտրական մարմինները, որոնք փոխակերպում են արևային էներգիան էլեկտրական էներգիայի օգտագործվում են արդեն մոտ 50 տարի: Այսօր շատերը աշխատում են նոր ճանապարհներ փնտրել արևի հսկայական էներգիան օգտագործելու համար, որը ամեն օր հայտնվում է երկրի վրա:

Նոր շինարարական տեղնալոգիաներից է համարվում զոլոբետոնի կիրառումը, նոր մոտեցումներով փայտե տների կառուցումը, մետաղյա կոնստրուկցիաների լայնորեն կիրառումը:

Զոլոբետոն - այս նյութը ներկայումս լայնորեն կիրառվում է ոչ միայն էկո-քաղաքների կառուցման ժամանակ, այն հանդես է գալիս որպես ցեմենտին փոխարինող (վերջինիս արտադրության համար անհրաժեշտ է ծախսել հսկայական էներգիա): Զոլոբետոնի օգնությամբ պատրաստված շինարարական բետոնը ավելի խիտ է, և վերջնական արդյունքում կառույցների մակերևույթը ստացվում է ավելի հարթ, քան ավանդական ցեմենի կիրառման դեպքերում:

Փայտե տների կառուցում - լիովին նոր շինարարական տեխնոլոգիաներով կառուցվող այս տները հավաքվում են փայտե բլոկների օգնությամբ, որոնք նախապես գծագրվում, մշակվում և պատրաստվում են արտադրամասում:

Այս տները ունեն բավականին լավ և տպավորիչ ցուցանիշներ, էլեկտրական էներգիայի տնտեսման տեսանկյունից: Այստեղ փայտը հանդես է գալիս իբրև թերմո-մարտկոց, ինչը բացատրվում է նրանով, որ փայտյա պատերը ավելի լավ են պահպանում ջերմությունը ի տարբերություն այլ կոնստրուկցիաների: Այս տները նախագծվում և պատրաստվում են այնպես, որ տան հարավային պատերը ձմռանը արևի ջերմությունից տաքանում են՝ առաջացնելով օդի շրջապտույտ տան ներսում, որի ընդացքում փայտի մեջ եղած ջերմությունը անջատվում է ամբողջ օրվա ընդացքում:

Ամռանը տան ներսում զով օդը պահպանվում է շնորհիվ ճեղնահարկից տաք օդի արտահոսքի և նկուղից սառը օդի ներհոսքի շնորհիվ: Ինչպես մնացած այլ տներում, որոնք օգտագործում են արևային էներգիան, տան հարավային մասում ավելի շատ է օգտագործվում ապակի՝ ի տարբերություն մյուս կողմերի:

Այս տները կառուցվում են «տուն տան մեջ» սկզբունքով: Այսպիսի տների արտադրությունից մնացորդներ գրեթե չեն մնում, որոնք ճշտգրիտ հաշվարկների շնորհիվ հասցվում են նվազագույնի:

Մետաղե կոնստրուկցիաներով կառուցվող շենքրի առանձնահատկությունները

Էկո-քաղաքներ կառուցելիս պետք է օգտվել այնպիսի տեխնոլոգիաներից, որոնք տնտեսապես ավելի շահավետ են, համեմատաբար քիչ միջոցներ են պահանջում: Միջազգային երկրներում մեծ կիրառություն ունեն մետաղյա կոնստրուկցիաներով կառուցվող շենքերն ու շինությունները: Այդպիսի երկրներից է հանդիսանում Ամերիկայի Միացյալ Նահանգները՝ մասնավորապես Նյու Յորք քաղաքը:

Նյու Յորքը հայտնի է իր երկնաքերերի քանակությամբ, որը մոտավոր հաշվարկներով անցնում է 1000-ի սահմանը, շնորհիվ այդ թվի Նյու Յորքը զբաղեցնում է 2-րդ տեղը աշխարհում: Այդ երկնաքերերի մեծ մասը գտնվում է Մանհեթանում, բայց հարցը միայն քանակության մեջ չէ:

2006թ.-ի ամռանը Մանհեթանում բարձրահարկ շենքերի թվին ավելացավ ևս մեկը՝ 46 հարկանի «Հյորսթ» բիզնես համալիրը, որը էականորեն տարբերվում էր մնացած բոլոր կառույցներից: Ցանցային կարկասով հավաքված այս շենքի կառուցման համար անհրաժեշտ է 20 % ավելի քիչ պողպատ՝ համեմատելով այն շենքերի հետ, որոնք կառուցվում են ավանդական եղանակներով: Շենքի ներքին լուսավորությունը հսկվում է հատուկ սենսորների օգնությամբ, որոնք միացնում կամ անջատում են լուսավորությունը կախված բնական լույսի առկայության պայմաններից: Տարվա մեծ մասը, շնորհիվ HVAC համակարգի, ներքին օդը օգտագործվում է շենքի օդափոխությունը ապահովելու համար: Դա հնարավորություն է տալիս զգալիորեն նվազեցնել էներգիայի ծախսը և 22 %-ով իջեցնել արտադրվող ածխաթթու գազի քանակությունը, համեմատած չափերով իրեն նման այլ շենքերի հետ: «Հյորսթի» ընդհանուր մակերեսը կազմում է 80 000 մ^2, այն կառուցվել է 3 տարիների ընդացքում (2003-2006թթ.): Շենքի ճարտարապետը Նորման Ֆոստերն է, նա նախագծելով այդ շենքը օգտվել է ժամանակակից արդյունավետ տեխնոլոգիաներից:

Միջազգային փորձը

Առանց արևի կյանք չկա, դա գիտական փաստ է: Արեգակնային էներգիայի շնորհիվ է, որ գոյություն ունենք մենք և ամբողջ կենդանական աշխարհը երկրագնդի վրա:

Ժամանակակից տեխնոլոգիաների շնորհիվ մարդիկ սովորել են օգտագործել արեգակնային էներգիան, «ստիպելով» նրան էլեկտրաէներգիայով մատակարարել մեր բնակարանները, ձեռնարկությունները և այլն:

Աշխարհում մի շարք երկրներ սկսել են էկո-թաղամասերի և էկո-քաղաքների (որոնք տարածքով ավելի մեծ են էկո-թաղամասերից) շինարարությունը: Դրա վառ օրինակներից են «Միրնի» քաղաքի շինարարությունը Ռուսաստանի Դաշնությունում և «Մասդար» քաղաքինը՝ Աղիս-Աբեբայում, որը գտնվում է Արաբական Միացյալ Էմիրություններում: Մինչ էքստրասենսները փակում են աչքերն ու աստվածային տեսք ընդունելով գուշակում աշխարհի վերջը, գիտնականները երկրի վերջի տարեթվի մասին այնպիսի կանխատեսումներ են անում, որոնք այնքան էլ ծիծիաղելի չեն. գլոբալ տաքացում, գլոբալ սառեցում, շրջակա միջավայրի, ակվապարկի աղտոտում և այլն:

Գիտնականներն ասում են, որ մենք մեր երեխաներին սարսափելի աշխարհ ենք թողնում որպես ժառանգություն: Իսկ Աղիս-Աբեբայում արդեն կառուցվում է երկրագնդի առաջին էկո- քաղաքը: Այստեղ չեն լինելու ավտոմեքենաներ, աղբ, ածուխ և էկոհամակարգը աղտոտող այլ երևույթներ: Քաղաքը կոչվում է Մասդար, որը թարգմանաբար նշանակում է աղբյուր: Շինարարական աշխատանքները կավարտվեն 2023 թ.-ին: Այստեղ կլինեն թատրոններ, կինոսրահներ, բիզնես կենտրոններ և այլն: Քաղաքը հնարավորություն կտա գիտնականներին զբաղվել էկոխնդիրների լուծման հարցերով և ուսումնասիրություններով: ԸՆդհանուր առմամբ այն զբաղեցնում է 6 կմ քառակուսի տարածք և նրա մի ծայրից մյուսը շարժվելու համար մարդիկ կօգտվեն ռոբոտ- տաքսիներից, որոնք աշխատելու են առանց գազի և բենզինի և որոնց մեջ կարող է տեղավորվել 6 ուղևոր: Անհրաժեշտ է միայն այնտեղ գտնվող էկրանի վրա հավաքել ցանկացած վայրի անվանումը և մի քանի վայրկյանում կհասնեք ձեր ցանկացած վայրը: Քաղաքում մշտապես կգործի աղբի և ջրի վերամշակում, որը հնարավորություն կտա դրանք նորից օգտագործել, դե իսկ խանութներում կգտնեք միայն էկոլոգիապես մաքուր մթերքներ: Քաղաքի շինարարության վրա արդեն իսկ ծախսվել է 22 միլիոն դոլլար:

Արդեն այսօր աշխարհի գրեթե ցանկացած անկյունում կարելի է հանդիպել տներ, ձեռնարկություններ և այլ շենքեր ու շինություններ, որոնք օգտագործում են արևային էներգիայից ստացված էլեկտրոէներգիա՝ իրենց տանիքների վրա տեղադրված արևային մարտկոցների շնորհիվ:

Էկո-քաղաքները իրենց չափերով չեն կարող զբաղեցնել մեծ տարածություններ (նրանք հիմնականում կառուցվում են, որպես արբանյակ քաղաքներ), քանի որ բնակչության աճին զուգահեռ անհրաժեշտ են աշխատատեղերի առկայություն, իսկ բնակչության մեծ քանակության դեպքում զբաղվածությունը հնարավոր չէ լրացնել փոքր և միջին բիզնեսի, տուրիստական կենտրոնների հաշվին: Աշխատատեղերի մեծ քանակություն ապահովելու համար անհրաժեշտ է արտադրություն, այսինքն գործարանների առկայություն, ինչը սակայն հակասում է էկո-քաղաքների նշանակությանը:

ХАРАКТЕРИСТИКИ И ПРИМЕНЕНИЕ ЭКО ГОРОДОВ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИИ

В данном статье представлен сущность эко городов,даются некоторые характеристики касающиеся необходимости эко городов. Представлены некоторые технологические задачи касающиеся планировки эко городов и строительства эко домов, а так же технологии пользования альтернативной энергии в Республике Армения.

.

Գրականություն

1. Eco Town Report: Learning from Europe on eco-towns
2. Global Environment Centre
3. Masdar City The world's first carbon-neutral city
4. http://architectura.biz/blogs/steklo-i-plastik-v-arhitekture/the-hearst-tower-nyu-iork-296.htmll
5. Discovery TV science, "great buildings"



Ասիստենտ՝
Վարազդատ Հովհաննիսյան

Մագիստրանտ՝
Մարիա Ահարոնյան



ՀՏԴ 349.412.2 (ԵԵՇՊՀ, «Էկոնոմիկայի, իրավունքի և կառավարման» ամբիոն)

ԷՔՍՊՐՈՊՐԻԱՑԻԱՅԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԴԵՄ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Հոդվածը վերաբերվում է էքսպրոպրիացիայի ինստիտուտի գործողությունների ոլորտին և կիրառման հետևանքներին: Քննարկվում է էքսպրոպրիացիայի՝ ՀՀ հասարակական ու սոցիալական կյանքում ունեցած դերի ու նշանակության մասին, ՀՀ քաղաքացիների բողոքարկման իրավունքը սեփականության հարկադիր օտարման, փոխհատուցման, վերահաստատման, իրենց ապրուստի վերականգնման նպատակի և կիրառվող մեխանիզմների դեպքում:

Ներկայումս գրեթե բոլոր երկրների օրենսդրական բազաներում առկա են մի խումբ իրավական ակտեր, որոնց նպատակն է կարգավորել այն հարաբերությունները, որոնք առաջանում են անշարժ գույքի սեփականատիրոջ և այն անձանց միջև, որոնք պետք է յուրացնեն այդ սեփականությունը որևէ հասարակական կամ հանրօգուտ աշխատանք իրականացնելու համար: Այդ իրավական ակտերը ձևավորում են քաղաքացիական (միևնույն ժամանակ պետական) իրավունքի այն ինստիտուտը, որն ընդունված է անվանել էքսպրոպրիացիա կամ հարկադիր օտարում: Հարկադիր օտարումը, դա սեփականության իրավունքի բռնի գրավումն է մասնավոր անձից, որի դեպքում հասցված վնասը ամբողջովին փոխհատուցվում է:

Էքսպրոպրիացիան կամ այլ խոսքերով պետական կամ հանրային կարիքների համար գույքի հարկադիր ձեռք բերումը սոցիալական նոր երևույթ է Հայաստանի համար: Անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի տարբեր տեսակների ներմուծումը Հայաստանի սոցիալական կյանք իրականացվեց 1991թ.[1] [1]: Սակայն հասարակության և պետական կարիքների համար սեփականության օտարման մասին օրենքն ընդունվեց 2007թ.-ի նոյեմբերի 27-ին (այս օրենքում 25.11.2009թ.-ին կատարվել են փոփոխություններ և լրացումներ), որին նախորդել են նույն խնդրին վերաբերող ՀՀ Սահմանադրական դատարանի երկու որոշումներ (27 փետրվարի 1998թ. և 18 ապրիլ 2006թ.): ՈՒնենալով կյանքի կարճատև պատմություն՝ էքսպրոպրիացիայի ինստիտուտի ներդրումը Հայաստանում անցնում է սոցիալական լուրջ ընդվզումների և բողոքների ալիքներ ներքո: Եթե վերլուծում ենք այդ բողոքների պատճառները, ապա կարող ենք արձանագրել շատ հետաքրքիր մի փաստ: Այս մարդկանց մեծ մասը, ընդհանուր առմամբ, դեմ չէ էքսպրոպրիացիայի գործընթացին: Նրանք բողոքում են էքսպրոպրիացիայի իրականացման գործընթացի և էքսպրոպրիացիայի ենթարկված գույքի դիմաց արդարացի փոխհատուցման համար: Բացի այդ, եթե իշխանություններն ապահովեն բողոքարկման արդյունավետ ընթացակարգեր և մարդիկ համոզված լինեն, որ բողոքարկման օրինական գործընթացներն

[1] Անկախության դեկլարացիայից հետո (ընդունված 23.02.1990թ.-ին Հայաստանի գերագույն խորհրդի կողմից) 1991թ.-ից Ազգային ժողովն ընդունել է շատ օրենքներ՝ համաձայն որի անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը մտցվեց հայերի սոցիալական կյանք: Դրանցից են Հայաստանի Հանրապետության պետական սեփականության մասին օրենքը՝ ընդունված 09.10.1990թ.-ին, Հայաստանի Հանրապետության Գյուղատնտեսության և Գյուղատնտեսական կոլտնտեսության մասին օրենքը՝ ընդունված 20.021991թ.-ին, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգիրքը՝ ընդունված 15.03.1991թ.-ին, Բնակֆոնդի ապապետականացման և սեփականաշնորհման մասին ՀՀ օրենքը՝ ընդունված 10.06.1993թ., Հայաստանի Հանրապետության պետական ձեռնարկությունների և անավարտ շինարարական օբյեկտների մասին օրենքը՝ ընդունված 25.10.1994թ.-ին, Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի մասին օրենքը՝ ընդունված 25.01.1996թ.-ին, Հայաստանի Հանրապետության պետական սեփականության մասնավորեցման մասին օրենքը՝ ընդունված 17.12.1997թ.-ին

արդյունավետ են և իրենց շահերի պաշտպանության առավել վստահելի միջոց, ապա մարդիկ կսկսեն բողոքի այլ ձևերի չդիմել, որոնք կարող են հանգեցնել ոչ միայն իրենց կարողության այլև նույնիսկ կյանքի կորստին:

Բողոքարկելու հնարավորությունների անհրաժեշտությունը

Քանի դեռ զգուշություն չի ցուցաբերվել, շատ խոչընդոտներ կարող են խանգարել մարդկանց՝ կառավարության գործառնությունների դեմ բողոքարկելիս: Բողոքարկումների գործընթացը կարող է լինել թանկ, ժամանակատար կամ էլ անմատչելի ու ճնշող: Եթե լսումը տեղերում չի կազմակերպվում, ապա կարող է անհնար լինել ավելի աղքատ մարդկանց համար ուղևորվել դեպի գործը քննող մարմին: Հաճախ տեխնիկական գիտելիքների բարձր մակարդակ է անհրաժեշտ, որպեսզի մարդիկ կարողանան ճիշտ հիմնավորել իրենց բողոքները, սակայն նրանք այդ գիտելիքները կարող են չունենալ: Նման խնդիրների առաջացումը կանխելու համար օրենսդրությունը պետք է ապահովի բողոքարկման ընթացակարգերի ըմբռնելիությունն ու պարզությունը: Այն պետք է սահմանի, թե երբ կարող է բողոքարկումը կատարվել: Լավ պրակտիկան այն է, որ բողոքարկումը թույլատրվի միայն այն ժամանակ, երբ հնարավոր չէ մեկ այլ ձևով համաձայնության հասնել, օրինակ՝ միայն այն ժամանակ, երբ գործարքները ձախողվել են:

Քանի որ կառավարությունն ունի ավելի մեծ մուտք դեպի ռեսուրսներն ու տեղեկատվությունը, նա է կրում ապացույցի ծանրությունը բողոքարկման ժամանակ, և վճարում է կապակցված ծախսերը: Սա առանձնապես կարևոր է այն ժամանակ, երբ բողոքարկումն իրականացվել է ձեռքբերման նպատակի, ուժի չարաշահման կամ ընթացակարգային անարդարության դեմ: Եթե նմանատիպ բողոքարկման հետ կապված ծախսերը չեն ծածկվում կառավարության կողմից, ապա այն մտավախությունը, որ հասարակ մարդիկ ստիպված են լինելու իրենք վճարել բողոքարկման հետ կապված ծախսերը, կարող է հետ պահել նրանց իրենց բողոքարկման իրավունքն իրականացնելուց:

Բողոքարկման պատճառները

Օրենսդրությունը պետք է սահմանի այն իրավունքներ, երբ մարդը կարող է բողոքարկել: Ընդհանրապես կան բողոքարկման 3 դեպքեր՝ բողոք նախագծի նպատակի դեմ, բողոք հարկադիր ձեռքբերման իրագործման համար օգտագործված ընթացակարգերի դեմ և բողոք փոխհատուցման արժեքի դեմ:

Նախագծի նպատակի դեմ բողոքարկումները. նախագծի նպատակին ուղղված առարկությունը մարտահրավեր է առ այն, որ նախագիծը չի ծառայում հասարակական նպատակներից որևէ մեկին, որոնց համար հարկադիր կերպով ձեռքբերում է թույլատրվում: Նախագծի նպատակին դեմ բողոքարկումները նաև ներառում են մարտահրավերներ այն մարդկանց կողմից, ովքեր հավատում են, որ իրենց որոշակի հողակտորները նախագծի կողմից պահանջված չեն և, որ նախագիծը լավագույնս կիրականացվի որևէ այլ տեղում: Քանի որ այս բողոքարկումները գնում են դեպի նախագծի «Սիրտը», սովորաբար լինում են ժամկետների հետ կապված սահմանափակումներ, որոնք հաճախ կապվում են տուժած անձանց կողմից արված բողոքի հայտարարության առաջին հրատարակման ամսաթվին: Բացի այդ կա նաև սահմանափակումների առկայության հակվածություն այն անձանց հանդեպ, ովքեր կարող են բողոքարկել: Հաճախ միայն այն մարդիկ կարող են առարկել առաջարկված նախագծի առնչությամբ, ում հողը հարկադիր կերպով ձեռք է բերվում,:

Երբ կառավարությունը արդեն մեկ անգամ սահմանել է կոնկրետ հողակտորի անհրաժեշտությունը նախագծի համար, ապա հաճախ դժվար է լինում վնաս կրած սեփականատիրոջ կամ ժամանակավոր շահագործողի համար ապացուցել, որ ձեռքբերումը հանրային անհրաժեշտություն չէ:

Ընթացակարգերի դեմ բողոքարկումներ. Անպատեհ ընթացակարգի օրինակները ներառում են անպատշաճ հայտարարություն (*օրինակ*՝ տեղի ունեցող ձեռքբերումն առանց սեփականատիրոջը հարկադիր ձեռքբերման հետ կապված ողջ պահանջված տեղեկատվության տրամադրման), ժամանակագրումը (օրինակ՝ ձեռքբերման հորդորման մեջ անխոհեմ շտապողականությունը), փոխհատուցման պահանջների անպատշաճ ընթացքը (օրինակ՝ փոխհատուցման հետ կապված բանակցություններում ձեռք բերող գործակալության կողմից հավատ չներշնչող գործառնությունները), վճարման ուշացումը կամ վճարումը սխալ անձին կատարելը, հողի նկատմամբ մուտքի ձեռքբերման կամ դրա տիրապետման սխալ ընթացակարգերը: Նման սխալների վրա հիմնված պահանջները հաճախ սեփականատերերի և ժամանակավոր շահագործողների համար միակ միջոցներն են՝ կաշառակերության դեմ իրենց իրավունքները պաշտպանելու համար:

Դատարանները հաճախ առավել հոժարակամ ընթացք են տալիս ընթացակարգային բողոքարկումներին, քան՝ նպատակին վերաբերող բողոքարկումներ: Եթե մարդ շահում է ընթացակարգերի դեմ բողոքարկումը, ձեռք բերող գործակալությունը կարող է ստիպված լինել կրկին վերսկսել գործընթացն ամբողջությամբ կա՛մ էլ կարող է գործընթացքն սկսել այն անձի հետ, ով բողոքարկել էր: Քանի որ այս բողոքարկումները կարող են մեծապես խանգարել նախագծի իրականացմանը նախատեսված ժամկետներում, ապա ձեռք բերող գործակալությունը պետք է խուսափի այդ բողոքարկումներից՝ գործընթացը վարելով արդարացի, պարզ վարվելակարգով և օրենքին համաձայն:

Առաջարկվող փոխհատուցման դեմ բողոքարկումներ.

Ամենաասովորական բողոքարկումները փոխհատուցման վերաբերյալ են: Դրանք ընդհանուր առմամբ հիմնված են մարդկանց այն ընկալման վրա, որ առաջարկված փոխհատուցումն իրենց հողի կամ գույքի համար

անհամապատասխան է: Նրանք, ովքեր բողոքարկում են, կոչ չեն անում կառավարությանը նախագիծը դադարեցնել, նրանք պարզապես փնտրում են ավելի շատ փող, կամ փոխհատուցման այլ ձևեր: Բողոքարկումները կարող են պահանջել, որ գնահատման սխալ սկզբունքներ են գործածվել, կամ որ առաջարկված փոխհատուցումն անարդար է և պետք է վերահաշվարկվի:

Բողոքարկումն ուսումնասիրելու մեխանիզմներ

Սեփականատերերն ու ժամանակավոր շահագործողներն այն մարմնին բողոքարկելու իրավունք ունեն, որն անկախ է ձեռքբերող գործակալությունից: Բողոքարկումների ուսումնասիրումը պետք է լինի արդարացի, ոչ թանկ, հեշտ հասանելի և արագ: Գոյություն ունեն ուսումնասիրման ընթացակարգերի 2 հիմնական ձևեր՝ իրավաբանական ընթացակարգեր և վարչական ընթացակարգերը: Այնուհանդերձ, շատ երկրներ ունեն վարչական և իրավաբանական ուսումնասիրման մեխանիզմների կոմբինացիա:

Որոշ երկրներում փոխհատուցման դեմ առաջարկված բողոքարկումներն ուսումնասիրվում են դատարանի կողմից, որն առնչվում է քաղաքացիական գործերի հետ: Դատավորը նշանակում է փորձագետներ, ովքեր գնահատում են ձեռքբերվող հողը, իսկ դատարանը հետո հաստատում է փորձագետների վճիռը: Այլ երկրներում գործող մոտեցում է հանդիսանում մասնագիտացված հանձնաժողովների ստեղծումը՝ բողոքարկումների ուսումնասիրման համար:

Որոշ հանձնաժողովներ ունեն մի շարք պատշաճ մասնագետներ (գնահատողներ, իրավաբաններ և այլք), ովքեր նշանակվում են ավագ պաշտոնյաների կամ դատավորների կողմից: Այլ հանձնաժողովներն ընդգրկում են ընտրյալ փորձագետներ, ում եզակի ֆունկցիան փոխհատուցման բանավեճերի վճռումն է: Մի 3-րդ մոտեցում էլ կա, որ գործածվում է այլ երկրներում: Յուրաքանչյուր բանավիճող կողմին գնահատող ընտրելու հնարավորություն է տրվում: Այնուհետև այս երկու գնահատողները համատեղ կերպով ընտրում են 3-րդ գնահատողին: Երեք գնահատողները միասին սահմանում են փոխհատուցման համապատասխան քանակը:

Ծախսերը նվազեցնելու և բողոքարկման գործընթացի մատչելիությունը բարելավելու նպատակով, օրենսդրությունը պետք է պահանջի ձեռք բերող գործակալությունից հիմնելու բանավեճի կամ խնդրի լուծման այլընտրանքային մեխանիզմներ: Նման մեխանիզմները պետք է լինեն ճկուն, ըմբռնելի, ոչ թանկ, համապատասխանաբար ոչ պաշտոնական և ֆիզիկապես ու տեխնիկապես մատչելի:

Երկրների մեծամասնությունն ունի այնպիսի օրենսդրական համակարգ, որը պաշտպանում է խմբերի իրավունքը բողոքարկումներն ավելի բարձր ատյանների հետագա ուսումնասիրմանը ներկայացնելու համար:

Պաշտպանություն և աջակցություն

Բոլոր տուժած սեփականատերերն ու ժամանակավոր շահագործողները կարող են լինել անբարենպաստ պայմաններում, երբ իրենց հողը հարկադիր կերպով ձեռք է բերվում, բայց ծանրությունը հատկապես ընկնում է աղքատների վրա: Հնարավոր է, որ նրանք չիմանան իրենց իրավունքները կամ, թե ինչպես իրենց ապահովագրեն հմուտ պաշտոնյաների հետ գործարքներում, ովքեր կառավարության բոլոր ուժերով ու ռեսուրսներով աջակցություն են ստանում: Բացի այդ, հաճախ ամենաաղքատների ու ամենախոցելիների հողերն են, որ նախագծերի համար հարկադիր կերպով ձեռք են բերվում: Նրանց հողի արժեքը սովորաբար ցածր է՝ այլոց հողերի հետ համեմատած, ինչն էլ նպաստում է նախագծի ամբողջական ծախսերի նվազեցմանը: Ի լրումն դրան, տեղական իշխանությունները կարող են հետաքրքրություն ունենալ ամենաաղքատ տարածքները վերազարգացնելու մեջ, որպեսզի մեծացնեն հարկման հիմքը: Նման վերզարգացումը սովորաբար պահանջում է բնակիչների տեղափոխություն:

Այն մարդկանց, որոնց հողը հարկադիր կերպով ձեռք է բերվում, հարկավոր է տալ օգնություն՝ հասկանալու գործընթացի յուրաքանչյուր ոլորտը: Նրանք կարող են ձեռք բերող գործակալության վճիռների և գործառնությունների արդարացիության մեջ համոզվելու կարիք ունենալ՝ ունենալով ալտերնատիվ կարծիք: Ձեռք բերելով երկրորդ կարծիքը, ասենք, իրենց հողի արժեքի վերաբերյալ՝ նրանք կարող են հավաստիանալ, որ փոխհատուցումը վճարվելու է ասենք արդարացի: Հաբիթաթի Ծրագիրը, վերահաստատված Մարդկային բնակավայրերի վերաբերյալ Ստամբուլյան Հռչակագրով (1996), հաստատում է, որ իշխանությունները պետք է ակտիվորեն ապահովեն պաշտպանություն տուժած անհատներին: Այն հաստատում է, որ իշխանությունները պետք է տուժած անհատների և խմբերի համար հասանելի դարձնեն արդյունավետ իրավաբանական և վարչական ուղիները: Ոխստի նրանք կարող են փոխհատուցում փնտրել այն որոշումներից և գործառնություններից, որոնք հասարակության և շրջապատի համար վնասակար են, կամ դրժում են մարդկային իրավունքները, հատկապես, եթե նրանք հասարակության այն անդամներն են կամ խմբերը, որոնք չունեն ռեսուրսներ և հմտություններ, որպեսզի հենց իրենք գործեն: Նման խմբերի համար շատ կարևոր են ազատ օրինական խորհրդատվության կենտրոնների ծառայություններից օգտվելու հնարավորությունները:

Օրենքները կարող են պահանջել, որ ձեռք բերող գործակալությունն ապահովի վնաս կրած մարդկանց գնահատողների և այլ մասնագետների ծառայություններից օգտվելու հնարավորության իրավունքը, հասկանալ իրականացվող գործընթացները և պատրաստել իրենց պատասխանները: Որպես այլընտրանք մարդկանց կարող է թույլատրվել վարձելու իրենց սեփական գնահատողներին և իրավաբաններին:

Ոչ կառավարական կամ հասարակական կազմակերպությունները (ՀԿ) կարող են ողջ գործընթացի ընթացքում այդ մարդկանց իրավունքների պաշտպանի դերը կատարել: Նրանք կարող են տեղեկացնել մարդկանց իրենց իրավունքների մասին, նրանց անունից պաշտպանել և սովորեցնել նրանց բանակցային

հմտություններ՝ վիճարկելու արդարացի փոխհատուցման համար: ՀԿ-ների դերը տուժած սեփականատերերին ու ժամանակավոր շահագործողներին աջակցելու հարցում կարող է անգնահատելի լինել:

Այնուամենայնիվ պետք է նշել, որ կառավարությունն ունի առաջնային պատասխանատվություն՝ համոզվելու համար, որ սեփականատերերն ու ժամանակավոր շահագործողները հարկադիր ձեռքբերման արդյունքում չեն տուժելու անարդարությունից: Ձեռքբերող գործակալությունը պետք է միջոցներ ձեռնարկի՝ երաշխավորելու համար, որ հարկադիր ձեռքբերման ընթացքում մարդիկ կունենան ձայն, ուժ և պատշաճ պաշտպանություն: Նման գործելակերպն արժեքավոր է կարճաժամկետ հատվածում: Երկարաժամկետ հատվածներում կարող են լինել ավելի արագ, ավելի արդյունավետ ձեռքբերման գործընթացներ, ավելի քիչ բողոքարկումներ և պետական աջակցությունից կախված՝ ավելի քիչ աղքատացած մարդիկ:

Expropropriation in the process of appealing against the necessity of appealing reasons to study the mechanisms of Appeal, defense and support.

The article refers to the actions of industry and application expropriation consequences expropriation discussed in public and social life of the role and importance of citizens' right to appeal expropriation of property, compensation, re-living their purpose and the restoration of the mechanisms used to

Գրականություն

1. Expropriation of multinational firms: the role of domestic market conditions and domestic rivalries Economic Inquiry, Oct, 1990 by Hamid Mohtadi.
2. Expropriation in the Restatement (Revised) Journal article by Davis R. Robinson, Malvina Halberstam, Lucio Garcվa Del Solar; American Journal of International Law, Vol. 78, 1984.
3. New Law of Expropriation. by: John A. Coates, Stephen F. Waque. Amazon Price. http://www.squidoo.com/expropriation
4. http://www.knowledgerush.com/kr/encyclopedia/Expropriation
5. ՀՀ օրենքը «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին»: Ընդունվել է 2006թ. նոյեմբերի 27-ին ՀՀ ԱԺ կողմից:
6. Schmidt-Abmann “Expropriation in the Federal Republic of Germany” in GM Erasmus Compensation for Expropriation-A Comparative Study Volume / (1990) Proceedings of the 1990 Conference of the United Kingdom National Committee of Comparative Law, University of Oxford 2-4 August 86:



Ասիստենտ՝
Վարազդատ Հովհաննիսյան

Մագիստրանտ՝
Աշխեն Հովհաննիսյան



ՀՏԴ 0.04 (ԵՃՇՊՀ, «Էկոնոմիկայի, իրավունքի և կառավարման» ամբիոն)

ԵՐԿՐԱՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻԿԻՐԱՌՈՒՄԸ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՈԼՈՐՏՈՒՄ

Հոդվածը նվիրված է անշարժ գույքի ոլորտում երկրատեղեկատվական համակարգերի կիրառման հարցերի ուսումնասիրությանը: Հոդվածում խոսվում է երկրատեղեկատվական համակարգերի զարգացման և անշարժ գույքի ոլորտում դրանց կիրառման անհրաժեշտության մասին: Նշվում է, որ լինելով նոր տեխնոլոգիա, այն հնարավորություն է ընձեռում լուծել բազմապիսի խնդիրներ և օգնում է կայացնել ճիշտ որոշումներ: Մասնավորապես հնարավորություն է ստեղծում իրականացնել անշարժ գույքի գնահատում, թույլ է տալիս կառուցել հողամասերի ընտրության մոդելներ, լուծել բազում այլ խնդիրներ: Նշվում է նաև այս տեղեկատվական ինստիտուտի անշարժ գույքի ոլորտում ակտիվ կերպով ներդրման և զարգացման խնդիրների մասին:

Վերջին երկու տասնամյակների ընթացքում տեղեկատվական տեխնոլոգիաները մեծ ազդեցություն են ունեցել գիտության բնագավառում: Մարդու կենսագործունեության բոլոր ոլորտներն անհնար է այսօր

պատկերացնել առանց տեղեկատվական տեխնոլոգիաների: Տեղեկատվական տեխնոլոգիաների առավել զարգացող ուղղություններից է համարվում երկրատեղեկատվական համակարգերի (ԵՏՀ) կիրառումը: «Երկրատեղեկատվական համակարգ» հասկացությունը ի հայտ է եկել XX դարի 60-ական թվականներին, երբ տեխնիկայի վերելքի և աշխարհագրական տեղեկատվության մեծ պահանջարկը ապահովեցին շրջադարձ կուտակված տեղեկատվության մշակման և մատուցման համար: Լինելով բավականին նոր տեխնոլոգիա՝ երկրատեղեկատվական համակարգը (այսուհետ՝ ԵՏՀ-ը) իր մեջ ներառում է մի շարք տեխնոլոգիաներ՝ թույլ տալով քարտեզագրել, մոդելավորել, վերլուծել մեծաքանակ տվյալներ և դրանք հավաքել տվյալների մեկ շտեմարանում:

Այս համակարգի զարգացումը հիմնվում է տարբեր գիտությունների, նորամուծությունների վրա՝ աշխարհագրություն, քարտեզագրություն, ֆոտոգրամետրիա, հեռակառավարվող տեղեկատվություն, տեղագրական գծաչափում, գեոդեզիա, քաղաքացիական նախագծում, վիճակագրություն, համակարգչային հմտություններ, գործընթացների հետազոտում, դեմոգրաֆիա և գիտության շատ այլ ճյուղեր, բնական գիտություններ: Համակարգի հիմքը հանդիսանում է տեղեկատվությունը :

Կապված ճշգրիտ տարածական տեղեկատվության հետ՝ իրական աշխարհի ապագայի և անցյալի մեծ թվով տարաբնույթ տվյալներ կարող են վերլուծվել, մեկնաբանվել և ապահովել դրանց հիման վրա որոշումներ կայացնելու գործընթացը : ԵՏՀ-ի այս հատկությունը իրական աշխարհի վարքի և միմյանց հետ կապ չունեցող ինֆորմացիայի տեսակների վերաբերյալ գիտական հետազոտությունների նոր ճանապարհներ է բացում : ԵՏՀ-ն ծրագրային-գործիքային համալիր է, որը լուծում է տարածքի օբյեկտների վերաբերյալ տեղեկատվության պահպանման, արտացոլման, նորացման և վերլուծության հետ կապված խնդիրների ամբողջությունը: ԵՏՀ հիմնական ֆունկցիաներից մեկը համակարգչային (էլեկտրոնային) քարտեզների, ատլասների և այլ քարտեզագրական ստեղծագործությունների ստեղծումն ու օգտագործումն է:

ԵՏՀ-ներն աշխատում են ցանկացած տվյալներով, որոնք հնարավոր է տեղադրել քարտեզի կամ սխեմայի վրա: Փաստորեն, իրականում, ԵՏՀ-ն ավանդական քարտեզների և տվյալների բազայի զուգակցումն է: Իսկ համակարգիչների օգտագործումը թույլատրում է նման զուգակցման սկզբունքորեն նոր որակներ ստանալ: ԵՏՀ-ն թույլ է տալիս ունենալ կառավարվող օբյեկտների նկարագրման ողջ ամբողջությունը, որն արդեն առկա է գործող տվյալների բազաներում և փաստաթղթերում, միևնույն ժամանակ էլ ցույց է տալիս այդ օբյեկտների տեղադրությունը տարածության մեջ, նրանց փոխազդեցությունը, ինչպես նաև այդ օբյեկտների վրա ազդող տարաբնույթ գործոնների ազդեցությունը: Ավանդական տվյալների բազաներին հասու չէ օբյեկտների մոտիկ գտնվելու կամ փոխադարձաբար ներազդելու հասկացությունները, մինչդեռ ԵՏՀ աշխատում է հենց նմանատիպ տեղեկատվությամբ: Եվ դա առավել ամբողջական է համապատասխանում մարդկանց այն պատկերացումներին, որոնք վերաբերվում են տարածությանը և նրանում առկա օբյեկտներին: Այն իր առավելագույն հնարավորությունները սկսում է դրսևորել, երբ գործարկվում են ԵՏՀ-ի վերլուծական ֆունկցիաները: Դրանցից կարևորագույնները համարվում են այն ֆունկցիաները, որոնք մոդելավորում են տարածության մեջ օբյեկտների վերաբերյալ մեր մտածողությունը: Հենց այդ ֆունկցիաներն էլ տարբերում են ԵՏՀ-ն այլ տեղեկատվական համակարգերից: Ընդ որում ԵՏՀ-ն այդ ֆունկցիաներն իրականացնում է ավելի արագ, ամբողջական և ճշգրիտ, քան՝ մարդիկ:

Վերլուծական աշխատանքում ԵՏՀ-ն համարվում է անշարժ գույքի շուկայի վիճակի մասին ինֆորմացիայի տեսանելիության ամենահասարակ և հարմար գործիքներից մեկը, որը օգնում է կատարել մոդելավորում : ArcGIS-ը (ԵՏՀ-ի ստեղծման ծրագրային ապահովման միջոց), հնարավորություն է տալիս պատկերավոր գնահատել շուկայի խտությունը, որոշել գրասենյակային կենտրոնների պարունակությունների գոտիները, ընդգծել ամենահետաքրքիր և հեռանկարային շրջանները քաղաքի քարտեզի վրա:
ԵՏՀ-ի օգտագործումը հնարավորություն է տալջս վերլուծողին իրականացնել.

- տվյալների արագ և որակյալ մշակում,
- քարտեզների վրա հիմնական տենդենցների արտացոլում,
- ընկերության մենեջերի համար որակյալ և տեսանելի տեղեկատվության ապահովում,
- ԵՏՀ-ի հնարավորությունների և ընկերության հավաքած վերլուծական տեղեկատվության համատեղում :

ԵՏՀ-ի կիրառումն ապահովում է վերլուծության և իրադրության կանխատեսման նոր որակական աստիճան, ինչը դրական է ազդում բիզնեսի զարգացման վրա :

«Անշարժ գույք» ԵՏՀ-ն իրենից ներկայացնում է գործունեության ավտոմատացման և անշարժ գույքի, հողատարածքների հաշվարկի համար տվյալների, տեղեկությունների հավաքածու:

Համակարգը ապահովում է հետևյալ խնդիրների լուծում՝

1 Ունեցվածքի և անշարժ գույքի գույքագրում,
2 Կառավարչական որոշումներ ընդունելու համար ինֆորմացիոն աջակցում,
3 Պետական և մունիցիպալ ծառայությունների աշխատանքների օպտիմալացում,
4 Պետական և կոմերցիոն կառույցների փոխազդեցության բարելավում:

Համակարգը թույլ է տալիս անշարժ գույքի օբյեկտները և էլեկտրոնային քարտեզներով հողատարածքները կապակցել միմյանց և լուծել հաշվարկային խնդիրներ:

Բոլոր անշարժ գույքի օբյեկտները խմբավորված են՝

1. հայտերի տեսակներով (առուծախ, փոխարինել, վարձակալել);
2. անշարժ գույքի տեսակով (բնակարաններ, առանձնատներ);
3. բաժիններով (ակտիվ նախաձեռնում, ժամանակավոր դադարեցում, հանված է գործարքի արխիվ):

Անշարժ գույքի օբյեկտի նկարագրման համար կարելի է օգտագործել ավելի քան 80 պարամետրեր:

Անշարժ գույքի ոլորտում ԵՏՀ-ի հիմնական ֆունկցիաններն են ՝

- անշարժ գույքի օբյեկտի հաշվառում;
- հողատարածքների հաշվառում;
- հաշվարկված օբյեկտների կապակցությունը էլեկտրոնային քարտեզի օբյեկտների հետ;
- հողատարածքի մասին տեղեկության օպերատիվ արտացոլում ու հայտնաբերումը, միաժամանակ նրա ցուցադրումով էլեկտրոնային քարտեզին;
- տան, բնակարանի նախագծի, նկարների նախանմուշների հայտնաբերման և օպերատիվ արտացոլման, ինչպես նաև տան ցուցադրում էլեկտրոնային քարտեզի վրա;
- հայտերի ստեղծում և նախագծում պահված ցուցանիշ- տվյալների հիման վրա:
- տեղեկագրքերի և խմբագրքերի վարում;
- որոնային հարցումների ձևավորում և կատարում;
- էլեկտրոնային քարտեզից անշարժ գույքի օբյեկտի մետրային բնութագրերի ստացում (երկարություն, լայնություն, մակերես, պարագիծ, կոորդինատներ, անկյուն և այլն):

Անշարժ գույքի ոլորտում այլև չեն խնդրում հետազոտող կազմակերպություններին կատարել դեմոգրաֆիական ուսումնասիրություններ : Այժմ մոդելներն աշխատում են առանձնացնել շահեկան հողամասերը և անշարժ գույքի մասնագետները պարզում են՝ արդյո՞ք հնարավոր է սեփականություն ձեռք բերել այդտեղ: Արդյունքում՝ ձեռքբերման ավելի բարձր գին, բայց կրճատված ռիսկ և ավելի շատ հաջողություն:

Անշարժ գույքում ԵՏՀ-ի համար ամենակարևոր և ավանդական բնագավառը հողամասի ընտրությունն է: Բայց անշարժ գույքի կազմակերպությունները այս տեխնոլոգիան օգտագործում են ոչ միայն դրա համար: Հանրային գործակալությունները ԵՏՀ-ն օգտագործում են հողամասերի կառավարման, գնահատման և այլնի համար: Այսպիսով՝ ԵՏՀ-ն ապահովում է աշխատանքի նախօրոք կազմակերպում, ժամանակի և ջանքերի խնայում:

Շատ ընկերություններ դեռ պատրաստ չեն կամ չեն ցանկանում սկսել լրիվ կազմավորված հողամասի ընտրության մոդելը, բայց պատրաստակամորեն ընդունում են, որ դրա կարիքն ունեն: Օգտվելով «մոտավոր վերլուծություն» հասկացությունից ընկերությունները կարող են որոշում ընդունել՝ ավելի լավ տեղեկացված լինելով, առանց ներգրավվելու թանկարժեք ծրագրերի մեջ: Մոտավոր վերլուծության հիմնական կոնցեպտը պարզ է. շուկայի ներսում յուրաքանչյուր հատման կետ հարաբերական է մյուս հատման կետին՝ հիմնված նրանց նմանությանը (մերձավորությանը) հիմնական թիրախին: Նմանությանը (մերձավորությանը) էական տարածություն է, որը չափվում է կամ ճանապարհային ցանցի միջոցով, կամ ուղիղ գծով: Գնահատումը հետագայում կարող է չափվել՝ հաշվի առնելով հաճախորդների տարբեր սեգմենտները կամ մրցակցության նմանությունը:

«Մոտավոր վերլուծությունը» բիզնեսի հանրության համար կարևոր մեկ քայլ առաջ է դեպի ավելի ճշգրիտ վերլուծություն: Տարիներ շարունակ գոյություն են ունեցել հողատարածքների ընտրության հետազոտություններ հզոր մոդելներ: Բայց միայն հիմա ԵՏՀ-ի օգնությամբ կարելի է դրանք օգտագործել և աշխատեցնել նվազագույն ծախսերով: Հողատարածքի ընտրության կարևոր մոդելները իրենց մեջ ներառում են հետևյալները.

<u>Վաճառքի տարածքի վերլուծություն</u> : Այս մեթոդում գնահատում են նպատակակետ հանդիսացող հողամասի շուրջը գտնվող դեմոգրաֆիկ և մրցակցային իրավիճակը, այսինքն՝ պատասխանում են հետևյալ հարցին՝ «Որքա՞ն է բնակչությունը և շահույթը յուրաքանչյուր կետում x մղոն շառավղով»:

<u>Ձգտման մոդելը</u> : Վերլուծություն, որը որոշում է՝ ինչպես սպառողները կձգտեն մի արտադրանքից կամ ծառայությունից դեպի մյուսը, մի մատակարարից՝ մյուսը: Այս մոդելը Վիլյամ Ռեյլը 1929թ-ին ստեղծել է, որպեսզի օգտագործեն նկարագրելու համար գերակշռող ազդեցություն ունեցող տարածքների հավասարեցման կոնցեպտները (գաղափարները), ինչպես նաև ծառայության գոտիները:

<u>Նմանության մոդել</u>: Նոր հողատարածքների գնահատումն է, առանձնացնելով գոյություն ունեցող հողատարածքները, որոնց առևտրական տարածքները և ընդհանուր հատկանիշները համընկնում են կամ նման են այն հատկանիշներին, որոնք ակնկալվում են նոր տեղանքից: Այս մոդելները հավանաբար ամենահեշտն են հասկանալու համար, որովհետև նրանք գնահատում են պոտենցիալ նոր հողամասը այն չափանիշներով, որոնցով արդեն գնահատվել են նման, բայց հաստատված հողամասերը:

<u>Վերադարձ նախկին վիճակին</u>: Վիճակագրական վերլուծության կիրառումն է, դուրս բերելու գծային կամ ոչ գծային հարաբերությունները հողատարածքի հատկանիշների (օր.՝ քառակուսի մղոնը, աշխատողները և այլն) և հողատարածքի գործողության միջև (օր.՝ ծավալը, եկամուտը, շահույթը և այլն): Այս մոդելը հաճախ

կիրառվում է առանց լավ զարգացած աշխարհագրական տարողության, բայց մեծապես օգտվում են քարտեզների շղթաներից և տարածական վերլուծությունից:
Տարածական փոխազդեցություն: Գնահատել հողամասի առավելությունները, իրավիճակը՝ դիտարկելով հաճախորդի տեսանկյունից, այսինքն՝ շուկայում տրված տարբեր մրցունակ ընտրություններից: Այս մոդելը հաճախ կոչվում է Հաֆի մոդել:
Այս բոլոր մոդելները տարբերվում են իրենց ծախսերով, փորձվածությամբ և ճշգրտությամբ, բայց նրանք բոլորն էլ ապահովում են մեկ կարևոր ընդհանուր շահ, նրանք առաջարկում են մեծ տեղեկատվություն և կրճատված ռիսկեր այն ընկերություններին, որոնք ընդարձակում են իրենց դիրքը անշարժ գույքի շուկայում:

The usage of Geographical Information System (GIS) in the sphere of real estate


The article is devoted to research of the GIS usage in the sphere of Real Estate. It deals with GIS usage in the Real Estate and its development. It says that being a new technology it gives the opportunity to do effective Real Estate valuation, allows to choose the right site selection models and solve multiple problems. Is speaks also about the active implementation of this information institute in the field of Real Estate and the problems of its future development.

Գրականություն

Глебова Н. ГИС для управления городами и территориями // ArcReview, 2006. - № 3(38).
Дьяченко Н.В. Использование ГИС-технологий в решении задач управления. - http: // www. nocnit. ru/2st/materials/Diachenko. html
Дьяченко Н.В. Опыт разработки информационно-аналитических систем поддержки принятия управленческих решений –
http: // www. nocnit. ru/2st/materials/Diachenko. html
Еремченко Е. Новый подход к созданию ГИС для небольших муниципальных образований // ArcReview, 2005. - №2(32).
Красовская О., Скатерщиков С., Тясто С., Хмелефа Д. ГИС в системе территориального планирования и управления территорией // ArcReview, 2003. - №3 (38).
Томилин В.В., Нориевская Г.М. Использование ГИС в муниципальном управлении // Практика муниципального управления, 2007. - №7.



Տնտ.թ. դոցենտ՝
Արա Հովհաննիսյան



Մագիստրանտ՝
Նազիկ Կարապետյան

ՀՏԴ՝ 339.727.22 (ԵՃՇՊՀ, «Էկոնոմիկայի, իրավունքի և կառավարման» ամբիոն)

ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Զարգացող երկրների համար օտարերկրյա ներդրումների ներգրավումը համարվում է տնտեսության զարգացման կարևոր բաղադրիչներից մեկը:
Հոդվածում ներկայացված է օտարերկրյա ներդրումների ներգրավման քաղաքականությունը մի քանի զարգացող և զարգացած տնտեսություն ունեցող երկրների օրինակով: Ուսումնասիրվել են նաև օտարերկրա ներդրումների հետ կապված օրենսդրական և իրավական ակտերը:

Օտարերկրյա ուղղակի ներդրումների ազդեցությունը զարգացող և զարգացած երկրների տնտեսության վրա նույնը չէ: Զարգացած երկրներում նրանց ազդեցությունն այդքան էլ մեծ չէ, քանի որ դրանց դիմակայում է հզոր ազգային կապիտալը, իսկ զարգացող երկրներում այն հաճախ բացակայում է: Գլխավորապես այս

տարբերությունն է բացատրում օտարերկրյա ուղղակի ներդրումների հետ կապված իրավական կարգավորման տարբեր մոտեցումները:

Արևմտյան երկրների մեծամասնության մոտ (ԱՄՆ, Բելգիա, Շվեյցարիա, Անգլիա և այլն) բացակայում են ներդրումների մասին հատուկ օրենքներ. օտարերկրյա ուղղակի ներդրումների, ինչպես նաև ազգային ներդրումների գործընթացի իրավական կարգավորումն իրականացվում է՝ հիմնվելով ընդհանուր իրավական նորմատիվ ակտերի վրա:

Զարգացած երկրներից շատերում գոյություն չունեն օտարերկրյա կապիտալի ներհոսքն արգելող օրենքներ: Սակայն գոյություն ունեն օտարերկրա ուղղակի ներդրումների հոսքերը և նրանց տեղաբաշխումը կարգավորող օրենսդրություն և իրավական ակտեր: Այդպիսի օրենսդրութան և իրավական ակտերի բնութագրիչ կողմն այն է, որ նրանք չեն պարունակում ուղղակի սահմանափակումներ և միևնույն ժամանակ երկրի կառավարությանը հնարավորություն են տալիս իրականացնել ներդրումների բաշխման վերահսկողությունը: Ներդրումային գործընթացը կարգավորող մեխանիզմների մեջ կարելի է առանձնացնել.

1. հատուկ օրենքներ, որոնց միջոցով ներդրումն ընդունող երկրի իշխանությունները և տեղական գործընկերները իրավասու են հսկել օտարերկրյա ուղղակի ներդրումների մուտքի կարգը և դրանց իրականացումը
2. արտարժութային վերահսկողությունը
3. հարկման ճկուն համակարգը
4. հաշվետվությունների կարգը և կանոնները
5. օտարերկրյա ուղղակի ներդրումների իրավական պաշտպանվածությունը և վեճերի լուծման կարգը:

Ներդրումներն ընդունող (ռեցիպիենտ) երկրներում օտարերկրյա ուղղակի ներդրումները կարգավորող հիմնական մեթոդները հետևյալներն են՝

- արտարժութային օրենսդրության մեջ սահմանվում են շահույթ և հիմնական կապիտալի արտահանման համար որոշակի սահմանափակումներ (կամ արգելքներ): Այսպիսով ռեցիպիենտ երկրի կառավարությունը կարող է ներազդել օտարերկրյա ներդրումների հոսքի վրա:
- թույլատրվում է ՕՈՒՆ-ներից ստացված շահույթի և կապիտալի ազատ տեղաշարժը, սահմանվում են արտոնություններ այն ներդրողների համար, որոնք տեղաբաշխում են իրենց կապիտալը երկրի՝ տնտեսապես թույլ զարգացած շրջաններում և ստեղծում «նոր» արտադրական հզորություններ, ինչը ռեցիպիենտ երկրին տալիս է հնարավորություն ազդել օտարերկրյա ուղղակի ներդրումների ուղղվածության վրա
- հարկային լծակների օգնությամբ ռեցիպիենտ երկիրը ներազդում է իրականացվող օտարերկրյա ուղղակի ներդրումների իրավական կառուցվածքի վրա: Օրինակ՝ օտարերկրյա ներդրողները, հիմնվելով հարկման համար օգտագործվող տարբեր ձևերի վրա, որոշում են ստեղծել համատեղ ձեռնարկություն, հոլդինգային ընկերություն կամ դուստր ձեռնարկություն:

Տարբեր երկրներ, ելնելով տնտեսական և քաղաքական իրավիճակից, օտարերկրյա ուղղակի ներդրումների կարգավորման նկատմամբ դրսևորում են տարբեր մոտեցումներ: Օրինակ՝ Ֆրանսիայի կառավարությունը խիստ է վերաբերվում երկրի ներսում օտարերկրյա ուղղակի ներդրումների իրականացմանը, Գերմանիայի կառավարությունը՝ ընդհակառակը: Եվրոպական երկրներից միայն Հունաստանը, Իտալիան, Պորտուգալիան, Իսպանիան և Թուրքիան ունեն օտարերկրյա ներդրումները կարգավորող օրենսդրություն: Նշված երկրներում օրենսդրությամբ սահմանված կարգով ոչ ռեզիդենտ ներդրողներն անպայման պետք է ստանան թույլատվություն տեղական իշխանություններից ներդրումներ իրականացնելու համար այն ժամանակ, երբ Գերմանիայում, Բելգիայում, Շվեդիայում, Մեծ Բրիտանիայում ոչ մի հատուկ թույլատվություն հարկավոր չէ: Այս երկրներում օտարերկրյա կապիտալի թույլատրելի չափ չի սահմանվում: Սակայն օրինակ, Շվեդիայում բնական ռեսուրսների արդյունահանմամբ զբաղվող ձեռնարկություններում կապիտալի 60 տոկոսը և ձայների 80 տոկոսը պետք է պատկանի ազգությամբ շվեդներին: Ֆինլանդիայի կառավարությունը մոտավորապես նույն պահանջն է ներկայացնում օտարերկրյա ուղղակի ներդրումներ իրականացնելու համա: Ֆրանսիայում, կառավարության կողմից ընդունված ակտերը թույլ չեն տալիս, որ նավթի արդյունահանումն ու վերամշակումն իրակացնող ընկերություններում կառավարող դիրքերում լինեն այլ երկրի քաղաքացիներ: Մեծ Բրիտանիան, ընդհակառակը, ամեն կերպ փորձում է ներազդել օտարերկրյա ուղղակի ներդրումների ներհոսքի ավելացման վրա, ինչն ուղեկցվում է արտասահմանյան առաջավոր տեխնոլոգիաների ներմուծմամբ, և անգլիական արդյունաբերությունում նոր աշխատատեղերի ստեղծմամբ: Տնտեսագետների գնահատականներով բրիտանական արտադրության 20-25 % գտնվում է օտարերկրյա ներդրողների հսկողության տակ[2]: Սակայն գոյություն ունեն նաև սահմանափակումներ. եթե օտարերկրա ուղղակի ներդրումներով ընկերությունը ստեղծված է արտասահմանում արտադրված ապրանքների ներմուծման և բրիտանական շուկայում իրացման նպատակով, ապա նրանք պետք է ֆինանսավորվեն միայն օտարերկրյա միջոցների, այլ ոչ թե Բրիտանիայում ստացած փոխառությունների հաշվին:

[2] Вознесенская Н., “Иностранные инвестициии: Россия и мировой опыт (сравнительно-правовой коментарий)”, “ИНФРА.М” Москва, 2001.

Որքան մեծանում է երկրի նկատմամբ հետաքրքրությունը, այնքան նրա օրենսդրությունը դառնում է ավելի լոյալ: Սահմանվում են ավելի քիչ թվով սահմանափակումներ, առաջ են գալիս օրենքներով և իրավական այլ ակտերով ամրագրված երաշխիքներ և արտոնություններ:

Զարգացած երկրները ձգտում են խուսափել տնտեսության վրա օտարերկրյա ուղղակի ներդրումների չափից դուրս մեծ ազդեցությունից և առավել ևս տնտեսության որևէ ճյուղի օտարերկրյա ուղղակի ներդրումների կախվածությունից:

Զարգացող երկրների տնտեսությունը հաճախ հանդիսանում է օտարերկրյա ուղղակի ներդրումների իրականացման օբյեկտ: Նրանց գերակշիռ մասը կապիտալ ներմուծողներ են (երկիր-ռեցիպիենտներ): Զարգացող երկրների համար օտարերկրյա կապիտալը հանդիսանում է տնտեսության զարգացման միջոց: Հարկավոր է նշել, որ զարգացող երկրների մեծամասնությունը օտարերկրյա ներդրումների կարգավորման հարցը կապում է տնտեսական ընդհանուր քաղաքականության իրականացման հետ:

Որոշ երկրներում ներդրումների մասին օրենքները կարգավորում են և՛ ազգային, և՛ օտարերկրյա ներդրումները, մյուսներում գործում են հստակ տարանջատում: Օրենքներում շեշտվում է ազգային և օտարերկրյա ներդրումների իրավական տեսանկյունից հավասարության սկզբունքը՝ առաջարկելով արտասահմանյան ընկերությունների առավել բարենպաստ պայմաններ և ազգային ռեժիմ: Համաշխարհային փորձը ցույց է տալիս, որ ՕՈՒՆ-ների մասին օրենքներից շատերում, դասակարգելով տնտեսության ճյուղերը, առանձնացնում են առավել կարևորները՝ համախմբելով «ներդրումների համար առաջնային դիտվող» խմբի մեջ[3]: Եթե օտարերկրյա ներդրողը ներդրել է իր միջոցներն այդպիսի ճյուղում, ապա կարող է հույսեր կապել արտոնյալ կարգավիճակ ստանալու համար:

Հաճախ արտոնյալ կարգավիճակ տրամադրվում է այն օտարերկրա ուղղակի ներդրումներին, որոնք պարունակում են նաև սոցիալական օգուտ: Օրինակ՝ բնակչության զբաղվածության մակարդակի բարձրացում:

Օտարերկրյա ներդրումների պետական կարգավորման լծակները պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի[4].

1. օտարերկրյա ներդրումների վրա ուղղակի ազդեցություն ունեցող լծակներ
2. օտարերկրյա ներդրումների վրա անուղղակի ազդեցություն ունեցող լծակներ:

Ուղղակի է համարվում օրենքների և օրենսդրական ակտերի միջոցով իրականացվող կարգավորումը: Այս խմբի լծակներից կարելի է նշել արտասահմանյան ներդրումներով ընկերությունների գործունեության տեսակների թույլատվությունը, լիցենզավորումը և գրանցումը, առանձին ընկերություններում և տնտեսության ճյուղերում օտարերկրյա ներդրումների չափի սահմանափակումը և այլն: Միևնույն ժամանակ ուղղակի սահմանափակումները կարող են լինել բացարձակ և հարաբերական: Բացարձակ սահմանափակում է համարվում որևէ ընկերության մեջ կամ ճյուղում արտասահմանյան կապիտալի արգելումը և կամ առավելագույն չափի որոշումը (հիմնադիր կապիտալում օտարերկրյա կապիտալի տոկոսային սահմանափակումներ): Որպես հարաբերական սահմանափակումների օրինակ կարող են ծառայել տեղական աշխատուժի վարձակալման նկատմամբ պահանջները և այլն:

Արտասահմանյան ներդրողներին գրանցում տալով՝ երկրի պետական մարմիններն առաջնորդվում են համապատասխան չափանիշներով, որոնք ակնհայտորեն ազդելու են ազգային տնտեսության և առանձին ճյուղերի զարգացման վրա: Օրինակ, Մեքսիկայում (Օտարերկրյա ներդրումների մասին օրենք 1993թ.) առանձնացված է չորս չափանիշ, որոնց առկայության դեպքում թույլատրվում է օտարերկրյա ներդրումների իրականացումը.

- երկրում տեխնոլոգիաների զարգացմանն ուղղված արտասահմանյան ներդրումներ;
- միջազգային շուկայում Մեքսիկայի մրցունակության բարձրացմանն ուղղված արտասահմանյան ներդրումներ;
- արտասահմանյան ներդրումների համապատասխանեցումը շրջակա միջավայրի պահպանման օրենսդրական դաշտին;
- բնակչության զբաղվածության վրա ազդող արտասահմանյան ներդրումներ;
- Խթանման քաղաքականության գլխավոր նպատակն է ազդել ներդրումային հոսքերի ուղղության, ծավալների և որակի վրա: Երկիր-ռեցիպիենտի կառավարությունը կարող է արտոնություններ սահմանել այն արտասահմանյան ընկերությունների համար, որոնց կողմից իրականացվող ներդրումներն ազդում են՝
- բնակչության զբաղվածության բարձրացման վրա;
- ներքին փոքր և միջին գործարարության ակտիվացման վրա;
- գիտահետազոտական աշխատանքների իրականացման և արտադրությունում նորամուծությունների օգտագործման վրա;
- արտահանման ավելացման և ներմուծումը փոխարինող արտադրության կազմակերպման վրա:

[3] Кирин А.В., Бакатин Д.В., Хорошилона А.В., “Регулирование иностранных инвестиций в экономически развитых сранах”, МГУ, Москва, 2001, стр. 21.
[4] Костюнина Г.М., Ливенцев Н.Н., “Международная практика регулирования иностранных инвестиций (учебное пособие)”, МГИМО, Москва, 2001, стр. 30.

1990-ական թվականների կեսերից սկսած միջազգային պրակտիկայում դիտվում է կապիտալ ընդունող երկրների կողմից ներդրումների ներգրավման քաղաքականության ակտիվացում՝ ըստ հետևյալ ուղղությունների՝

1) Երկրի ներդրումային «իմիջի» բարձրացումը իրականացվում է գովազդային նյութերի, հոլովակների տարածման միջոցով, որոնք բնութագրում են տվյալ երկիրը և նրա պոտենցիալ հնարավորությունները: Այս քաղաքականությունը բավականին ծախսատար է:

2) Երկրի պետական մարմինների կողմից պոտենցիալ արտասահմանյան ներդրողներին խորհրդատվական օգնության, համալիր ծառայությունների տրամադրում: Սա ծառայությունների փաթեթ է, որը հեշտացնում է ընկերության պետական գրանցմանը խոչընդոտող տարբեր փուլերը:

3) Ֆինանսական արտոնությունների տրամադրում: Սա ավելի տարածված է զարգացած երկրներում: Սուբսիդիաների, արտոնյալ վարկերի տրամադրումն իրականացվում է մարզային կտրվածքով՝ ցանկանալով զարգացնել որևէ կոնկրետ տարածքի կամ ճյուղի գործունեությունը:

ՀՀ ներդրումային քաղաքականությունը հանդիսանում է ՀՀ կառավարության գործունեության կարևորագույն ուղղություններից: Այն ձևավորվել է ազատական սկզբունքների վրա և նպատակաուղղված է Հայաստանի ինտեգրմանը համաշխարհային տնտեսության մեջ, ուղղված է երկրի տեղային (մրցակցային) առավելությունների բացահայտմանը, նոր ներդրումների ներգրավմանը, որի միջոցով էլ հնարավոր կլինի լուծել այնպիսի սոցիալ-տնտեսական խնդիրներ, ինչպիսիք են նոր աշխատատեղերի ստեղծումը, նոր տեխնիկայի ներգրավումը, նոր շուկաներ մուտք գործելու հնարավորությունը և այլն:

«Օտարերկրյա ներդրողների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածում ամրագրված է, որ Հայաստանում ներդրումների և դրանց հետ կապված իրավական ռեժիմը չի կարող նվազ բարենպաստ լինել, քան Հայաստանի քաղաքացիների և իրավաբանական անձանց համար: Այսինքն օտարերկրյա ներդրողներին տրամադրվում է «ազգային ռեժիմ»: Նույն հոդվածով նախատեսված է ներդրումների խրախուսման նպատակով սահմանել լրացուցիչ արտոնություններ, եթե նրանք ուղղված են սոցիալական և տնտեսական զարգացման խնդիրների լուծմանը: Մյուս երաշխիքը, որը տրամադրում է օրենքը, «կայունության երաշխիքն է». օրենսդրության փոփոխության դեպքում ներդրման պահից սկսած 5 տարվա ընթացքում օտարերկրյա ներդրողների ցանկությամբ կիրառվելու է ներդրումն իրականացման պահին գործող օրենսդրությունը:

Օրենքը պաշտպանում է օտարերկրյա ներդրումներն ազգայնացումից[5]: Պետական մարմինները չեն կարող բռնագրավել օտարերկրյա ներդրումները, առգրավումը թույլատրվում է միայն դատական վճռով և պետության կողմից լրիվ փոխհատուցմամբ:

«Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենքի հոդված 1-ում նշված է՝ «Օտարերկրյա ներդրում» է համարվում գույքի ցանկացած տեսակ, այդ թվում ֆինանսական միջոցներ և մտավոր արժեքներ, որն օտարերկրյա ներդրողի կողմից անմիջականորեն ներդրվում է Հայաստանի Հանրապետության տարածքում իրականացվող ձեռնարկատիրական կամ այլ գործունեության ոլորտում՝ շահույթի եկամտի ստացման կամ այլ օգտակար արդյունքի հասնելու նպատակով:

Անհրաժեշտ է, որ կառավարության կողմից մշակվեն ծրագրեր գերակա ճյուղեր ընտրելու և այդ ճյուղերում օտարերկրյա ուղղակի ներդրումներ ներգրավելու համար, ինչը կարելի է իրականացնել ՀՀ կառավարության համապատասխան որոշումների միջոցով:

Բացի ճյուղային գերակայությունը որոշելուց անհրաժեշտ է ուշադրություն դարձնել նաև մարզային գերակայության վրա և արտոնությունների մեխանիզմը կիրառել մարզերում օտարերկրյա ուղղակի ներդրումների իրականացման ժամանակ, ինչը հնարավորություն կտա ազդել մարզերի սոցիալ-տնտեսական զարգացմանը:

Հայտնի է, որ Հայաստանի Հանրապետության ներդրումների ծավալի զգալի մասը կազմում են սփյուռքահայության կողմից իրականացվող ներդրումները, որոնց նպատակները հետևյալներն են՝

- հայրենիքում ունենալ տուն,
- ներդրումներից ստանալ շահույթ:

Հայաստանի Հանրապետությունը, մնացած երկրների համեմատ, օտարերկրյա ներդրումների ներգրավման առումով ունի մեծ առավելություն՝ մեծ սփյուռք: Այս հանգամանքը հնարավորություն է տալիս գրագետ ռազմավարության պայմաններում ներգրավել ոչ միայն դրամական հոսքեր, նաև հայրենիք վերադարձնել հազարավոր որակավորված մասնագետների, որոնց ունեցած գիտելիքների շնորհիվ կարելի է ՀՀ-ում կիրառել զարգացած երկրների փորձը:

INVOLVMENT STRATEGY OF FOREIGN INVESTMENTS

Involvement of foreign Investments for developing countries is considered to be one of the most significant components of economical growth.

The article includes the strategy of involving the foreign Investments with the example of several countries with

[5] «Օտարերկրյա ներդրումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենք, հոդված 8:

developing and developed economy.
Here have been investigated as well the legislative and legal acts connected with foreign investments.

Գրականություն

1. Քաղաքաշինության գործունեության իրավական կարգավորումը ՀՀ-ում: Ուսումնական ձեռնարկ /Կ. Է. Խաչատուրյան, Ա. Ռ. Ադամյան, Ս. Ա. Բադեյան/: ԵՐԵՎՊՀ հրատ., 2009թ
2. «Օտարերկրյա ներդրումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենք, հոդված:
3. Вознесенская Н., “Иностранные инвестиции: Россия и мировой опыт (сравнительно-правовой коментарий)”, “ИНФРА.М” Москва, 2001
4. Кирин А.В., Бакатин Д.В., Хорошилона А.В., “Регулирование иностранных инвестиций в экономически развитых сранах”, МГУ, Москва, 2001, cm. 21.
5. Костюнина Г.М., Ливенцев Н.Н., “Международная практика регулирования иностранных инвестиций (учебное пособие)”, МГИМО, Москва, 2001, cm. 30.



Տ.գ.թ., դոցենտ՝
Սարգիս Ստեփանյան

Մագիստրանտ՝
Հարությունյան Կարեն



ՀՏԴ 504.062 (ԵՃՇՊՀ, «Էկոնոմիկայի, իրավունքի և կառավարման» ամբիոն)

ԲՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ, ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ ԵՎ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ

Տվյալ հոդվածում խոսվում է «կանաչ տանիքների», նրանց շինարարության, աղտոտված մթնոլորտի դեմ պայքարի, արդյունավետության, գեղագիտական հաճույքի մասին:

Երևանի կլիման խիստ կոնտինենտալ է, աչքի է ընկնում ուժեղ չորային, շոգամառային և բավականին հաճախակի կրկնվող ցուրտ ձմեռային եղանակներով: Քաղաքի հնաբնակները շրջակա միջավայրի կյանքի պայմանները մեղմելու նպատակով իրենց տներին կից հողատարացքներում կանաչ, բարեբեր և հանգստի համար նպաստավոր պայմաններ ապահովող, գեղեցիկ պարտեզներ էին ստեղծել: Սակայն լայնածավալ շինարարության հետևանքով ոչնչացվում են բազմաթիվ ծառատեսակներ և բուսատեսակներ: Այդ կառույցներում բավականին մեծ բետոնապատելու հետևանքով խախտվեցին մնացած բույսերի գոյատևման պայմանները. տեղի ունեցան ծառերի և թփերի անկումներ:

Քաղաքի «կանաչ տարածքների» մեծ կորուստներ տեղի ունեցան հատկապես կենտրոնական մասում ծավալված շենքերի աննախադեպ խիտ տեղաբաշխման հետևանքով, որտեղ անտեսվեցին կանաչ տարածքները: Վերջին տարիներին մայրաքաղաքում և մերձակա տարածքներում ավտոտրանսպորտի արտանետումների հետևանքով մեծ չափերի է հասել շրջակա միջավայրի աղտոտվածությունը:

Շրջակա միջավայրի հասցված վնասների հետևանքով մեծ կորուստ է կրում նաև ֆաունան. քաղաքի կանաչ տարածքների կրճատման հետևանքով միջավայրից անհետանում են բազմաթիվ թռչյուններ և կենդանիներ:

Նման էկոլոգիական աղետների ժամանակ գլուխ են բարձրանում մի շարք հիվանդություններ. շինարարական փոշուց՝ ալերգիկ հիվանդություններ, բրոնխյալ աստման, կլիմայի անապատացման պայմաններում թթվածնի պակասից՝ սրտային հիվանդություններ, կատվածի շատացում և հիպերտոնիկ արյան ճնշման բարձրացում:

Նման էկոլոգիական աղետներից խուսափելու համար զարգացած երկրներում վերջին ժամանակներում շինարարական շուկա ներմուծվեցին «կանաչ տանիքները»: Շատ ճարտարապետներ սկսեցին իրենց հաճախորդներին առաջարկել տանիքները նմանեցնել կանաչ այգու՝ խոտով, ծաղիկներով և նույնիսկ ծառով: «Կանաչ տանիքները» դժվար է համարել ժամանակակից, քանի որ շատ երկրներում հարյուրավոր, եթե ոչ հազարավոր տարիներ դրանք եղել են ստանդարտ սարքավորումներ՝ շնորհիվ հոյակապ ջերմամեկուսացնող որակով բուսաշերտերի: Նրանք սովորաբար օգտագործել են ծայրահեղ ջերմաստիճան ունեցող երկրներում. սկանդինավյան երկրներում օգտագործվել են ցրտից պաշտպանվելու համար, իսկ Աֆրիկայում՝ ջերմությունից: Սակայն նախկինում «կանաչ տանիքները» ծածկված են եղել տորֆով՝ իբրև գերազանց ջերմամեկուսիչ:

1867թ. հրատարակած «Naturdächer von vulkanischem Cement» հոդվածի մեջ Կառլ Ռաբիտցը գրել է. «Գորշ տանիքների փոխարեն, որը դարձել է թափառող կատուների և ճնճղուկների «բնակության» վայր, պետք է ստեղծել կանաչ տարածքներ, որը էսթետիկական հաճույք կպատճառի տեղի բնակչությանը»: 19-րդ դարի 60-ական թվականների սկզբներին Կառլ Ռաբիտցը իր տան տանիքին կառուցում է կանաչ այգի, որտեղ կար ոչ միայն բանջարեղեն, այլև ծաղիկներ: Կառլ Ռաբիտցը բավականին հայտնի շինարար էր և գյուտարար: Առաջին հերթին, նա պատմության մեջ մնաց որպես հարթ տանիքների շինարարության ջատագով սակայն ոչ թե հասարակ հարթ տանիքների այլ «կանաչապատ տանիքների»:


Մինչև 20-րդ դարի կեսերը «կանաչ տանիքները» դիտվում էին որպես տեղական շինարարության պրակտիկա: Սակայն 1960-ական թվականներին էկոլոգիական պայմանների վատթարացման, ինչպես նաև խոշոր քաղաքներում՝առաջին հերթին Հյուսիսային Եվրոպայում, կանաչապատվող հրապարակների արագ կրճատման մտահոգությունը առաջացրեց հետաքրքրություն «կանաչ տանիքների» նկատմամբ:

LEED-ը (Leadership in Energy and Environmental Design), (Առաջնորդություն էներգիայի և շրջակա միջավայրի դիզայնի ոլորտում) կանաչ շինությունների հավաստագրման համակարգ է, որի հիմնական նպատակն ու գործառույթն է կապալառուներին, ճարտարապետներին, նախագծերի սեփականատերերին, կառուցապատողներին ու շինարարական ոլորտի այլ ներկայացուցիչներին տրամադրել միջոցներ՝ ճանաչելու էկոլոգիական շինարարության չափանիշները և իրագործելու իսկական, կանաչ նախագծեր: Այն ստեղծվել է ԱՄՆ-ի Կանաչ շինությունների խորհրդի կողմից (Green Building Council) և սկսել է զարգանալ 1994 թվականից:

Վերջին 15 տարիների ընթացքում անցկացվել են մի շարք տեխնիկական հետազոտություններ. ուսումնասիրվել են հակաարմատային բաղադրամասերը, մեմբրանները, դրենաժների մեխանիզմները, թեթև բուսաշերտը, ինչպես նաև բույսերի աճեցումը: Ապացուցված է, որ ճիշտ նախագծված և մոնտաժված «կանաչ տանիքը» ընդունակ է փոխարինել կամ փոխհատուցել հողի մակարդակի այն կանաչ միջավայրը, որը կորցնում է խոշոր քաղաքը ուրբանիզացիայի արդյունքում: «Կանաչ տանիքների» օգտագործումը քաղաքին տալիս է և այլ առավելություններ՝ էկոլոգիական, սոցիալական, էկոնոմիկական և էսթետիկական.

- քաղաքային թաղամասերի ջերմաստիճանի նվազում («քաղաքային թեժ շոգ» տպավորության պակասեցում),
- քաղաքի մաքուր օդի ավելացում (նվազեցնում է ածխաթթու գազերի և փոշու կուտակումը),
- միջատների գոյացման միջավայրի ընդլայնումը, մասնավորապես տեղական բազմատեսակ միջավայրերի և թռչունների,
- պակասեցումը տեղատարափ ջրահոսքի ընդհանուր ծավալի՝ շնորհիվ կանաչ տանիքների ջուրը պահելու և պահպանելու ընդունակության,
- տեղատարափ ջրերի որակի բարելավում,
- շենքերի համար էներգիայի պահանջարկի նվազեցումը, ինչպես ցուրտ եղանակներին, այնպես էլ ամռանը,
- աշխատանքի արտադրողականության բարձրացում՝ շնորհիվ ընդմիջման ընթացքում կենդանի բնության «կղզում» (միջավայրում) հանգստանալու հնարավորության,
- էսթետիկ գրավչության բարելավում միջավայրի ստեղծման հաշվին,
- ձայնամեկուսացման բարելավում (բնահողի, բույսի և մեկուսացված օդային շերտավորումը ծառայում են ձայնի համար արտակարգ մեկուսիչ):

Կառուցապատման խտության բարելավումը և օդի ջերմաստիճանի բարձրացումը ցանկապատ տարածքների համեմատ, այսօր շատ հայտնի երևույթ է, որը ստացել է «տաքության քաղաքային կղզի» անվանումը: Բազմաթիվ հետազոտողներ կանխագուշակում են, որ «կանաչ տանիքները» կարող են դառնալ այն գործիքները, որոնց օգնությամբ կարելի է նվազեցնել խոշոր քաղաքի գերջեռուցումը ամառանը: Տանիքի վրա բուսականության ներկայությունը նմանեցվում է շրջապատվող բնությանը, այս կերպ բարելավելով կանաչի քանակը՝ խոնավության գոլորշիացմամբ, և առաջացնելով ստվեր տանիքի վերևում:



Բույսերի խոնավության գոլորշիացումը, որոնք տեղեկայված են տանիքի վրա, ինչպես նաև ծածկի «ստվերապատումը» հիմնական փաստերն են, որոնք ազդում են տանիքի պասիվ հովացման վրա տարվա շոգ եղանակներին: Որպես հետևանք այս փաստերի, իջնում է օդի ջերմաստիճանը, քանի որ տաքության քիչ քանակը արտացոլվում է դեպի ետ ատմոսֆերա:

Տանիքի վրա աճած բուսականությունը թողնում է դրական ազդեցություն օդի մաքրության վրա, քանի որ այն կլանում է օդում եղած պինդ մասնիկները, ինչպես նաև կլանում է ածխածնի երկօքսիդը, որոնք հանդիսանում են քաղաքի «շնչառության» հիմնական տարրերը:

«Կանաչ տանիքը» բարեհաջող կերպով դառնում է հազվագյուտ և անհետացող տարբեր տեսակի կենդանիների

համար բնակվելու հավելյալ միջավայր: Հաղորդվում է, որ Լոնդոնի շենքերից մեկի «կանաչ տանիքում» կենսաբանները հայտնաբերել են սարդերի ավելի քան 50 տեսակ: Գերմանիայում «կանաչ տանիքի» վրա հայտնաբերել են հազվագյուտ թռչունների բույն: Այս կերպ՝ «կանաչ տանիքները» կարող էին օգնել կեդանի բնության բազմատեսակ ավելացմանը՝ չնայած այդ առավելությունը կախված է աշխարհագրական առանձնահատկություններից:

«Կանաչ տանիքը» տարածք է, որը կազմված է ավանդական տանիքային համակարգից՝ բերրի հողի և բույսերի լրացուցիչ շերտով:

Պետք չէ տանիքը շփոթել տանիքների վրա եղած ավանդական այգիների հետ, քանի որ վերջիններումս տեղադրվում են բույսերի արկղերը:

Ժամանակակից կանաչ տանիքների համակարգը պետք է կազմված լինի հետևյալ շերտերից (վերից վար).

1. բույսերից, որոնք ընտրված են առանձնահատուկ օգտագործման համար,
2. հնարված բուսական միջավայրից, որը ընդհանուր դեպքում կարող է և չպահպանել գրունտը,
3. լանդշաֆտային կամ ֆիլտրող գործվածքից, որը պահում է բույսի արմատները և բուսական միջավայրը, և միաժամանակ բաց է թողնում ջուրը,
4. հատուկ դրենաժային շերտից, հաճախ ջրերի համար կառուցված ամբարներով,
5. կոշտ ջերմամեկուսիչից,
6. ավանդական տանիքային կոնստրուկցիան՝ տանիքաջրամեկուսացման թաղանթից, ներառյալ հակաարմատային հավելումները:

Կան երկու ձևի «կանաչ տանիքների» համակարգեր՝ էկստենսիվային և ինտենսիվային: Հիմնականում դրանք տարբերվում են արժեքով, բուսական միջավայրի հաստությամբ և օգտագործվող բույսերի ընտրությունից:

Էկստենսիվային «կանաչ տանիքները» բնութագրվում են.

- փոքր զանգվածով,
- նվազագույն կապիտալ ներդրումներից
- օգտագործվող բույսերի քիչ բազմազանությամբ,
- խնամքի նվազագույն պահանջ:

Որպես կանոն բուսական հիմքը կազմվում է ավազի, մանրախիճի, մանրած աղյուսի, կերամզիտի, տորֆի, օրգանային մասնիկների և որոշակի քանակությամբ գրունտի խառնուրդից: Հիմքի հաստությունը տատանվում է 5-ից 15 սմ, նրա զանգվածը խոնավության հետ միասին կազմում է 70-ից մինչև 170կգ/մ^2:

Սովորաբար բույսերը ջրում և պարարտացվում են այնքան ժամանակ, քանի դեռ դրանք չեն հարմարվել, այսինքն՝ մեկ տարվա ընթացքում: Դրանից հետո տարին միայն երկու անգամ են ուշադրություն դարձնում խնամքի վրա, այն է թաղանթների ստուգման և մոլախոտերի մաքրման համար:

Ինտենսիվային «կանաչ տանիքները» հանդիսանում են հաճախակի օգտագործվող: Նրանք բնութագրվում են մեծ հաստությամբ հիմքով, մեծ զանգվածով, ավելի բարձր կապիտալ ներդրումներով, ավելի բազմազան բուսականությամբ, ավելի շատ խնամքի պահանջով: Հիմքը կազմվում է 20-ից 60 սմ հաստությամբ գրունտով և 250-ից մինչև 950 կգ/մ^2 զանգվածով: Շնորհիվ հիմքի հաստության՝ բույսերի ընտրությունը ավելի բազմազան է, որ կարող է ներառել նաև թփուտներ և ծառեր: Սակայն ինտենսիվային տանիքները պետք է ջրել հաճախակի: Պահանջվում է մասնագիտացված կոնսուլտացիաներ կոնստրուկտորների և լանդշաֆտային դիզայներների, ինչպես նաև փորձառու տանիքագործ՝ մոնտաժային համակարգերի համար:

Ավանդական տանիքների դեպքում ջերմաստիճանի փոփոխությունների ժամանակ մեմբրանի տակ եղած տարածքը գերտաքանում է ամառային ամիսներին և սառում ձմռանը: Իսկ դա առաջ է բերում էներգիայի մեծ սպառում: Հետազոտումները ցույց են տվել, որ օրական միջին ջերմաստիճանի տատանումների ժամանակ մեմբրանի ջերմաստիճանը կանաչ տանիքների համար կազմել է 6^0C, իսկ ավանդականի համար՝ 45^0C (20ամիս): Այդ նույն փորձերը ցույց են տվել, որ կանաչ և հարթ տանիքների ջերմային արդյունավետության առումով նման են, երբ տանիքը պատված է ձյունով: Դա բացատրվում է նրանով, որ ձյունը հանդիսանում է արդյունավետ ջերմամեկուսիչ նյութ, 25 մմ հաստությամբ ձյան շերտը դիմադրում է մոտավորապես 0,18 մ^{0}C/Վտ ջերմությանը:

Ջերմահաղորդականության դիմադրությունը միակ փաստը չէ, որին անհրաժեշտ է ուշադրություն դարձնել ջերմամեկուսիչների ընտրության ժամանակ: Այնպիսի փաստեր, ինչպիսի են հասարակ հարդարումը, խոնավային դիմադրությունը, մեխանիկական ամրությունը (դեֆորմացիայի ժամանակ), կայունությունը ագրեսիվ միջավայրի հանդեպ, բնութագրի հաստատակամությունը՝ այս ամենին պետք է ուշադրություն դարձնել ջերմամեկուսիչի ընտրության ժամանակ:

Հարկ է նշել որ «կանաչ տանիքների» ոռոգման և ավելորդ ջրերի հեռացման համար անհրաժեշտ են հավելյալ ծախսեր:

Այսպիսով, «կանաչ տանիքի» արժեքի գնահատումը նրա գոյատևման ընթացքում ցույց է տվել, որ այն չի գերազանցում սովորական տանիքի արժեքից: «Կանաչ տանիքները» ներդրումը, առաջ է բերում մի շարք սոցիալական, էկոնոմիկական և էկոլոգիական առավելություններ:

Երևան քաղաքի բազմաթիվ էկոլոգիական խնդիրներից ամենա ակտուալը կապված է քաղաքի սահմաններում գտնվող կանաչ գոտիների կառուցապատման հետ , որի պատճառով կանաչ տարածքները հասցվել են նվազագույնի, իսկ այդ տարածքների առկայությունը խոնավություն է ապահովում և թույլ չի տալիս որ փոշի բարձրանա:

Ֆունկցիոնալ տեսանկյունից քաղաքի համար մեծ նշանակություն ունեցող կանաչ տարածքների ընդհանուր օգտագործումը շինարարական նորմայի տեսանկյունից պետք է համապատասխանի 16 ք.մ. մեկ շնչի հաշվով: Այսօր այդ ցուցանիշը (ոչ պաշտոնական տվյալներով) համապատասխանում է 4.9 քմ, իսկ որոշ շրջանային քաղաքներում դրանից պակաս: Մայրաքաղաքի մեկ բնակչին հասնող ընդհանուր օգտագործման կանաչ տարածքի չափանիշը 7.5 մ^2/մարդ է, որը 2-2,2 անգամ պակաս է նորմատիվայինից (պաշտոնական տվյալներով): Եվ եթե կառուցապատումը կանաչ տարածքների հաշվին նման տեմպերով շարունակվի, ապա քաղաքը չի կարողանա ապահովել կյանքի համար անհրաժեշտ էկոլոգիական պայմանները: Ուստի «կանաչ տանիքները» կարող են նպաստել այդ ցուցանիշների բարձրացմանը՝ հասցնելով նորմատիվայինին:

Բացի խոնավության ապահովությունից, մեր մայրաքաղաքում և հանրապետության էկոլոգիապես աղտոտված մյուս քաղաքներում «կանաչ տանիքը» կապահովի օդի մաքրությունը, ջերմաձայնամեկուսացումը, իսկ այն ուղեվորները, ովքեր ինքնաթիռով կժամանեն մայրաքաղաք էսթեթիկական մեծ հաճույք կստանան: Հետևաբար, հետագայում կառուցվող շենքերի տանիքները կարող ենք օգտագործվել «կանաչ տանիքների» ստեղծման համար, որոնք կլրացնեն կառուցապատման հետևանքով ոչնչացած կանաչ գոտիների պակասը:

РАЦИОНАЛЬНОЕ ИСПОЛЬЗОВАНИЕ, ВОСПРОИЗВОДСТВО И ОХРАНА ПРИРОДНЫХ РЕСУРСОВ

Это статья о «зеленых крышах», о их строительстве, о борьбе с загрязненной атмосфере, эфективнсте и о эстетическое удовольствие.


Գրականություն

1. «Зеленые кровли» в условиях холодного климата - http://www.primaplex.ru/articles/about/details/11.htm
2. Зеленая кровля - http://www.polysys.ru/krovlya/green-krovlya/
3. Кто изобрел сетку-рабицу? - http://rabitca.at.ua/index/kto_izobrel_setku_rabicu/0-14



Դասախոս՝
Աննա Ավագյան

Մագիստրանտ՝
Քրիստինե Միրիջանյան



ՀՏԴ 336.225.673 (ԵՃՇՊՀ, «Էկոնոմիկայի, իրավունքի և կառավարման» ամբիոն)

ՀԱՐԿԱՅԻՆ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՀԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԿԱՐԵՎՈՐ ՊԱՅՄԱՆ

Սույն հոդվածում խոսվում է արդյունավետ հարկային քաղաքականության ապահովման գործընթացում հարկային վարչարարության ունեցած դերակատարության մասին: Վերջինս ճիշտ գնահատելու և արժևորելու նպատակով կարևորվել է հարկային վարչարարության միջազգային փորձի ուսումնասիրությունը: Հոդվածում կարևորվել է այն դրույթը, որ արդյունավետ հարկային քաղաքականության ապահովման համար հարկային վարչարարությունը պետք է իրականացվի ոչ միայն բյուջեի եկամուտների մեծացման, արդյունավետ հարկային հսկողության ապահովման համար, այլև հարկային համակարգի զարգացման համար:

Հարկային համակարգի կայունությունը համարվում է ցանկացած պետության, այդ թվում Հայաստանի Հանրապետության արդյունավետ հարկային քաղաքականության իրագործման կարևորագույն նախապայման: Հարկային համակարգը նպատակաուղղված է պետության ֆինանսական գործունեության կարևոր գործընթացի իրագործմանը՝ բյուջեի եկամուտների ձևավորման և համալրման կապակցությամբ: Բնականաբար՝ հարկային համակարգը բյուջետային համակարգի ենթատեքստում դիտվում է որպես պետության գոյության և հանրային շահերի պաշտպանության նախապայման: [1]

Հայաստանի Հանրապետությունում գործում է միասնական հարկային համակարգ: [2] Հարկային համակարգը ձևավորվում է նոր հարկերի ստեղծման, նրանց փոփոխման և ոչնչացման ճանապարհով: [3]

Հարկային քաղաքականության հետ ուղղակիորեն և անուղղակիորեն կապված են ոչ միայն պետության և հասարակության, այլև բոլոր քաղաքացիների, բնակչության խմբերի և շերտերի, կազմակերպությունների շահերը և հետաքրքրությունները: Այդ կարևորությամբ պայմանավորված, կարելի է նշել, որ վերափոխումների ներկայիս փուլում հարկային բարեփոխումները հանդիսանում են տնտեսական վերափոխումների կարևորագույն բաղկացուցիչը, քանի որ երկրի հարկային ներուժը կախված է ամբողջ տնտեսական ներուժից: Միևնույն ժամանակ, չափազանց մեծ է հարկերի ազդեցությունը ինչպես երկրի տնտեսության, այնպես էլ պետության ֆունկցիաների կատարման արդյունավետության վրա:

Հարկային բարեփոխումների ծրագիրը պետք է սահմանի հարկային ոլորտում պետական քաղաքականության մշակման հիմնական սկզբունքները, այդ քաղաքականության իրականացման ծրագրային հիմունքները և կարգավորի դրանց հետ կապված հարաբերությունները: Այն պետք է ներառի ծրագրի հիմնական խնդիրները, ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման ծավալները և ժամանակացույցը, բյուջետային հատկացումների և դրանց արդյունավետ օգտագործման սկզբունքները, ինչպես նաև աշխատանքների իրականացման առաջնայնությունները:

Հայաստանի Հանրապետությունում հարկային քաղաքականության ձևավորման առանձնահատկությունների բացահայտմանը, դրա վրա ազդող բազմաբնույթ գործոնների գնահատմանը, դրանցով պայմանավորված հիմնահարցերի ուսումնասիրությանը նվիրված հետազոտությունները զգալիորեն նպաստեցին տվյալ բնագավառում առկա հարաբերությունների կանոնակարգման և արդյունավետ կառավարման համար անհրաժեշտ մեթոդաբանական և մեթոդական հիմքերի ստեղծմանը: Այդուհանդերձ, տնտեսական գործընթացների շարունակվող փոփոխականությունը և հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը, ակնհայտորեն, պահանջում են մշակվող և իրականացվող հարկային քաղաքականության կատարելագործում, այդ ուղղությամբ արդյունավետ տնտեսական քաղաքականության իրականացում:

Հարկային քաղաքականությունը հարկման ոլորտում իրականացվող կոնկրետ միջոցառումների ամբողջությունն է: Հարկային քաղաքականությունը ձևավորվում է հարկային օրենսդրության շրջանակներում: [4]

Հայաստանի Հանրապետության կողմից իրականացվող հարկային վարչարարության առանձնահատուկ տեղն ու դերը որոշելու և գնահատելու նպատակով անհրաժեշտ է կարևորել հարկային վարչարարության միջազգային փորձի հնարավոր կիրառման փաստացի ձեռքբերումները:

Զարգացած բոլոր երկրներում, ինչպես նաև անցումային տնտեսությամբ զգալի թվով երկրներում հարկային մարմինների կողմից իրականացվող գործառույթների գերակշիռ մասը, մասնավորապես հարկային հաշվետվությունների ընդունումն ու մշակումը, անձնական հաշիվների քարտերի վարումը, հարկային վարչարարության ոլորտի բոլոր գործառույթների իրականացումը (հարկային հսկողություն, կամերալ ուսումնասիրություններ, գանձումներ և այլն), հարկ վճարողներին տարբեր ծառայությունների մատուցումը (ծանուցագրերի տրամադրում, փաստաթղթաշրջանառություն և այլն) իրականացվում են ավտոմատացված (էլեկտրոնային) եղանակով: Այսպես, օրինակ, ԱՄՆ-ում հաշվետվությունների 95%-ը, եվրոպական երկրներում՝ միջինը 60%-ը, Ղազախստանում՝ 75%-ը [5], ՌԴ-ում՝ 45%-ը [6] հարկային մարմիններին են ներկայացվում էլեկտրոնային եղանակով:

Ֆրանսիայում հարկային հաշվետվությունների հանձնումը կատարվում է ուղիղ ինտերնետի միջոցով: Տարեց տարի Ֆրանսիայում ավելանում է էլեկտրոնային եղանակով հարկային հաշվետվություններ հանձնող քաղաքացիների թիվը: Շուրջ 7.5 մլն հարկատուներ լրացնում և հանձնում են իրենց հաշվետվությունները տելեկոմունիկացիոն կապի միջոցով: Էլեկտրոնային եղանակով կարելի է հաշվել հարկերը՝ ընտրելով անհրաժեշտ դաշտը, լրացնելով վանդակները, պատասխանելով հարցերին: Ընդ որում՝ հարկերի հաշվումը կարելի է կատարել ինչպես ընթացիկ շրջանում, այնպես էլ՝ ապագա ժամանակաշրջանի համար: Ֆրանսիան կիրառում է հարկային վեճերի նախադատարանական կարգավորման ինստիտուտը: Ֆրանսիայում հարկային ստուգումներն իրականացվում են հարկային տեսչությունների գրասենյակներում (կամերալ ստուգումներ): [7]

Այսպիսով՝ հարկային վարչարարության միջազգային փորձը վկայում է, թե ինչպես է կարևորվում հարկային վարչարարությունն ավտոմատացնող ծառայության դերը:

Հարկային ոլորտում Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից վերջին տարիներին մշակվող և իրականացվող քաղաքականությունը կողմնորոշված է եղել հարկային քաղաքականության

կատարելագործմանն ու հարկահավաքման գործընթացի արդյունավետության բարձրացմանը: Այլ կերպ ասած՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից իրականացվող հարկային քաղաքականությունը նպատակադրված է եղել մի կողմից՝ նպաստավոր ձեռնարկատիրական միջավայրի ձևավորմանը, մյուս կողմից՝ պետական եկամուտների հավաքագրման օպտիմալ մակարդակի ապահովմանը:

Հարկային քաղաքականությունը և հարկային վարչարարությունը պետության սոցիալ-քաղաքական իրավիճակի փոխկապված գործոններ են: Դրանք այնպիսի փոխհարաբերությունների մեջ են, որ հարկման հատվածում ցանկացած բարեփոխումներ միշտ ենթադրում են հարկային վարչարարության արդյունավետ մեխանիզմների մշակում կամ առկայություն:

Աղյուսակ 1

2008-2011 թվականների ընթացքում պետական բյուջե վճարված հարկերը [8]

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՉԱՓԻ ՄԻԱՎՈՐ	2008թ.	2009թ.	2010թ.	2011թ.
1	Պետ. բյուջե վճարված հարկեր և այլ պարտադիր վճարներ, այդ թվում՝	մլրդ դրամ	579,0	502,5	565,3	661,1
1.1	ԱԱՀ	մլրդ դրամ	297,9	239,6	285,7	324,4
1.2	Շահութահարկ	մլրդ դրամ	85,1	80,8	77,8	98,1
1.3	Ակցիզային հարկ	մլրդ դրամ	15,4	13,3	15,3	23,2
1.4	Եկամտահարկ	մլրդ դրամ	53,7	60,2	73,9	81,2
1.5	Սոցիալական ապահովության վճար	մլրդ դրամ	105,1	102,9	105,3	123,4
1.6	Այլ հարկային եկամուտներ	մլրդ դրամ	21,8	5,7	7,3	10,8

Աղյուսակ 1-ում ներկայացված են 2008-ից 2011 թվականների ընթացքում պետական բյուջե հավաքագրված հարկային եկամուտները, որտեղ նկատվում է աճման տենդենց:

Այսօր հարկային արդյունավետ քաղաքականություն վարելու համար անհրաժեշտ է ունենալ հարկային վարչարարության այնպիսի համակարգ, որի մեխանիզմը կարողանա հարկային մուտքեր ապահովել ՀՀ բյուջետային համակարգ:

Հարկային վարչարարության արդյունավետության ապահովման գործում կարևոր դերակատարում ունի խոշոր բիզնեսի ճիշտ, լիարժեք և ժամանակին հարկման ապահովումը, որը իրագործվում է բազմաթիվ միջոցառումների միջոցով:

Մեր երկրի պետական բյուջեի եկամուտների հիմնական մասը մշտապես ապահովվել է խոշոր հարկատուների վճարած հարկերի շնորհիվ: Թերևս դա է պատճառը, որ հարկատուների այդ հատվածին սպասարկելու համար պետական եկամուտների հավաքագրման համակարգում առանձին ստորաբաժանում է գործում, որը շարունակապես կառուցվածքային և կադրային բարեփոխումների է ենթարկվում: Տնտեսագիտական կանխատեսումների համաձայն՝ առաջիկա տարիների ընթացքում ևս նրանք կլինեն տնտեսական աճի հիմնական խթանող ուժը:

Վերջին տարիներին խոշոր բիզնեսի կողմից վճարված հարկերի տեսակարար կշիռը պետական բյուջեի ընդհանուր հարկային մուտքերում կազմում է 60%-ից ավելին: [8] Այսինքն՝ խոշոր բիզնեսը կատարում է իր հիմնական հարկային պարտականությունը՝ կրելով պետական բյուջեի եկամուտների համար գլխավոր պատասխանատվությունը: ՈՒստի հարկային վարչարարության գործառույթներն իրականացնելիս՝ հարկային մարմիններն աշխատում են շեշտը դնել ոչ թե հարկադրանքի, այլ ինքնագնահատման համակարգի ուժեղացման վրա: Դա չի նշանակում, որ խոշոր բիզնեսը պատրաստ է սիրահոժար կատարել իր պարտականությունները: Այստեղ նույնպես առկա են մեծ ռիսկեր և անելիքներ հարկային մարմինների համար: Մասնավորապես՝

- խիստ անհրաժեշտություն կա ապահովելու ստվերի կրճատումը՝ շինարարության, հանքարդյունաբերության, լայն սպառման ապրանքների առևտրի, ենթակակցիզային ապրանքների արտադրության և ներմուծման, որոշ սննդատեսակների արտադրության բնագավառներում, իսկ սպասարկման ոլորտից՝ հյուրանոցների, տրանսպորտի և տուրիզմի ճյուղերում,
- դեռևս չի ապահովվել երկրի ներսում ներմուծումների ամբողջ տեսականու և քանակի նկատմամբ արդյունավետ վարչարարությունը,
- հարկ է բարձրացնել հետներմուծումային շղթայի լրիվ և ժամանակին հարկման արդյունավետությունը,
- պետք է լուծել՝ անհրաժեշտ հաշվանցումներ կատարելու և կեղծ փաստաթղթեր օգտագործելու միջոցով առանձին տնտեսվարող սուբյեկտների կողմից արհեստական գերավճարների կուտակման խնդիրը և այլն:

Կարևորելով մեր հասարակության զարգացման մեջ բարոյական արժեքների դերը, կարելի է ասել, որ խոշոր բիզնեսի ներկայացուցիչները պայքարում են օրինակ յուրաքանչյուր տարի հրապարակվող ամենից շատ հարկ վճարած հարկատուների ցուցակի առաջին տասնյակում տեղ գտնելու համար: Խոշոր բիզնեսի ներկայացուցիչները պետք է գիտակցեն, որ, վճարելով հարկերն, իրենք զարգացնում են պետությունը, հետևաբար և համապատասխան ենթակառուցվածքները, որոնք պարարտ հող են հանդիսանում առողջ տնտեսություն ունենալու համար: Խոշոր բիզնեսում բացի հարկային պարտավորությունների անթերի կատարումից, կարևոր է գործունեության թափանցիկությունը, ինչպես նաև սոցիալական ծրագրերի կատարումը, քանի որ անուղղակիորեն այն կտանի ստվերային հատվածի նվազեցման:

Աղյուսակ 2

Խոշոր հարկ վճարողների կողմից պետական բյուջե վճարված հարկերը
2008-2011 թվականների ընթացքում [8]

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՉԱՓԻ ՄԻԱՎՈՐ	2008թ.	2009թ.	2010թ.	2011թ.
1	Պետ. բյուջե վճարված հարկեր և այլ պարտադիր վճարներ, այդ թվում՝	հազ. դրամ	206 327 292,8	167 935 014,0	188 229 054,3	244 978 150,8
1.1	ԱԱՀ	հազ. դրամ	67 344 235,9	48 260 123,3	65 253 514,9	77 653 920,1
1.2	Շահութահարկ	հազ. դրամ	58 213 413,6	48 048 640,8	39 320 879,6	64 505 120,0
1.3	Ակցիզային հարկ	հազ. դրամ	6 428 180,9	6 012 103,2	5 876 140,7	5 548 938,8
1.4	Եկամտահարկ	հազ. դրամ	22 436 828,3	21 500 523,8	27 756 830,2	35 358 748,6
1.5	Սոցիալական ապահովության վճար	հազ. դրամ	28 766 303,2	25 310 521,1	27 791 980,0	39 957 200,8
1.6	Այլ	հազ. դրամ	23 138 330,9	18 803 102,0	22 229 709,0	21 954 222,6

2008 թվականին խոշոր հարկ վճարողների կողմից պետական բյուջե կատարվել է 206,3 մլրդ. դրամ հարկային վճարումներ:


2009 թվականին խոշոր հարկ վճարողների կողմից պետական բյուջե կատարվել է 167,9 մլրդ. դրամ հարկային վճարումներ, որը պակաս է նախորդ տարվանից 38,4 մլրդ. դրամով: Մի շարք ցուցանիշների առումով 2009 թվականին առկա է նվազման տենդենցը նախորդ տարվա համեմատությամբ:

Պետական բյուջե վճարված հարկերի և այլ պարտադիր վճարների ցուցանիշի առումով 2010 թվականին խոշոր հարկ վճարողների կողմից վճարվել է շուրջ 188,2 մլրդ. դրամ հարկային վճարումներ, որը ավել է նախորդ տարվանից 20,3 մլրդ. դրամով: Բոլոր ցուցանիշների առումով 2010 թվականին 2009 թվականի համեմատությամբ աճ է արձանագրվել: Կարելի է նշել, որ աճ կա ինչպես բոլոր հարկատեսակների, այնպես էլ սոցիալական վճարների գծով: Հավաքագրված գումարները գերազանցել են նախորդ տարվա մակարդակները, բացառությամբ շահութահարկի, որի պատճառը, հիմնականում, համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամն է և այն, որ 2009 թվականի շահութահարկի հաշվարկի ներկայացման ու վճարման ժամկետը հանդիսանում է 2010 թվականը:

2011 թվականին խոշոր հարկ վճարողների կողմից պետական բյուջե կատարվել է շուրջ 244,9 մլրդ. դրամ հարկային վճարումներ, որն ավել է նախորդ տարվանից 56,7 մլրդ. դրամով: 2011 թվականին առկա է աճման տենդենցը նախորդ տարվա համեմատությամբ:


Հարկային վարչարարության կարևոր ուղղություններից են նաև հարկային ստուգումները: Տնտեսական ներկա պայմաններում պետության եկամուտների ապահովման գործում առավել կարևորվում է հարկային վարչարարության արդյունավետությունը: Վերջինս մեծապես պայմանավորված է հարկային հսկողության, այդ թվում ուսումնասիրությունների և ստուգումների որակով:

Գծապատկեր 1. 2008-2011թթ. իրականացված ստուգումների քանակը [8]



Հարկային մարմնի կողմից 2011 թվականին իրականացվել է ընդհանուր թվով 20205 ստուգում, ինչը նախորդ տարվա նույն ցուցանիշի համեմատ կրճատվել է 1093-ով կամ 5,1%-ով, 2010 թվականին իրականացվել է ընդհանուր թվով 21298 ստուգում, ինչը նախորդ տարվա նույն ցուցանիշի համեմատ պակաս է 1769-ով կամ 7,7%-ով, իսկ 2008 թվականին իրականացվել է ընդհանուր թվով 15010 ստուգում (գծապատկեր 1): Ստուգումների արդյունքում արձանագրված ընդհանուր գումարը 2011 թվականին կազմել է 19942,3 մլն դրամ, ինչը նախորդ տարվա նույն ցուցանիշի համեմատ նվազել է 8646,9 մլն դրամով կամ 30,2%-ով, ստուգումների արդյունքում հայտնաբերված ընդհանուր գումարը 2010 թվականին կազմել է 28589,1 մլն դրամ, ինչը գերազանցել է նախորդ տարվա նույն ցուցանիշը 1286,6 մլն դրամով կամ 4,7%-ով, իսկ 2008 թվականին ստուգումների արդյունքում հայտնաբերված ընդհանուր գումարը կազմել է 38380,5 մլն դրամ (գծապատկեր 2): Բացառությամբ ՀԴՄ-ների կիրառման ճշտության ստուգումների, 2011 թվականին իրականացվել է 10682 ստուգում՝ 2010 թվականի նույն ցուցանիշից 911-ով կամ 7,9%-ով պակաս: Բացառությամբ ՀԴՄ-ների կիրառման ճշտության ստուգումների, իրականացված ստուգումների արդյունքում արձանագրված գումարը կազմել է 18579,1 մլն դրամ՝ 2010 թվականի նույն ցուցանիշի համեմատ 8677,3 մլն դրամով կամ 31,8%-ով պակաս:

Գծապատկեր 2. 2008-2011թթ. իրականացված ստուգումների արդյունքում հայտնաբերված գումարները [8]



2011 թվականին իրականացված ստուգումների 47,1%-ը ՀԴՄ-ների կիրառման ճշտության ստուգումներն են, դրանց հաջորդում են աշխատողի աշխատանքի ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպելու ճշտության ստուգումները՝ 26%, այնուհետև բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ստուգումները՝ 9,2%: Նախորդ տարի ստուգումների մեջ ևս գերակշռել են ստուգման վերը նշված տեսակները՝ համապատասխանաբար կազմելով 45,6%, 19,1% և 10,5%:

2011 թվականին իրականացված ստուգումների արդյունքում արձանագրված ընդհանուր գումարի 83,8%-ը կազմում են բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ստուգումներով հայտնաբերված գումարները: Նախորդ տարի այդ ցուցանիշը կազմել է 83%:

Ինչպես տեսնում ենք հարկային մարմնի կողմից իրականացված ստուգումների քանակը աստիճանաբար նվազել է՝ շեշտը դնելով առավել ռիսկային տնտեսավարող սուբյեկտների վրա:

Այսպիսով արդյունավետ հարկային քաղաքականության ապահովման համար անհրաժեշտ է իրականացնել՝

1. Հարկ վճարողների սպասարկման որակի բարձրացում, ինչը կհանգեցնի հարկերի կամավոր վճարման սկզբունքի արմատավորմանը: Սա իր հերթին ենթադրում է՝
   - հարկ վճարողներին մատուցվող ծառայությունների նոր ուղիների սահմանում, որոնք կապահովեն հաշվետվությունների ներկայացման ցածր ծախսեր և բարձր արդյունավետություն,
   - հարկ վճարողների իրազեկման արդյունավետ համակարգի ապահովում,
   - հանրության հետ արդյունավետ համագործակցության ապահովում:
2. Հարկային մարմնի հիմնական բիզնես գործընթացների վերակազմակերպում, որը ենթադրում է՝
   - նորարար տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառում,
   - ներքին կառավարման համակարգի արդյունավետության բարձրացում:
3. Հարկային հսկողության ժամանակակից մեխանիզմների կիրառում, որը հնարավորություն կտա ստուգումների գործընթացը դարձնել առավել հասցեական: Սա իր հերթին ենթադրում է՝
   - արդյունավետ հարկային հսկողության ապահովում,
   - հարկային պարտավորությունների հարկադիր գանձման համակարգի կատարելագործում,
   - հարկերի վճարումից խուսափելու դեպքերի բացահայտման մեխանիզմների կատարելագործում,
   - օպերատիվ-հետախուզական գործընթացների կատարելագործում:
4. Մարդկային ռեսուրսների արդյունավետ կառավարում, ներքին հսկողության մեխանիզմների կատարելագործում, ինչը կօգնի բարձրացնել աշխատանքի արդյունավետությունը, բարձրացնել հարկ վճարողներին մատուցվող ծառայությունների որակը, հարկ վճարողների գոհունակությունը: Սա իր հերթին ենթադրում է՝
   - հարկային ծառայողների պարտադիր վերապատրաստման համակարգի ներդրում,
   - հարկային ծառայողների խրախուսման և պաշտոնեական առաջխաղացման համակարգի կատարելագործում,
   - միջազգային առաջատար փորձի հիման վրա ներքին հսկողության և վերահսկողության գործընթացների բարելավում:

The tax redtape as an important condition for the provision of on effective tax policy

This article speaks about the role of the tax redtape in the provision process of an effective tax policy. To appreciate and value the latter correctly they have made important the international experience of the tax redtape. The article makes important the term that for the provision of an effectivet tax policy the tax redtape should be carried out not only for the increase of the budget incomes, the effective tax control but also for the development of the tax system.

Налоговое администрирование, как важное условие для обеспечения продуктивной налоговой политики

В этой статье говорится о значении налогового администрирования в процессе обеспечения продуктивной налоговой политики. Для придания значения и правильной оценки выше сказанному, стало важным изучение международного опыта налогового администрирования. В статье главным явилось то положение, что для обеспечения продуктивной налоговой политики, налоговое администрирование должно осуществляться не только для пополнения бюджета и обеспечения продуктивного налогового контроля, но и для развития налоговой системы.

Գրականություն

1. Խաչատրյան Ա. Հ., «Հարկային իրավունք» - Երևան 2003թ., էջ 236-237
2. ՀՀ ԿԱ ՊԵԿ «Հարկային տեղեկատու» ՓԲԸ, «Հարկեր, տուրքեր և վճարներ» առաջին մաս,Երևան 2012թ., էջ 6
3. Н.В. Миляков, "Налоги и налогообложение", Москва 2006г., с.56
4. Գ.Ա. Սուքիասյան, Ա.Հ. Օսիկյան, Ն.Գ. Սուքիասյան, «Հարկային իրավունք» - Երևան 2011թ., էջ 35
5. www.wikipedia.org
6. www.nalogi.ru
7. www.google.ru
8. www.taxservice.am



Ղեկավար՝
Անահիտ Ադամյան



Մագիստրանտ՝
Տարոն Հարությունյան

ՀՏԴ 338.4 (ԵՃՕՊՀ, «Էկոնոմիկայի, իրավունքի և կառավարման» ամբիոն)

ԱԳԼՃԿ-ՆԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

Անկախացման տարիներից ի վեր հանրապետությունը գտնվելով շրջափակման մեջ, հանրապետությունում ավտոտրանսպորտի տեղաշարժման հնարավորությունները սահմանափակվեցին՝ կապված վառելիքի հետ: Այդ ժամանակ էր որ տրանսպորտում մտածեցին ներդնել վաղուց մոռացված գազային վառելիքը: Այսօրվա դրությամբ հանրապետության ավտոտրանսպորտի 65-70% -ը օգտվում է գազալցակայաններից:

«ԱԳԼՃԿ» Ավտո գազի լիցքավորման ճնշման կայանը մեզ հայտնի է դեռևս խորհրդային տարիներին: ՀՀ-ում գոյություն ունեին շատ քիչ քանակությամբ ճնշման կայաններ, որոնց դերը ավտոտրանսպորտում աննշան էր, քանի որ տրանսպորտում, վառելիքի մասիվ դերը ընկնում էր հեղուկ վառելանյութի վրա, որոնց գինը շատ չնչին էր ԽՍՀՄ-ում: Չնայած այն բանին, որ գազային վառելիքի արտանետումները ավելի քիչ էին, քան հեղուկ վառելիքինը: Անկախացման տարիներից ի վեր հանրապետությունը գտնվելով շրջափակման մեջ, հանրապետությունում ավտոտրանսպորտի տեղաշարժման հնարավորությունները սահմանափակվեցին՝ կապված վառելիքի հետ:

Հիմնական բեռնատար և մարդատար տրանսպորտը փոխեց հեղուկ վառելիքը համեմատաբար կայուն մատակարարվող և հուսալի գազամատակարարմամբ: Գազամատակարարումը տրանսպորտում 3-4 անգամ շահավետ է քան հեղուկ վառելիքը, որը բերեց հանրապետությունում կտրուկ աճի: Այդ ժամանակ էր որ տրանսպորտում մտածեցին ներդնել վաղուց մոռացված գազային վառելիքը: Մեր հանրապետությունում լայն թափ ստացավ գազալցակայանների ներդրումը: Առաջին հերթին պետական մակարդակով վերականգնվեցին խորհրդային տարիներին կառուցված լցակայանները, որոնք հանրապետության տրանսպորտին չէին բավարարում՝ առաջացնելով մեծ հերթեր և դժվարություններ: Սկսած 2000 թ այդ գործում ձեռնամուխ եղավ մասնավոր սեկտորը: Անհատ ձեռներեցների միջոցով հանրապետություն ներկրվեցին գերմանական, արգենտինական, ռուսական սարքավորումներ: ԱԳԼՃԿ-ի զարգացման մեջ մեծ դեր խաղաց հանրապետությունում խորհրդային տարիներից գործող սառնարանների սարքավորումները: Մեր հմուտ մասնագետների օգնությամբ հիմնականում Աբովյան և Վանաձոր քաղաքների մասնագետների շնորհիվ այդ սարքավորումները ձևափոխվեցին, հարմարեցվեցին գազալցակայանների սարքավորումներին: Եվ այսպես մինչև 2005 թ. հանրապետությունում արդեն գործում էին մոտ 200 լցակայան: Այս պահի դրությամբ հանրապետության նույնիսկ ծայրամասերում գործում են լցակայաններ և նրանց թիվը հասնում է 350 և ավելի: Այսօրվա դրությամբ հանրապետության ավտոտրանսպորտի 65-70% -ը օգտվում է գազալցակայաններից:

Նշենք, որ մոլորակի խոշոր քաղաքները, որոնց մթնոլորտի աղտոտվածության աստիճանը շատ բարձր է, անցնում են հեղուկ վառելիքից այլընտրանքային վառելիքի, որոնցից են բնական գազը՝ «մեթան», հեղուկ գազը՝ «պրոպան», էլեկտրական մարտկոցներ: Այսօր գիտությանը ավելի մատչելի է բնական գազը, որը լայնորեն օգտագործվում է մի շարք երկրներում, ինչպիսիք են Արգենտինան, Կանադան և այլն: Այժմ ներկայացնենք գազալցակայանների տեսակները, որոնց աշխատանքի արդյունքը ցածր ճնշումից (2-4 կգ/սմ^2)հասցնել (200-250 կգ/սմ^2): Գոյություն ունեն ճնշակների տարբեր տեսակներ, որոնք աշխատում են եռաստիճանից մինչև 6 աստիճան փուլերով: Մեր հանրապետությունում հիմնականում եռաստիճան փուլով աշխատում են գերմանական սարքավորումները, որոնց մուտքի ճնշումը կազմում է (20-25կգ/սմ^2): Այդ նպատակով օգտագործվում են ճնշակներ, որոնք կարողանում են ճնշումը բարձրացնել 2-25 կգ/սմ^2:

Մեր հանրապետությունում լայնորեն օգտագործում են չորսփուլանի ճնշակներ, որոնց մեջ մտնում են՝ արգենտինական, ուկրաինական, ռուսական արտադրության ճնշակները: Հանրապետությունում գոյություն ունեն վեց փուլով աշխատող ճնշակներ, որոնց մուտքի ճնշումը կազմում է 0.4-0.6 կգ/սմ^2: Այս դեպքում օգտագործվում են սարքավորումներ ԳԳՄ-ի ցանցի ճնշումը իջեցնելու նպատակով: Քանի որ բնական գազի օգտայնության գործակիցը ավելի փոքր է քան հատուկ վառելիքինը, որն ազդում է ավտոտրանսպորտի հզորության վրա. Գազալցակայաններում աշխատում են այն հասցնել մաքսիմումի: Այդ նպատակով գազալցակայաններում տեղադրվում են զտող, մաքրող, չորացնող սարքավորումներ, որոնք գազը մաքրում են փոշուց, կեղտից, խոնավությունից և յուղայնությունից: Ամեն տարի նկատվում է ավտոտրանսպորտի գազով աշխատելու տենդենց: Անվտանգության նպատակով վերջին տարիներում գազալցակայաններում տեղադրվում են գազային աշտարակներ, որոնք ճշտորեն կարողանում են չափել գազի կշիռը, ծավալը, ջերմաստիճանը և ճնշումը լիցքավորվող տարայում:

The necessity of foundation Autogas Stations and thier role in RA

After the indipendece, when our republic was in blockade, the possiblities of the vehicle movement was restricted becouse of lack of fuel. This made people to invest the gas fuel which was forgotten for years. Nowadays 65-70% of vehicles in our republic use gas-filling stations.



Ասիստենտ՝
Վարազդատ Հովհաննիսյան

Մագիստրանտ՝
Հովսեփ Հայրապետյան



ՀՏԴ 330.101 (ԵԵՇՊՀ, «Էկոնոմիկայի, իրավունքի և կառավարման» ամբիոն)

ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԵԿԱՄՏԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ

*Հոդվածում խոսվում է անշարժ գույքի գնահատման եկամտային մոտեցման մասին: Մասնավորապես նշվում է, որ անշարժ գույքի գնահատման գործընթացում եկամտային մոտեցման կիրառումը ուղեկցվում է մի շարք հիմնախնդիրներով, որոնցից է եկամտաբերության ցուցանիշների կանխատեսումը: Կանխատեսման գործընթացում առաջանում են մեթոդաբանական հիմնախնդիրներ, որոնց ճիշտ լուծումը նպաստում է բիզնեսի առավել հավաստի գնահատմանը: Դիտարկվում է կանխատեսման **միտման** կամ **տրենդի** մեթոդը:*

Անշարժ գույքը գնահատելիս, երբ կիրառվում է եկամտային մոտեցումը, ակտուալ հիմնախնդիր է համարվում եկամտաբերության ցուցանիշների կանխատեսումը: Ջուտ շահույթի կապիտալիզացման մեթոդի կիրառումը հիմնված է գնահատման օրվանից 1 տարի հետո շահույթի կանխատեսման վրա: Դրամական հոսքերի դիսկոնտավորման մեթոդի կիրառումը պահանջում է կանխատեսման առավել երկարատև փուլեր, այսինքն՝ ժամանակային շարքերի կառուցում և մշակում:

Կանխատեսման գործընթացում առաջանում են մեթոդաբանական հիմնախնդիրներ, որոնց ճիշտ լուծումը կնպաստի բիզնեսի առավել հավաստի գնահատմանը, մասնավորապես՝

- կանխատեսման հորիզոնի հիմնավորված ընտրություն;
- ձեռնարկության սեզոնային և ցիկլիկ տատանումների ցուցանիշների սահմանում;
- կանխատեսման մեթոդի ճիշտ ընտրություն:

Ժամանակային շարքերի կառուցման վրա հիմնված կանխատեսման մեթոդները կիրառվում են այն դեպքերում, երբ ձեռնարկության ցուցանիշների վրա արտաքին և ներքին տարբեր գործոնների ազդեցության բնույթը ժամանակի ընթացքում մնում է անփոփոխ:

Տվյալների համախումբը, որում ժամանակը հանդիսանում է անկախ փոփոխական, անվանում են ժամանակային շարք:

Ժամանակից կախված փոփոխական մեծության ընդհանուր փոփոխությունն անվանում են միտում (տրենդ), որը կարող է լինել աճող կամ նվազող:

Միտման (Տրենդի) մեթոդը:

Միտման մեթոդը դիտարկենք շինարարական նյութերի արտադրության զարգացման կանխատեսման օրինակի վրա (2011թ-ի դրությամբ): Տվյալները մտացածին են և վերցված են 5 տարվա կտրվածքով (աղ. 1):

Շինարարական նյութերի արտադրության ցուցանիշները, մլրդ դրամ.

Աղ. 1

Ցուցանիշ	2007թ.	2008թ.	2009թ.	2010թ.	2011թ.
Արտադրության ծավալ	428,35	556,3	1163,8	1103,8	1208,7

Գործնականում գնահատականներն առավել հիմնավորված են լինում ընտրված հնգամյա ռետրոսպեկտիվ ժամանակահատվածում, որը համընկնում է կանխատեսման ժամանակահատվածի հետ: Միայն նորաստեղծ ձեռնարկությունների համար այդ ժամանակահատվածը կարող է լինել ավելի փոքր, որը կպահանջի ստացված արդյունքների լրացուցիչ ճշգրտում: Անշարժ գույքի կանխատեսման համար ընտրվում է առավել մեծ ժամանակահատված:

Ռետրոսպեկտիվ ինֆորմացիան ցույց է տալիս ըստ տարիների ցուցանիշների հաստատուն աճը, այդ պատճառով ժամանակային շարքի հավասարեցման համար ընդունված է ուղիղ գծի մոդելը, որն ունի հետևյալ տեսքը՝

$$y_t = a + bt, \qquad (1)$$

Որտեղ t - ժամանակի անկախ փոփոխականն է, տարի:

a և b բնութագրում է ուղղի գրաֆիկի հատումը a և b կոորդինների առանցքի հետ և միտման գծի թեքվածությունը: Կիրառելով նվազագույն քառակուսիների մեթոդը, կարող ենք տվյալ պարամետրերը որոշել հետևյալ բանաձևերով՝

$$b = \frac{n\sum xy - \sum x \sum y}{n\sum x^2 - (\sum x)^2}, \qquad (2)$$

$$a = \frac{\sum y}{n} - \frac{b\sum x}{n}, \qquad (3)$$

Որտեղ՝

n - ռետրոսպեկտիվ փուլերի քանակն է;

x - ռետրոսպեկտիվ շրջանի հերթական համարը;

y - կանխատեսվող ցուցանիշի մեծությունը:

a և b պարամետրերի հաշվարկի համար ելքային և հաշվարկային տվյալները բերված են ներքոհիշյալ աղյուսակում (աղ. 2):

Տրենդի մակարդակի պարամետրերի հաշվարկ.

Աղ. 2

X (տարի)	Y (մլրդ.դր)	xy	x^2	y^2	y_t	$(y-y_t)$	$(y-y_t)^2$
1	428,3	428,3	1	183440,9	470,5	-42,2	1780,8
2	556,3	1112,6	4	309469,7	681,3	-125	15625,0
3	1163,8	3491,4	9	1354430,0	892,1	271,7	73820,9
4	1103,8	4415,2	16	1218374,0	1102,9	0,9	0,8
5	1208,7	6043,5	25	1460956,0	1313,7	-105	11025,0
∑ = 15	4460,9	66913,5	55	24426300,0	x	x	102252,5

Որտեղից՝ b = 210,8

a = 259,7

Միտման հավասարումը տվյալների համախմբի վերլուծության համար ունի հետևյալ տեսքը՝

$$y = 259,7 + 210,8t \qquad (4)$$

Տվյալ հավասարումից ստացվել են կանխատեսվող մեծությունները 6, 7, 8, 9 և 10 տարիների համար (մլրդ դրամ):

2012թ. - 1524,6
2013թ. - 1735,5
2014թ. - 1946,3
2015թ. - 2157,1
2016թ. - 2367,9

Տվյալ մեթոդն ըստ էության ենթադրում է կանխատեսում ձեռք բերված բազայի հիման վրա, երբ ռետրոսպեկտիվ ժամանակահատվածում ունենք ցուցանիշների կայուն աճ կամ, երբ չեն առաջանա փոփոխությունների գծային բնույթը խանգառող որևէ իրադարձություններ, և չի դիտվի շուկայական գործոնների ազդեցություն դիտարկվող ցուցանիշի վրա:

Հաշվարկային ցուցանիշները պահանջում են ճշգրտում Սթյուդենտ (t_a) չափանիշի օգնությամբ (t_a):

$$y_t' = y_t +/- t_a * \sigma_y, \qquad (5)$$

Որտեղ՝

y_t' - ճշտված կանխատեսման ճշգրիտ մեծությունն է,

y_t - հերթական տարում ճշգրտված կանխատեսումը,

t_a - ըստ Սթյուդենտի վստահության գործակիցը,

σ_y - կանխատեսվող ցուցանիշի մեծության միջին քառակուսային շեղումը:

$$y_y = \sqrt{\frac{\sum (y - \overline{y_t})^2}{n - L}}, \qquad (6)$$

Որտեղ՝

y - ցուցանիշների ռետրոսպեկտիվ մեծությունն է ըստ տարիների

$\overline{y_t}$ - ռետրոսպեկտիվ ցուցանիշների մեծությունը, որոնք ստացվել են վերլուծական հավասարումների ճանապարհով,

n - վերլուծվղ փուլերի քանակը,

L - վերլուծվող փոփոխական մեծությունների քանակը (մեր օրինակում L = 2)

Ըստ ստանդարտ աղյուսակների L = 2 և L = 5 համար Սթյուդենտի չափանիշը՝ t_n= 0.981:

Միջին քառակուսային շեղումը ստացվել է 184.6 մլն դրամ: Ճշգրտման մեծությունը կկազմի 181.1 (0.981*184.6): Ճշգրտված կանխատեսվող մեծությունները հետևյալն են (մլրդ դրամ):

2012թ - 1524,6 +/- 181,1
2013թ – 1735,5 +/- 181,1
2014թ – 1946,3 +/- 181,1
2015թ – 2157,1 +/- 181,1
2016թ – 2367,9 +/- 181,1

Ճշգրտման միտումային արժեքի բազային ավելացումը ապահովում է ցուցանիշի լավատեսական կանխատեսում, իսկ նվազեցումը՝ հակառակը: Միտումային մեծությունից շեղման տոկոսը ըստ տարիների համապատասխանորեն կազմում է՝

2012թ – 11,9
2013թ – 10,4
2014թ – 9,3
2015թ – 8,4
2016թ – 7,6

Տոկոսային շեղումների մեծությունները նկարագրում են բիզնեսի ռիսկի մակարդակը:

Եթե կանխատեսվող ցուցանիշներում մեծ է սեզոնային կամ ցիկլիկ բաղադրիչը, ապա անհրաժեշտ է իրականացնել համապատասխան ճշգրտում, որը կապահովի առավել հավաստի կանխատեսում: Այս նպատակով կիրառվում են 2 տեսակի մոդելներ՝

- Ավելացող բաղադրիչով մոդելներ;
- Բազմապատիկ բաղադրիչով մոդելներ:

Սեզոնային տատանումները, որպես կանոն, ի հայտ են գալիս տարվա ընթացքում: Երկար ժամանակային շարքերի կառուցման ժամանակ կարող են առաջանալ ցիկլիկ տատանումներ, այս ամենը պետք է հաշվի առնել կանխատեսման ժամանակ:

Սահուն միջինների մեթոդը սեզոնային և ցիկլիկ տատանումների հարթեցման միջոցով հնարավորություն է տալիս հավասարացնել փաստացի մեծությունների միտումը:

Որքան մեծ է կանխատեսվող ժամանակահատվածը, այնքան մեծ է կանխատեսման խեղաթյուրումը: Բիզնեսի գնահատման ժամանակ կանխատեսվող շրջանը պետք է ընդունել ռետրոսպեկտիվ

ժամանակաշրջանին հավասար: Անշարժ գույքի գնահատման ժամանակ պետք է կենտրոնանալ օբյեկտի մաշվածության վրա՝ հաշվի առնելով նրա ժամանակագրական տարիքը:

Business activities and profitability indicators for prediction methods

The article is about the real estate appraisal income approach. In particular, it notes that the income approach to real estate assessment process, the application is accompanied by a number of problems, including prediction of the profitability indicators. Forecasting process, there are methodological problems, which contributes to the correct solution to a more reliable assessment of the business. Viewing tendency or trend forecasting method.



Տնտ.բ., ասիստենտ՝
Գրիգորյան Ռաֆայել

Մագիստրանտ՝
Գևորգյան Գագիկ



ՀՏԴ 342.9

(ԵՃՇՊՀ, «Էկոնոմիկայի, իրավունքի և կառավարման» ամբիոն)

ՄԱՔՍԱՅԻՆ ԳՈՐԾԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Պատմական Հայաստանում մաքսատուրքեր գանձվել են անցահարկի, մաքսի, բաժի ձևով: Բաժը հարկի տեսակ էր հին և միջնադարյան Հայաստանում: «Բաժ» տերմինը վկայված է Եղիշեի «Պատմության» մեջ, Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոցում», Անանիա Շիրակացու «Խնդրագրքում» և այլն: Միջին դարերում մաքսատուրքին համապատասխանել է անցահարկը կամ մաքսը, որը սկզբում գանձվել է վաճառականներից՝ որոշակի տարածքի սահմանագլխին, կամուրջների գետանցների մոտ և այլն, հետագայում՝ իրացված ապրանքից (վաճառավայրերում): Կիլիկիայի Հայկական Պետությունում օտարերկրյա առևտրականները մաքս էին վճարում տեղափոխվող կամ վաճառվող ապրանքներից՝ որոշակի տոկոսներով. սովորաբար՝ 4%, արտոնությունների դեպքում՝ 1–2 %: Բացի տոկոսային հաստատուն մաքսատուրքերից, կիրառվում էր մասնակի մաքսատուրք, որը գանձվում էր որոշ ապրանքներից (գինի, յուղ, անասուններ, ոսկի, թանկարժեք քարեր, պղինձ, երկաթ, բամբակ, կտորեղեն և այլն): Մաքսատուրքեր էին գանձվում նաև կիրճերով, լեռնանցքներով, կամուրջներով, գետանցներով, ֆեոդալների կամ Կիլիկիայի ողջ տարածքով կատարվող փոխադրումների, շուկայում վաճառասեղան ունենալու համար, նավահանգիստներում խարսխվող նավերից, օտարերկրյա վաճառականների անձնական իրերի տեղափոխման համար:

14-18-րդ դդ. Հայաստանում մաքսատուրքերը եղել են տարատեսակ և կամայական: Յուրաքանչյուր նվաճող կիրառում էր որոշակի մաքսային տարիֆ, փոփոխում դրանք՝ իր շահերից ելնելով: Մաքսակետերը ցրված էին առևտրային բոլոր ճանապարհների վրա և այնքան շատ էին, որ մաքսատուրքեր գանձելու իրավունքը հաճախ կապալով տրվում էր մասնավոր անձանց:

Հայաստանի մաքսային համակարգի կազմավորումը սկսվեց Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացնելու՝ 1828թ. փետրվարի 28-ի Թուրքմենչայի պայմանագրով: 1828թ. մարտի 21-ին Նիկոլայ I-ի հրամանագրով ստեղծվեց Հայկական մարզը, որի մեջ մտան Երևանի ու Նախիջևանի գավառները և Օրդուբադի շրջանը: Մարզի վարչության պետ նշանակվեց գեներալ-մայոր Ա. Ճավճավաձեն: 1830-1838թթ. Հայկական մարզի պետն էր իշխան Բ. Բեհբութովը: Այդ տարիներին սկսեցին ձևավորվել պետական կառավարման մարմինները, որոնց շարքում՝ նաև մաքսային համակարգը: 1831թ. արդեն գործում էին Նախիջևանի մաքսատունը և Իգդիրի մաքսային ուղեկալը, 1834-ին՝ Էրիվանի մաքսատունը, 1836-ին՝ Գյումրիի մաքսատունը, Կուլպի և Մեղրի մաքսային ուղեկալները: Այդ տարիներին մաքսատները ենթարկվում էին Անդրկովկասյան մաքսային տարածքին, որն էլ մտնում էր Ֆինանսների նախարարության արտաքին առևտրի դեպարտամենտի կազմի մեջ: 1835թ. մաքսային պահազորը վերափոխվեց սահմանապահ պահազորի: Լինելով զինվորական կազմակերպություն՝ սահմանապահ

պահազորի գլխավոր ղեկավարումը քաղաքացիական պետական պաշտոնյաների ձեռքում էր: Սահմանապահ տարածքը (օկրուգ) ենթարկվում էր Ֆինանսների նախարարության արտաքին առևտրի դեպարտամենտին: Տեղերում սահմանապահ պահազորը ենթարկվում էր մաքսային տարածքի պետին: Անդրկովկասում սահմանի վրա կազմավորված էր նաև պահպանաջոկատ, որը հիմնականում կատարում էր սանիտարա-կարանտինային հսկողություն: 1864թ. հոկտեմբերի 29-ին Ֆինանսների նախարարության արտաքին առևտրի դեպարտամենտը վերափոխվեց մաքսատուրքերի դեպարտամենտի:

1890-ականներին Ռուսաստանի մաքսային համակարգում տեղի ունեցան մի շարք բարեփոխումներ: 1893թ. սահմանապահ պահազորը դուրս բերվեց մաքսային գերատեսչությունից, որպես առանձին սահմանապահ զորամիավորում (կորպուս) ներառվեց Ֆինանսների նախարարության կազմում, որտեղ նախարարը գլխավոր ղեկավարն էր՝ «շեֆ» կոչումով: 1896-ից Կովկասյան սահմանապահ պահազորի թվակազմը ավելացավ: Սահմանը պահպանվում էր կոզակային զորամասերով, տեղական միլիցիայի ջոկատներով, մաքսային աստիճանավորներով: 1890 թ.-ից սկսվեց մաքսային համակարգի վերազինումը. «Բերդան» հրացանները փոխարինվեցին նոր, այսպես կոչված՝ «Տրյոխլինեյկաներով», «Սմիթ Վինսոն» ատրճանակները՝ «Նագան» տեսակի ատրճանակներով: 19-րդ դարի վերջին Ռուսաստանի պետական տուրքերի համակարգում մաքսատուրքերը զբաղեցնում էին երկրորդ տեղը՝ ոգելից խմիչքի վաճառքից ստացված օգուտներից հետո, կազմելով պետական բյուջեի եկամտային մասի 14.5%-ը: Ընդ որում՝ մաքսային գերատեսչության և սահմանապահ պահազորի ընդհանուր ծախսերը կազմում էին Ռուսաստանի պետական բյուջեի եկամուտների ընդամենը 8%-ը:

1904թ. Ռուսաստանում ընդունվեց մաքսային նոր կանոնադրություն, որի համաձայն՝ մաքսային համակարգը կազմված էր պահակակետերից, անցակետերից, ուղեկալներից, մաքսատներից, տեղամասային և տարածքային մաքսային վարչություններից, որոնք էլ ենթարկվում էին Ֆինանսների նախարարության մաքսատուրքերի դեպարտամենտին: Նույն կանոնադրությամբ, սահմանայինից բացի, գոյություն ունեին նաև ներքին մաքսատներ՝ երկրի ներսում տեղափոխվող ապրանքների մաքսային զննումը կատարելու համար: Այդ տարիներին հիմնական մաքսանենգ ապրանքներն էին սպիրտը, ծխախոտը, մետաքսյա, բամբակյա և բրդյա գործվածքը, ոսկյա և արծաթյա իրերն ու ռուսական պարտատոմսերը: Մաքսային աշխատակիցների կաշառվածությունը կանխելու համար մշակվել էր նյութական խրախուսման համակարգ: Բռնագրավված ապրանքները ենթակա էին վաճառքի՝ հրապարակային աճուրդով, ընդ որում՝ ստացված գումարի 45%-ը տրվում էր բռնագրավողներին: 30 տարվա ընթացքում (1883-1913թթ.) մաքսային օգուտը, ավելի ստույգ մաքսատուրքը ներմուծվող ապրանքներից, ավելացավ միջինը 198%-ով, իսկ ընդհանուր հարկերը՝ 185%-ով:

Մաքսային գործը սերտորեն կապված է պետության և պետականության առկայության հետ: Պետականության ծագման ու զարգացման ավելի քան հազարամյա պատմությունը միաժամանակ նաև մաքսային գործի ծագման ու զարգացման պատմությունն է[6]: Մաքսային գործի բովանդակությունն ու էությունը կանխորոշվում է պետության պատմական ձևով, նրա հասարակական կարգով կամ պետության հասարակական–տնտեսական հարաբերություններով: "Ազգի ներքին պատմությունը չի կարող ճանաճվել համակողմանի և ամբողջական, եթե այնտեղ չեն ներկայացվում մաքսային քաղաքականության կրած շարունակական փոփոխությունները՝ դրանք պայմանավորող պատճառների հետ միասին"[7] Մաքսային գործի բովանդակությունն ու էությունը Հայաստանը կարճատև պետականություն է ձեռք բերել առաջին անկախացումից հետո: Սակայն այդ շրջանում մեր երկրի իրավական դաշտի թերզարգացվածության պատճառով դեռևս գոյություն չուներ մաքսային ոլորտը կարգավորող իրավական բազա: Ուստի Հայաստանում մաքսային գործի զարգացման պատմությունը պետք է սկսել ուսումնասիրել այն պահից, երբ մեր երկիրը դարձավ ԽՍՀՄ-ի անդամ: Առաջին անգամ մաքսային կանոնակարգ հաստատվել է 1824թ.–ի դեկտեմբերի 12-ին, ըստ որի մաքսային գործի էությունն արտահայտվում էր «…երկրի տարածքում մաքսանենգության դեմ պայքարով»: Այդ կանոնակարգով ստեղծվեց կառավարման մի մարմին՝ մաքսային գլխավոր վարչություն, որը պատասխանատու էր մաքսային միջոցառումների գծով պլանների մշակման և մաքսանենգության դեմ պայքարի համար: Այն ուներ իր առանձնացված ստորաբաժանումները, բաժինները՝ վարչական, սակագնային, դատական, մաքսանենգության դեմ պայքարի, վիճակագրական և այլն: Ընդ որում, մաքսային գլխավոր վարչություններ ստեղծվեցին բոլոր

[6] Основы таможенного дела: Учебное пособие В 7 вып. 1. Развитие таможенного дела в России. – М.: РТА, 1995. – с. 5-36.
[7] Лодыженский К. История русского таможенного тарифа. – СПб.: Типография В.С. Балашева, 1886. – с. 3-4.

հանրապետություններում, իսկ կենտրոնական կառավարման մարմին հաստատվեց արտաքին առևտրի ժող. կոմիտեն: Համաձայն 1928թ. ԽՍՀՄ մաքսային օրենսգրքի հոդված 1 և 2-ի մաքսային գործը հանդես էր գալիս որպես մաքսային մարմինների կողմից արտաքին առևտրում պետության մենաշնորհի պահպանման նկատմամբ հսկողություն: 1964թ.–ի մայիսի 5-ին ընդունվել է նոր մաքսային օրենսգիրք, որն էական փոփոխություններ է մտցրել մաքսային մարմինների կառավարման համակարգում: 1928թ. ընդունվածի համեմատ վերջինս բաղկացած էր 120 հոդվածներից, որոնք ներառված էին երեք բաժիններում: Համաձայն նոր մաքսային օրենսգրքի հոդված 2-ի մաքսային գործն իր մեջ ներառում էր հետևյալ տարրերը՝ «...պետության մենաշնորհի պահպանման նկատմամբ վերահսկողությունը, մաքսային գործընթացների իրականացումը, մաքսանենգության և մաքսային կանոնների խախտման դեմ պայքարը»[8]: Որպես կառավարման բարձրագույն մարմին սահմանվեց արտաքին առևտրի նախարարությունը, որի կազմի մեջ էր մտնում մաքսային գլխավոր վարչությունը: Կառավարման հիմնական նպատակ սահմանվեց մաքսանենգության դեմ պայքարը արտաքին առևտրի ոլորտում և պետական մենաշնորհի նկատմամբ վերահսկողությունը: Սահմանվեց նաև մաքսային գործի կառավարման երկմակարդակ համակարգ՝

1. մաքսային գլխավոր վարչություն,
2. մաքսատներ ու մաքսակետեր, որոնք գտնվում էին մաքսային գլխավոր վարչության ենթակայության տակ:

Արտաքին առևտրի նախարարությունն էր ստեղծում և լուծարում մաքսատները ու մաքսակետերը: Հաջորդ փոփոխությունը տեղի է ունեցել 1986թ. սկզբին: Մաքսային գլխավոր վարչությունը վերաձևակերպվեց Մինիստրների Խորհրդին կից մաքսային վերահսկողության վարչության, որն առանձին կառավարման մարմին էր պետական կառավարման համակարգում: Վերջինիս գործառույթը մնաց նույնը, ինչ որ նախկինում էր, այն էր՝ արտաքին առևտրի ոլորտում պետության մենաշնորհի պահպանումը: Այս ժամանակաշրջանում ավելացավ մաքսատների և մաքսակետերի թիվը:

1989թ. առաջին անգամ մաքսային գործում կարևորվեց ոչ թե պետական մենաշնորհի պահպանումը, այլ խնդիր դրվեց մշակել նոր մաքսային քաղաքականություն մաքսային վերահսկողության ժամանակակից մեթոդներում: Քանի որ այդ ժամանակաշրջանում օրենսդրական դաշտը չէր բավարարում նոր բարեփոխումների իրականացմանը, ապա 1991թ. մշակվեց նոր մաքսային օրենսգիրք, որի համաձայն «Մաքսային գործ» հասկացությունը համապատասխանում էր այդ ժամանակաշրջանին բնորոշ արտաքին առևտրի ընդլայնմանը և արտաքին տնտեսական գործունեության ազատականացմանը: Մաքսային գործը դիտվում էր որպես մաքսային քաղաքականության իրականացման միջոց և ներառում էր «երկրի մաքսային սահմանով ապրանքների և այլ առարկաների տեղափոխման կարգը, մաքսավճարների գանձումը, մաքսային ձևակերպումները, մաքսային հսկողությունը և մաքսային քաղաքականության իրագործման այլ միջոցները»: Ձևավորվեցին հետևյալ նոր բաժինները՝ օպերատիվ, ուղևորային, փոստային, մաքսանենգության դեմ պայքարի, կառավարման տեխնիկական միջոցների և արտասահմանյան կազմակերպությունների բեռների վերահսկողության:

Գործող համակարգը եռամակարդակ էր՝

1. կենտրոնական մաքսային մարմին,
2. շրջանային մաքսային մարմին,
3. մաքսատներ

Առաջին մակարդակում ԽՍՀՄ Մաքսային կոմիտեն էր:

ՀՀ մաքսային համակարգն ստեղծվել է 1992թ. հունվարի 4-ին՝ ՀՀ նախագահի հրամանագրով: Իր գործունեության առաջին տարիներին այն գործել է որպես մաքսային վարչություն: 1999թ. հուլիսից ընդգրկվել է ՀՀ պետական եկամուտների նախարարության կազմում: ՀՀ կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտեն ստեղծվել է 2001թ. ՀՀ կառավարության 2001թ. հուլիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտե ստեղծելու մասին» թիվ 603 որոշմամբ: Նույն որոշմամբ հաստատվել է նաև ՀՀ կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտեի կենտրոնական ապարատի կառուցվածքը: 2008թ-ի օգոստոսի 20-ի ՀՀ նախագահի ստորագրած հրամանագրի համաձայն, ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայությունն ու ՀՀ

[8] Ա. Ճուղուրյան, Մաքսային գործի հիմունքներ, Երևան, 2007թ., էջ 29:

կառավարությանն առընթեր մաքսային ծառայությունը միաձուլվել են՝ վերակազմակերպելով ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

Համաձայն 2000թ. հուլիսի 6-ին ընդունված ԱՀԿ պահանջներին համապատասխանող մաքսային օրենսգրքի՝ ՀՀ մաքսային գործն ընդգրկում է ՀՀ մաքսային սահմանով ապրանքների և տրանսպորտային միջոցների տեղափոխման կարգը և պայմանները, մաքսային վճարների գանձումը, մաքսային ձևակերպումները, մաքսային հսկողությունը և մաքսային քաղաքականության իրագործման այլ միջոցները: Ելնելով այս ձևակերպումից՝ մաքսային գործի կառուցվածքը կարելի ներկայացնել հետևյալ կերպ՝

- մաքսային սահմանով ապրանքների և տրանսպորտային միջոցների շարժ,
- մաքսային գործընթացներ, մաքսային ռեժիմներ,
- մաքսատուրքեր,
- մաքսային հսկողություն,
- ապրանքների, տրանսպորտային միջոցների տնօրինում,
- մաքսային մարմինների գործունեության և անգործության արդյունքում առաջացած բողոքների նկատմամբ հսկողություն:

ARTICLE OF
“DEVELOPMENT OF CUSTOMS DUTY JOB IN REPUBLIC ARMENIA”

In history of Armenia, the customs duties are taxes that charged on the importation or exportation, the way of customs, and also custom-house duties (Baj). The custom-house duties (Baj) are kind of taxes which describes in Ancient and Mediterrian Armenia. The term of “Baj” are mentioned in “History” of Exishe (Եղիշեի), “Against herecy” of Yeznik Koghbattsu, “Xndragrqum” of Anania Shirakatsu, etc. In middle ages, the customs duties are corresponded to the importation and exportation or customs, of which, in the beginning are levied from merchants in some of the borderline, near to the bridges when crossing river, in the future, from sold goods (in place of merchant). In Armenian state of Cilicia, foreign merchants had to pay duty on goods for sold or transferred by certain percentage, typically in 4%, in case of benefits 12%.

Գրականություն

1. Մարկոսյան Ա.: Տնտեսական անվտանգության հիմնախնդիրներ. մեթոդաբանություն և արդյունքներ.-Եր.: “Նորավանք” ԳԿՀ, 2005, էջ 6-7:
2. Վ. Բոստանջյանի հարցազրույցը banker.am կայքին: www. banker.am, ,Հյուրեր՝ բանկիրներե:
3. Основы таможенного дела: Учебное пособие В 7 вып. 1. Развитие таможенного дела в России. – М.: РТА, 1995. – с. 5-36.



Գիտ. ղեկավար, տ.գ.թ.՝
Աննա Բատիկյան

Մագիստրանտ՝
Օլգա Աբովյան



ՀՏԴ 336.717.71 (ԵՃՇՊՀ, «Էկոնոմիկայի, իրավունքի և կառավարման» ամբիոն)

ԿՈՄՈՒՆԱԼ ՎՃԱՐՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՈՒՄԸ ՀՀ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐՈՒՄ

Սույն հոդվածում վերլուծվել է բանկերի կողմից կոմունալ վճարների հավաքագրման անհրաժեշտությունը և վերջինիս առավելությունները հասարակության և բանկային համակարգի համար:

Բանկային գործունեության առանձնահատկություններից մեկը բանկերի սեփական կապիտալի սահմանափակությունն է: Հետևաբար բանկերի գործունեության մեջ կարևոր դեր ունեն ներգրավված միջոցները:

Ռեսուրսային բազայի ձևավորման բազմաթիվ աղբյուրներից սույն հոդվածում ուսումնասիրվել է կոմունալ կազմակերպությունների հաշիվները՝ որպես ռեսուրսային բազա, վերջինիս առանձնահատկությունները, առավելությունները և թերությունները:

Բանկերի կողմից միջոցների ներգրավման նպատակահարմարությունը որոշվում է ելնելով մի շարք գործոններից՝ միջոցների արժեքից, ծավալից, դրանց ներգրավման կայունությունից և այլն:

Բանկերի համար ծախսատարության մակարդակից ելնելով ռեսուրսների ամենագրավիչ աղբյուրներից են հաշվարկային և ընթացիկ հաշիվները, քանի որ տվյալ միջոցները ստացվում են ավելի հեշտ և ավելի էժան այլ աղբյուրներից փոխառված միջոցների համեմատ[9]:

Բանկային համակարգի կողմից էժան միջոցների ներգրավումը ունի մեծ կարևորություն, որովհետև էժան միջոցները նշանակում են էժան պասիվներ: Հակառակ դեպքը կհանգեցնի պասիվների թանկացմանը:

Կայունության տեսանկյունից արտասահմանյան մասնագետների կողմից անցկացված վերլուծությունը ցույց է տվել, որ ամենաշատ կայունություն ունեն ցպահանջ դեպոզիտները: Այս տեսակի դեպոզիտների մեծությունը տոկոսադրույքից կախված չէ: Դրանց ներգրավումն այս կամ այն բանկի կողմից որոշվում է այնպիսի գործոններով, ինչպիսիք են որակյալ և արագ սպասարկումը, բանկի հուսալիությունը, ծառայությունների տարատեսակությունը, բանկի մասնաճյուղերի ցանցի տարածվածությունը: Բացելով հաշվարկային կամ ընթացիկ հաշիվ բանկում, որը բավարարում է վերը նշված պահանջներին, հաճախորդները բանկերի հետ հաստատում են երկարաժամկետ կապեր, պարբերաբար ավելացնելով և պակասեցնելով բանկերի հաշիվները[10]:

Իսկ որպես թերություն հանդիսանում է այն հանգամանքը, որ հաշվարկային և ընթացիկ հաշիվները օժտված են մեծ շարժունակությամբ: Դրանց մեծ տեսակարար կշիռը ռեսուրսային բազայի մեջ թուլացնում է բանկի իրացվելությունը: Ակնհայտ է, որ որքան մեծ է տատանվող ռեսուրսների մասնաբաժինը ռեսուրսների ընդհանուր ծավալի մեջ, այնքան ավելի մեծ է իրացվելիության նկատմամբ պահանջը: Այսինքն բանկին հարկավոր կլինեն ավելի շատ իրացվելի ակտիվներ, որոնք բանկին եկամուտ չեն բերում, նույնիսկ երբեմն բանկերի համար ծախսատար են: Չնայած ցպահանջ հաշիվների գերազանցումը տալիս է տնտեսում, քանի որ դրանք ամենաէժան ներգրավվող միջոցներն են, բայց դրանց մեծ տեսկարար կշիռն էլ կարող է առաջացնել խնդիրներ իրացվելիության հետ:

Առևտրային բանկի գործունեության հիմնական նպատակը հանդիսանում է առավելագույն շահույթի ստացումը:

Բանկերին շահույթի աճը հնարավորություն է տալիս ընդլայնել գործունեությունը, գործառույթների և ծառայությունների տեսականին, ապահովել կապիտալի և պահուստի աճ: Բանկի շահույթի աճը ավանդատուների (ներդրողների) մոտ տպավորություն է ստեղծում բանկի ապահովության և հուսալիության մասին:

Բանկերը կոմունալ վճարների հավաքագրվող գումարների մեծությունից կախված ստանում են կոմիսիոն եկամուտներ:

Կոմունալ վճարների հավաքագրումը հանդիսանում է բանկերի համար նաև կանխիկ դրամական միջոցների աղբյուր: Իսկ բանկերը պետք է կազմակերպեն ներբանկային կանխիկ դրամական շրջանառությունը ռացիոնալ, այսինքն առավելագույնս բավարարեն հաճախորդների կանխիկի նկատմամբ պահանջները իրենց սեփական դրամարկղային մուտքերի հաշվին՝ չդիմելով Կենտրոնական բանկին: Կանխիկ դրամական միջոցների առկայությունը բանկերի համար կարևոր նշանակություն ունի, քանի որ կանխիկ դրամական միջոցները հանդիսանում են բանկի ամենաիրացվելի միջոցները:

Բանկերի պահանջարկը ամենաիրացվելի միջոցների՝ կանխիկի նկատմամբ, տարբեր բանկերում տարբեր է: Այն կախված է տարբեր գործոններից՝ հաճախորդներից, սեզոնային տատանումներից, բանկի մասնաճյուղերի գտնվելու վայրից, բանկի դեպոզիտների կառուցվածքից և այլն:

Ուսումնասիրելով իրացվելիության հարցը կարելի է ավելացնել, որ կանխիկի պակասուրդը կարող է դառնալ բանկի փաստացի սնանկության պատճառ, այսինքն բանկերի մոտ կարող է առաջանալ անկարողություն կատարելու իրենց պարտականությունները: Հետևաբար բանկերը միշտ զգում են կանխիկ դրամական միջոցների կարիք:

Աղյուսակ 1: Բանկային համակարգի կանխիկ դրամի մուտքի և ելքի տարբերությունը մլն. դրամ

	2006թ.	2007թ.	2008թ.	2009թ.	2010թ.
Առաջին	-14,009	-10,711	-24,525	21,926	20,322

[9] Жарковская Е. П. Финансовый анализ деятельности коммерческого банка :учебник. М. : Издательство «Омега_Л», 2010. — 325 с. ст. 130

[10] Лаврушин. О.И Банковское дело Учебник . - 2-е изд- М.: Финансы и. статистика, 2005.-672с: ст. 143

եռամսյակ					
Առաջին կիսամյակ	-886	15,026	--11,034	1,076	23,831
9 ամիս	27,656	51,570	-16,434	-2,136	16,854
Տարի	71,566	123,433	-26,230	-29,884	-15,387

Աղյուսակ 1-ում ներկայացված են 2006-2010թթ. բանկային համակարգում կանխիկ միջոցների մուտքերի և ելքերի տարբերությունը[11]:

Դիտելով աղյուսակի տվյալները միանգամայն ակնհայտ է դառնում, որ 2006-2010թթ. տարիների ընթացքում ավելի քիչ կանխիկ դրամական միջոցների մուտք է գրանցվել, քան ելք, հետևաբար ակնհայտ է, որ բանկային համակարգը կանխիկ դրամական միջոցների նկատմամբ ունի մեծ պահանջարկ և լրացուցիչ կանխիկ միջոցները բացարձակ չեն խանգարի բանկերին:

Բանկերը կոմիսիոն եկամուտ ստանում են ոչ միայն հավաքագրված միջոցներից կամ կոմունալ ոլորտը ներկայացնող կազմակերպությունների բանկային հաշիվներով կատարվող գործառնություններից, այլև կանխիկ դրամական միջոցների տրամադրումից: Այս տեսանկյունից բանկերի դերը կարելի է որակել որպես միջնորդի, քանի որ վերջիններս հավաքագրում են դրամական միջոցները և տրամադրում այն հաճախորդներին, որոնք ունեն դրա կարիքը:

Այժմ ուսումնասիրենք ՀՀ բանկային համակարգում կոմունալ վճարների հավաքագրման գործընթացը իբրև նոր հաճախորդների ներգրավման հնարավորություն: Ընդ որում հաճախորդների բազայի կայունությունը և կարողությունը ներգրավել նոր հաճախորդների հանդիսանում է որոշիչ գործոն բանկի կայուն զարգացման համար երկարաժամկետ հեռանկարում:

Հիմնվելով, օրինակ, գազասպառող խմբերի վիճակագրության վրա կարելի է հստակ նշել, որ բնակչությունը 2009թ-ին սպառել է միայն գազի 33.29 %-ը, 2010թ-ին՝ 32.82 %-ը, իսկ գազասպառման մնացյալ մասը բաժին է ընկնում էներգետիկ, արդյունաբերական, բյուջետային կազմակերպություններին, ինչպես նաև գազալցակայաններին[12]: Հետևաբար, հաշվի առնելով, որ իրավաբանական անձանց կանխիկ գործառնությունները օրենքով սահմանափակված են և բանկերում հաշիվների առկայությունը պարտադիր է, տրամաբանական է կարծել, որ իրավանբանական անձինք կոմունալ վճարումները կատարում են իրենց բանկային հաշիվների միջոցով և հաճախորդին (լինի դա ֆիզիկական կամ իրավաբանական անձ)անհարմար է վերցնել վարկ մի բանկում, տալ կանխիկ եկամուտը մեկ ուրիշ բանկում, և կատարել վճարումներ երրորդում: Այդ պատճառով նա կտա առավելություն այն բանկին, որտեղ այս բոլոր գործառույթները հասանելի են [13]:

Իրավաբանական և ֆիզիկական անձանց ներգրավումը կոմունալ վճարումների հավաքագրման գործընթացին թույլ է տալիս բանկին նրանց հետ հաստատել գործարար կապեր, որոնք հետագայում կարող են վերածվել այլ ավելի սերտ համագործակցության: Նման կերպ ստեղծված հարաբերությունները հանդիսանում են բավական ամուր: Քանի որ բանկերի հետ շփումը կոմունալ վճարումներ կատարելիս պարբերական է, կախված ծառայության որակից հաճախորդը կայացնում է որոշում բանկի հետ հետագա համագործակցության վերաբերյալ: Ընդհանրապես բանկերի հաշվարկադրամարկղային սպասարկման կազմակերպումը, որի մեջ մտնում է նաև կոմունալ վճարումների ընդունումը, հանդիսանում է ցանկացած բանկի այցեքարտը:

Այս ամենին կարելի է ավելացնել, որ ցանկացած բանկի աշխատանք պայմանավորված է ներգրավված միջոցների ծավալից, դրանց ներգրավման կայունությունից, հաճախորդների ծավալից, նրանց ավելացման հնարավորություններից: Հետևաբար բանկերի միջև մրցակցության աճը ստիպում է պայքարել և կարևորել յուրաքանչյուր հաճախորդի՝ լինի դա իրավաբանական կամ ֆիզիկական անձ: Ահա թե ինչու այսօր բանկերը ընդլայնում են կոմունալ վճարների հավաքագրման եղանակները՝ փորձելով մյուս բանկերից ավելի հարմար և մատչելի լինել իրենց հաճախորդների համար: Չէ՞ որ կոմունալ վճարների հավաքագրումը բանկերի համար հանդիսանում է ռեսուրսային բազայի, կանխիկ դրամական միջոցների և եկամտի աղբյուր, ինչպես նաև հաճախորդների ներգրավման միջոց:

Сбор коммунальных платежей в коммерческих банках

В данной статье анализируется необходимость сбора коммунальных платежей через банковскую систему и все пользы, которие дает сбор коммунальных платежей обществу и банковской системе.

Գրականություն

[11] www.cba.am/ Դրամավարկային միջնորդության համակարգի հիմնական ցուցանիշներ
[12] «ՀԱՅՌՈՒՍԳԱԶԱՐԴ» ՓԲԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2010
[13] ՀՀ օրենքը դրամարկղային գործառնությունների մասին

1. Жарковская Е. П.] Финансовый анализ деятельности коммерческого банка :учебник. М. : Издательство «Омега_Л», 2010. — 325 с. ст. 130
2. · Лаврушин. О.И Банковское дело Учебник . - 2-е изд- М.: Финансы и. статистика, 2005.-672с: ст. 143
3. www.cba.am/ Դրամավարկային միջնորդության համակարգի հիմնական ցուցանիշներ
4. «ՀԱՅՈՒՍԳԱԶԱՐԴ» ՓԲԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2010
5. ՀՀ օրենքը դրամարկղային գործառնությունների մասին
6. Костерина Т.М. Банковское дело / Московский международный институт эконометрики, информатики, финансов и права. 2002
7. Лаврушин. О.И ДЕНЬГИ. КРЕДИТ. БАНКИ
8. Буевич СЮ., Корол¸в О.Г. Анализ финансовых результатов банковской деятельности : учебное пособие- 2-е изд. - М.: КНОРУС, 2005. -160 с.
9. www.armstate.am



Գիտ. ղեկավար, տ.գ.թ.՝
Արմեն Վարդանյան

Մագիստրանտ՝
Աղաբեկ Ավետիսյան



ՀՏԴ 332.62 (ԵՃՇՊՀ, «Էկոնոմիկայի, իրավունքի և կառավարման» ամբիոն)

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԾԱԽՍԱՅԻՆ ՄԵԹՈԴԻ ԷՈՒԹՅՈՒՆԸ

Հոդվածում ներկայացված է անշարժ գույքի գնահատման ծախսային մեթոդի էությունն ու դրան առնչվող հիմնախնդիրները: Առավել մանրամասն խոսվում է այն իրավիճակների մասին, երբ գնահատումն իրականացնելիս հարկ է առաջնորդվել հենց գնահատման ծախսային մեթոդի առաջադրած ուղիներով, ինչպես նաև ներկայացված է ծախսային մեթոդի որոշակի սահմանափակումների մասին:

Շուկայական տնտեսության պայմաններում գնահատումն իրականացնելու պահանջմունք է առաջանում, երբ անշարժ գույքի շուկայական արժեքի մեծության վերաբերյալ օբյեկտիվ հիմնավորված ենթադրությունն անհրաժեշտ է առքուվաճառքի գործարքների, վարձով տրման, ձեռնարկության բաժնետիրացման և ունեցվածքային մասնաբաժինների վերաբաշխման, նոր բաժնետերերի ներգրավման և լրացուցիչ բաժնետոմսերի էմիսիայի, անշարժ գույքի հարկման և ապահովագրման, ունեցվածքի գրավադրման և ինվեստորների ներգրավման, գույքային իրավունքների իրականացման հետ կապված ժառանգության իրավունքի, դատավճիռների և այլ օպերացիաների կատարման դեպքում:

Որպես այդ օպերացիաների սուբյեկտներ հանդես են գալիս անշարժ գույքի օբյեկտների անհատական և կոլեկտիվ սեփականատերերը, բանկերը և ֆինանսական այլ ընկերությունները՝ պոտենցիալ ներդրողները, ներդրող փնտրող սեփականության ցանկացած ձև ունեցող ձեռնարկությունները, ապահովագրական ընկերությունները, գույքի և սնանկացման, հողային ռեֆորմի գծով պետական կառույցները և այլ վարչական մարմինները, այսինքն՝ ինստիտուցիոնալ, իրավաբանական և ֆիզիկական անձանց բոլոր կատեգորիաները:

Հայտնի են անշարժ գույքի օբյեկտների՝ շենքեր, շինություններ, հողակտորներ, բնակարաններ և այլն, գնահատման մի քանի տասնյակ մեթոդներ: Գնահատման այս կամ այն մեթոդի ընտրությունը կախված է մի շարք գործոններից, այդ թվում նաև օբյեկտի բնույթից, գնահատման նպատակից և ֆունկցիայից, փորձագետի տիրապետման տակ եղած ինֆորմացիայից: Եթե անշարժ գույքի օբյեկտն ապահովում է կայուն եկամուտ,

ապաավելի ընդունելի է համարվում կապիտալիզացիայի մեթոդը, եթե գնահատվում է բնակարան և բնակարանային շուկայում նմանատիպ բնակարանների փաստացի վաճառքների վերաբերյալ առկա են բավարար քանակությամբ շուկայական տվյալներ, ապա գնահատման համար ավելի նպատակահարմար է օգտագործել վաճառքների ուղղակի վերլուծության մեթոդը, իսկ եթե գնահատվող օբյեկտը գտնվում է անշարժ գույքի շուկայի «պասիվ» հատվածում, ապա ավելի արդյունավետ է համարվում օգտագործել ծախսային մոտեցման մեթոդներից որևէ մեկը:

Մեթոդի ընտրությունը կախված է նաև գնահատման ֆունկցիայից: Եթե գնահատման արդյունքներն անհրաժեշտ են օբյեկտի ապահովագրման համար, ապա ավելի նպատակահարմար է օգտագործել ծախսային մոտեցման մեթոդներից մեկը: Եթե գնահատման արդյունքներն անհրաժեշտ են անշարժ գույքի օբյեկտում ներդրումներ կատարելու համար, ապա ավելի լավ է օգտագործել եկամտային մոտեցման մեթոդներից մեկը:

Անշարժ գույքը ծախսային մոտեցմամբ գնահատելիս գնահատողները գնահատում են տվյալ սեփականության լրիվ վերարտադրության արժեքը կամ լրիվ փոխհատուցման արժեքը, այնուհետև նրանից հանում են շենքերի և շինությունների գնահատված գումարային մաշվածությունը: Այնուհետև ստացված գումարին ավելացվում է հողամասի շուկայական արժեքը՝ հողամասը համարելով դատարկ, շինություններից ազատ: Արդյունքը հանդիսանում է սեփականության գնահատված արժեքը:

Շատ դեպքերում եկամուտ բերող սեփականության արժեքն ավելի լավ է չափվում նրանից սպասվող եկամտի գումարով, քանի որ ակտիվների ձեռք բերման ծախսերը չեն արտացոլում կանխատեսվող եկամուտների արժեքը: Համապատասխանաբար, կարիք չկա ավելորդ տեղը հիմնվել ծախսային մոտեցման վրա, որպես եկամուտ բերող սեփականության արժեքի որոշման մեթոդ: Այդուհանդերձ, մի շարք դեպքերում այն նույնպես կիրառվում է:

Իրավիճակները, որոնցում կարող է կիրառվել ծախսային մոտեցումը հետևյալներն են.

- Նոր շինարարության տեխնիկատնտեսական վերլուծություն
- Հողի օգտագործման ամենալավ և ամենաարդյունավետ տարբերակի որոշում
- Վերականգնում
- Արժեքի վերջնական համաձայնեցում
- Ինստիտուցիոնալ և հատուկ նշանակության կառույցներ
- Գնահատումը պասիվ շուկաներում
- Ապահովագրման նպատակներ:

Ծախսային մոտեցման օգտագործումը սկսվում է վերարտադրության կամ փոխարինման լրիվարժեքի որոշումից: Ինչպեսնշվել էր նախկինում, այս 2 տերմիններն իրար հետ փոխադարձ կապված չեն: Վերարտադրությունը՝ դա գնահատվող սեփականության ճշգրիտ պատճենի կառուցումն է: Փոխարինումը դա մի օբյեկտի շինարարություն է, որն ունի նուիյնպիսի ֆունկցիոնալ օգտակարություն, բայց կառուցված է ժամանակակից ստանդարտներով, ճաշակով և դիզայնով: Օրինակ 50 տարի առաջ կինոթատրոնները կառուցվում էին շքեղ ջահերով, բազկաթոռների հարուստ պաստառով, մարմարե սանդուխքներով, բարձր առաստաղով, լայնարձակ միջանցքներով և այլնով: Ժամանակակից կինոթատրոններում առկա են ավելի ցածր առաստաղներ և փոքր միջանցքներ, ինչը թույլ է տալիս տնտեսել շինարարության և էներգոմատակարարման ծախսերը: Ժամանակակից կինոթատրոնը կրում է լուսավորության, բազկաթոռների, սանդուխքների նվազագույն ծախսեր, իսկ հատակի ծածկը պատրաստում են՝ հաշվի առնելով նրանց բացառիկ ֆունկցիոնալ նշանակությունը և շահագործման հարմարավետությունը, այլ ոչ թե որպես շքեղության պարագա:

Ժամանակակից կինոթատրոնի նկատմամբ պահանջն է ունենալ ավելի լավ ակուստիկա և ավելի հուսալի հակահրդեհային անվտանգություն: Այն կարող է կառուցված լինել միջնապատերով, ինչը թույլ կտա միաժամանակ ցուցադրել 2 կամ ավելի ֆիլմեր: Այնպես որ վերարտադրել 50 տարվա կինոթատրոնը կնշանակի կառուցել նմանօրինակը, փոխարինել նրան՝ կնշանակի կառուցել ժամանակակից կինոթատրոն:

Դասական ծախսային մոտեցման կիրառումը, սովորաբար, սկսվում է վերարտադրության լրիվ արժեքի գնահատումից, բայց շատ դեպքերում ավելի նախընտրելի է փոխարինման լրիվ արժեքը: Օրինակ գնահատողը կարող է որոշել 50-ամյա կինոթատրոնի վերարտադրության լրիվ արժեքը, իսկ այնուհետև այդ գումարից հանել նրա բոլոր ֆունկցիոնալ անհամապատասխանության ուղղումները: Այնինչ, այժմյան պայմաններում, դա ռեալ չէ: Խնդրի հեշտացման համար գնահատողը կարող է գնահատել փոխարինման արժեքը: Տվյալ դեպքում գնահատողը չիմտցնում ֆունկցիոնալ անհամապատասխանության ուղղումներ, քանի որչի կարելի հանել մի բան, որը հաշվի առնված չէ փոխարինման արժեքի գնահատման մեջ: Երբ ֆունկցիոնալ

անհամապատասխանություններն այսքան բացահայտ են և հնարավոր չէ դրանք չափել, իսկ վերարտադրությունն էլ քիչ հավանական է, ապա փոխարինման արժեքի գնահատումը կլինի արդարացված:

Շատ դժվար է չափել կառույցի մաշվածությունը, մանավանդ եթե այն գերազանցում է 10 տարին: Սահմանմանը համաձայն՝ հին շինությունը անհնար է վերարտադրել: Այդպիսի դեպքերում ծախսային մոտեցումը կարող է տալ արժեքի սխալ գնահատական ոչ միայն օբյեկտիվրիվ վերարտադրության անհնարինության պատճառով, այլ նաև այն պատճառով, որ տվյալ շինությունները կարող են հանդիսանալ տեղամասի ամենալավ և ամենաարդյունավետ օգտագործման տարբերակը: Եվ վերջապես գոյությունունեցողշինությունների արժեքի գնահատման համար կիրառվող ծախսային մոտեցումը հաշվի չի առնում տեղամասի ամենալավ և ամենաարդյունավետ օգտագործման տարբերակը: Հետևաբար ծախսային մոտեցումըպետք է կիրառել մեծ զգուշությամբ և լինել ուշադիր վերջնական արժեքի համաձայնեցման ժամանակ:

СУЩЕСТВОВАНИЕ ЗАТРАДНОГО МЕТОДА ОЦЕНКИ НЕДВИЖИМОСТИ

В этой статье представлено существование затратного метода оценки недвижимости и связанные с ним проблемы. Более подробно говориться о тех ситуациях, когда при реализации оценивания нужно двигаться именно по существующим путям затратного метода, а так же, представлены некоторые ограничения затратного метода.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ստեփանյան Ս. Շ., Հովհաննիսյան Վ. Փ., Գրիգորյան Ա. Լ.: Անշարժ գույքի էկոնոմիկա և կառավարում: Երևան, ԵՃՇՊՀ, 2008
2. Ստեփանյան Ս. Շ., Վարդանյան Ա. Ա.: Անշարժ գույքի կենսացիկլի կառավարում: Ուս. ձեռնարկ /Ս.Ստեփանյան, Ա. Վարդանյան - Եր.: ԵրՃՇՊՀ հրատ., 2008
3. Артеменко В.В., Варламов А.А., “Оценканедвижимости и плата за землю”. Учебноепособие. М.: ГУЗ, 1996
4. Balck, Henning, Lecture in European Business School, CREM/FM, Life Cycle Project Management. 2001



Տ.գ.թ., դոցենտ՝
Արա Հովհաննիսյան



Մագիստրանտ՝
Քեգլարյան Էլեն

ՀՏԴ 336.748.12

(ԵՃՇՊՀ, «Էկոնոմիկայի, իրավունքի և կառավարման» ամբիոն)

ВОПРОСЫ ИССЛЕДОВАНИЯ ФИНАНСЫ ПРЕДПРИЯТИЙ

Финансы это научная дисциплина, изучающая вопросы распределения недостаточных денежных средств во времени и в условиях неопределенности. Финансы покоятся на трех аналитических "столпах": оптимизация использования денежных средств с учетом фактора времени (анализ межвременных альтернатив), оценка стоимости активов и управление риском, куда входит и портфельная теория. В данной статье рассмотраны изучения финансов с причинами, принципы организации финансов предприятий и финансовые отношения предприятий.

Финансы (finance) – это наука о том,каким образом люди управляют расходованием и поступлением дефицитных денежных ресурсов на протяжении определенного периода времени. Финансовые решения характеризуются там, что расходы и доходы 1) разнесены во времени и 2) как правило не могут быть точно предсказаны ни теми, кто принимает решения, ни кем-либо другим. Так, например, оценивая возможности для основания своего бизнеса, надо будет максимально точно оценить все затраты и неопределенные выгоды (т.е. будущую прибыль), которые рассчитываете получить спустя несколько лет.

Приняв конкретное финансовое решение, бизнесмен воплощает его в жизнь с помощью финансовой системы.

Финансовая система (financial system) – это совокупность рынков и других институтов, испольуемых для заключения финансовых сделок, обмена активами и рисками.

Эта система включает в себя рынки акций, облигаций и других финансовых инструментов, финансовых посредников (таких как банки и страховые компании), фирмы, предлагающие финансовые услуги (например, финансово-консультационные компании), и органы, регулирующие деятельность всех этих учреждений. Одним из важнейших вопросов финансов является изучение закономерностей эволюции финансовой системы.

Для изучение финансов существует , пять веских причин.

- Для эффективного управления личными денежными средствами
- Для успешной деятельности в мире бизнеса
- Для обеспечения интересной и выгодной карьеры
- Чтобы иметь возможность принимать осознанные гражданские решения, оказывающие влияние на экономическую политику страны,
- Для расширения кругозора (стр. 15 Еви Боди,Роберт Мертон Финансы 2007 350стр.)

Рассмотрим эти причины более подробно.

Во первых, знание определенных финансовых принципов и законов помогает правильно распоряжаться личными средствами.

Обойтись без каких-либо финансовых знаний, не исключено. Однако в жизни нередко возникают ситуации, когда приходится обращаться за советом к консультанту по финансовым вопросам. Сегодня подобные услуги предлагают огромное количество индивидуальных консультантов и консультационных фирм: сотрудники банков, фондовые и страховые брокеры, сотрудники компаний, продающих ценные бумаги взаимных фондов и т.д. и т.п.

Вторая причиниа, по которой следует изучать финансы, заключается в том, что базовые знания в этой области чень важны для любой сферы деловой деятельности. Те, которые не намерены специализироваться в финансовой сфере, необходимо обладать определенными знаниями концепций, методов и терминологии, которыми пользуются финансисты, что позволит общаться с этими специалистами и привлекать их для решения своих проблем.

В третьих, вполне вероятно, что вас заинтересует карьера в сфере финансов, в которой имеются различные и потенциально очень выгодные карьерные возможности, становящиеся доступными только при условии, что человек является профессионалом в финансовых вопросах.

В четвертых, базовое понимание основ финансовой системы необходимо для того, чтобы принимать обоснованные гражданские решения. Финансовая система является важнейшей частью инфраструктуры любого общества, экономическая жизнь которого основана на рыночных отношениях.

В пятых, многим людям интересно изучать финансы просто для общего развития. Знание финансовых законов расширяет кругозор и помогает лучше понять, как функционирует реальный мир.

Финансы предпреятий занимают определяющее положение в структуре финансовой системы страны, так как именно на уровне предприятий формируются преобладающая масса финансовых ресурсов государства.

Финансы предприятий выполняют следующие функции: распределительную и котнтрольную.

Распределительная функция финансов заключается в том, что с их помощью формируются и используются все денежные доходы и фонды, имеющиеся на предприятии. Выполняя распеределительную функцию, финансы в целом обслуживают процесс воспроизводства, обеспечивая его непрерывность и оказывая влияние все его стадии. Кроме того, правильное распределение денежных средств стимулирует работу предприятия.

Способность финансов количественно отображать ход воспроизводственного процесса позволяет контролировать его. Основу контрольной функции составляет движение финансовых ресурсов как в фондовой, так и в нефондовой формах. Контрольная функция реализуются двумя способами: через финансовые покозатели в бухгалтерской и статической отчетности, а также посредством финансого воздействия.

В основе организации финансов предприятий лежат следующие принципы:

1) Принцип полной самостоятельности.Этот принцип предполагает самостоятельность в использовании собственных и приравненных к ним средств,благодаря чему обеспечивается необходимая маневреность ресурсов,которая в свою очередь позволяет концентрировать финансовые ресурсы на нужных напровлениях хозяйственной и других видов деятельности предприятия;

2) Ответственность за результаты хозяйственной деятельности.Финансовый результат на предприятии является качественным показателем деятельности не только руководства,но и всего коллектива предприятия.Ответственность возникает также и по поводу всех тех рисков,которые принимает на себя предприятие в условиях рынка;

3) Финансовое планирование.Финансовое планирование определяет направления движения денежных потоков на ближайшее будущее и на перспективу,предполагает получение и напровление использования денежных потоков на ближайшее будущее и на перспективу,предполагает получение и напровление использования денежных средств.Благодаря финансовому плонированию обеспечивается планирование финансого результата;

4) Этот принцип в качестве обязательного условия предполагает формиравание финансновых резервов для любого предприятия.Финансновые резервы обеспечивают устойчивую производственную деятельность в условиах возможных колебаний рыночной конъюнктуры,рисков и т.д.Если предприятие создаёт в достаточном и необходимом размере финансовые резервы,то это обспечивает предприятию соответствующий положительный имидж на рынке;

5) Финансовая дисциплина.Предприятие должно своевременно и полнообеспечивать выполнение финансовых обязательств перед партнёрами,банковскими институтами,органами власти и разнобразными фондами(бюджетнами или внебюджетнами),перед своими работниками и так далее;

6) Самоокупаемость предприятия.Предприятие должно покрывать свои расходы за счёт результатов собственной производственной деятельности,тем самым обеспечивая возобновляемость производства и кругооборот ресурсов предприятия;

7) Деление средтсв,участвующих в обслуживании оборота предприятия,на собственные и заёмные;

8) Разграничение основной и инвестиционной деятельности предприятия. (стр.5 Фирсова А.А.,Татаринков Е.А., Макарова Е.А. М: «Альфа-Пресс» 2004 384стр.)

В составе финансовых отношений выделяются следующие группы денежных операций предприятий:

—С котрагентами – по поводу формиравания первичных доходов,образования и использования целевых фондов внутрихозяйственного назначения(уставного капитала,фондов развития производства);

—С предприятиями – по поводу распределения финансов,при этом движение финансовых ресурсов осуществляется в нефондовой форме(внесение паевых взносов,участие в распределении прибыли от совместной деятельности,приобретение ценных бумаг других предприятий и государства и другие);

—Между предприятием и работниками по поводу выплаты денежных средств,главным образом из прибыли,и части,попадающей под государственное регулирование;

—С потребителими продукции,втсупая в контакты с которыми предприятие самостоятельно выбирает форму и вид договоров,формирует цены на свою продукцию и услуги и оценивает обоснованность цен поставщиков,определяет условия выполнения обязательств и порядок установления санкций.Перечисленные факторы существенно влияют на конечные финансовые результаты;

—Со страховым организациями – по поводу различных видов обязательного и добровольного страхования;

—С банковской системой- по поводу расчётно-кассового обслуживания в связи с получением и погашением ссуд,уплатой процентов,а также предоставлением банкам во временное пользование свободных денежных средств за определенную плату;

—С государством – по поводу образования и использования бюджетных и вне бюджетных фондов;

—С вышестоящими управленческими структурами (<<вертикальные>> и <<горизантальные>> взаимосвязи)- по поводу внутриотраслевых перераспределений финансовых ресурсов. (стр.6 Фирсова А.А.,Татаринков Е.А., Макарова Е.А. М: «Альфа-Пресс» 2004 384стр.)

Эти группы денежных операций и составляют в целом содержание финансов предприятий, которые представляют собой денежные отношения, связанные с формированием и распределением денежных доходов и накоплений у субъектов хозяйствования и их использованием на выполнение обязательств перед финансовой и банковской системами, на финансирование текущих затрат и затрат по расширенному воспроизводству, социальному обеспечению и материальному стимулированию работающих.

Содержание организации финансовой системы включает в себя:

1) Единство воздействия внешних факторов на произвадителей и потребителей товаров;

2) Определённое равновесие финансовых инструментов(т.е. цен,процентных ставок,курсов и комисий и т.д.);

3) Использование законодательных и нормативных актов для регулирования самостоятельных действий каждого из хозяйствующих субъектов;

4) Конкуреция как условие развития и регулятор эекономичесйских процессов.В результате этого преимущество получают наиболее эффективные производства;

5) Самофинансирование предпринимательской деятельности. (стр.5 Фирсова А.А.,Татаринков Е.А., Макарова Е.А. М: «Альфа-Пресс» 2004 384стр.)

Финансы коммерческих организаций и предприятий, являясь основным звеном финансовой системы,охватывают процессы создания, распределения и использования ВВП в стоимостном выражении. Они функционируют в сфере материального производства,где в основном создаются совокупный общественный продукт и национальный доход.

ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ

Ֆինանսները, դա գիտական կարգապահություն է, որն ուսումնասիրում է ոչ բավարար դրամական միջոցների տեղաբաշխման խնդիրը ժամանակի և անորոշության պայմաններում: Ֆինանսները հիմնված են երեք վերլուծական «սյուների» հիման վրա՝ դրամական միջոցների օպտիմիզացում (կրճատում) հաշվի առնելով ժամանակի գործոնը (միջժամկետային վերլուծության այլընտրանք), ակտիվների գնահատում և ռիսկերի կառավարում, որը ներառում է «պորտֆելի» տեսությունը: Տվյալ հոդվածում դիտարկվում են ֆինանսների ուսումնասիրությունները պատճառներով, ձեռնարկության ֆինանսների կազմակերպման սկզբունքները և ձեռնարկության ֆինանսների փոխհարաբերությունները:

СПИСОК ЛИТЕРАТУРЫ

1. Фирсова А.А., Татаринков Е.А., Макарова Е.А. Финансы Предприятий М: «Альфа-Пресс» 2004.- 384стр.
2. Еви Боди,Роберт Мертон Финансы 2007 350стр.
3. Электронная библиотека www.kodges.ru



Ասիստենտ՝
Վարազդատ Հովհաննիսյան

Մագիստրանտ՝
Տիգրան Հայրապետյան



ՀՏԴ 330

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Հոդվածը վերաբերվում է անշարժ գույքի շուկայական արժեքի գնահատման խնդիրներին: Մասնավորապես խոսվում է այն հարցի մասին, որ անշարժ գույքի արժեքի վրա մեծ ազդեցություն կարող է ունենալ նրա տեխնիկական վիճակի մասին առկա իրական տեղեկատվությունը, ինչի համար էլ կարևորվում անշարժ գույքի շուկայական արժեքի գնահատման համատեքստում գնահատվող գույքի տեխնիկական փորձաքննության անցկացման հարցը:

Անշարժ գույքի շուկայական արժեքը սովորաբար դրտարկվում է որպես ապագա տնտեսական պայմանների արտացոլում և հիմնված է կոնկրետ ժամանակահատվածի շուկայական տվյալների վրա: Անշարժ գույքի շուկայի և գործարարության ոլորտում տեղի ունեցող փոփոխությունները կարող են մեծ ազդեցություն ունենալ անշարժ գույքի արժեքի վրա: Նման մեծ ազդեցություն արժեքի վրա կարող է ունենալ նաև շենքի կամ շինության մաշվածությունը:

Անշարժ գույքը ծախսային մոտեցմամբ գնահատելիս գնահատողները գնահատում են տվյալ սեփականության լրիվ վերարտադրության արժեքը կամ լրիվ փոխհատուցման արժեքը, այնուհետև նրանից հանում են շենքերի և շինությունների գնահատված գումարային մաշվածությունը: Մաշվածությունը որոշվում է, որպես »օգտակարության կորուստ՝ կնշանակի նաև ցանկացած պատճառով արժեքի կորուստ«: Ծախսային մոտեցման մեջ մաշվածության գործոնը կիրառվում է այն նպատակով, որպեսզի հաշվի առնվի հատուկ ընտրված շինության բնութագրերի և այդ նույն շինության այն բնութագրերի միջև տարբերությունը, որն այդ շինությունը կարող էր ունենալ, եթե լիներ հենց նոր կառուցված:

Շենքերի և շինությունների օգտագործումն ըստ նշանակության անխուսափելիորեն բերում է դրանց կոնստրուկցիաների տարրերի ծերացմանը և ֆիզիկական մաշվածության ի հայտ գալուն, այսինքն դրանց շահագործողա-տեխնիկական բնութագրերի կորստին՝ բնակակլիմայական և տեխնածին գործոնների ազդեցության արդյունքում: Մաշումը անդառնալի երևույթ է, որը գործնականում բերում է կոնստրուկցիաների վնասվելուն և տեղական կամ ամբողջական քայքայմանը:

Այդ իսկ պատճառով գնահատման գործընթացում շատ է կարևորվում անշարժ գույքի տեխնիկական փորձաքննությունը, որը կատարվում է շենքերի և կառուցվածքների, դրանց սենքերի և առանձին կոնստրուկտիվ էլեմենտների իրական տեխնիկական վիճակի որոշման նպատակով (ֆիզիկական մաշվածության աստիճանի գնահատում):

Շենքերի և կառուցվածքների տեխնիկական փորձաքննություն: Շենքերի և կառուցվածքների, ինչպես նաև կոնստրուկտիվ էլեմենտների տեխնիկական վիճակի որոշման համար կիրառվում է երկու հիմնական մեթոդ՝ տեսողական դիտարկում և սարքավորումային հետազոտություն:

Տեխնիկական փորձաքննության նպատակը - տեխնիկական փորձաքննությունը կատարվում է շենքերին կառուցվածքների, դրանց սենքերի և առանձին կոնստրուկտիվ էլեմենտների իրական տեխնիկական վիճակի որոշման նպատակով (ֆիզիկական մաշվածության աստիճանի գնահատում):

Տեսողական դիտարկումների ժամանակ անհրաժեշտ է համապատասխան մասնագետների ներգրավում, որոնք անուղղակի նշանների և գործոնների հիման վրա, գործող մեթոդների համաձայն կարող են գնահատել շենքերի և կառուցվածքների, դրանց սենքերի և առանձին կոնստրուկտիվ էլեմենտների տեխնիկական վիճակը: Տեսողական դիտարկումների ժամանակ, որպես կանոն, բոլոր մասնագետները պատասխան են տալիս միայն կառուցվածքների և մյուս էլեմենտների ֆիզիկական վիճակին վերաբերող հարցերին:

Շենքերի և կառուցվածքների, դրանց սենքերի և առանձին կոնստրուկտիվ էլեմենտների տեխնիկական վիճակի սարքավորումային հետազոտությունների ժամանակ ներգրավվում են տվյալ աշխատանքների կատարման համար արտոնագրված մասնագիտական կազմակերպություններ: Սարքավորումային հետազոտությունների ժամանակ կարող են ստացվել ոչ միայն ֆիզիկական իրավիճակի վերաբերյալ պատասխաններ, այլև կառուցվածքների ֆունկցիոնալ մաշվածության, հնացվածության վերաբերյալ:

Տեխնիկական փորձաքննության նշանակում: Հիմնական դեպքերը, երբ անհրաժեշտ է շենքերի և կառուցվածքների, դրանց սենքերի և առանձին կոնստրուկտիվ էլեմենտների տեխնիկական փորձաքննությունը, հետևյալն են՝

- մեկ կազմակերպության բալանսից հիմնական միջոցները մեկ այլին փոխանցելու դեպքում, որն օրինակ, ներկայումս խիստ արդիական է համայնքային ունեցվածքի բնակելի ֆոնդը համայնատիրությանը փոխանցելու ժամանակ ;
- կազմակերպության ընթացիկ վերանորոգման և իրականցման կազմակերպման դեպքում, որի ժամանակ կարելի է բավարարվել միայն շենքերի և կառուցվածքների, դրանց սենքերի և առանձին կոնստրուկտիվ էլեմենտների տեսողական դիտարկումներով:
- հիմնավերանորոգման կազմակերպման և իրականցման դեպքում, որի ժամանակ պահանջվում է սարքավորումային հետզոտություն՝ շենքերի և կառուցվածքների, դրանց սենքերի և առանձին կոնստրուկտիվ էլեմենտների տեխնիկական ախտորոշում: Այս գործընթացն ամրագրվում է

տեխնիկական ախտորոշման փաստաթղթով, որը ծառայում է որպես ելակետային փաստաթուղթ նաև նախագծային աշխատանքների իրականացման համար;
- վերակառուցման կազմակերպման և իրականացման դեպքում՝ շենքերի և կառուցվածքների, դրանց սենքերի և առանձին կոնստրուկտիվ էլեմենտների սարքավորումային հետզոտությամբ: Գործընթացն ամրագրվում է տեխնիկական ախտորոշման փաստաթղթով, որը ծառայում է որպես ելակետային փաստաթուղթ նախագծային աշխատանքների իրականացման համար,
- անշարժ գույքի շուկայական արժեքի որոշման համար,
- անշարժ գույքի վարձակալական արժեքի որոշման համար,
- գրավի արժեքի որոշման համար,
- ուտիլիզացման արժեքի որոշման համար (ետ վերադարձվող նյութերի արժեքը),
- ցանկացած տիպի արժեքի գնահատման և մասնավորապես չկատարված նորոգման արժեքի,
- յուրաքանչյուր տիպի վնասի գնահատման, ցանկացած տիպի փոխհատուցման,
- յուրաքանչյուր գործարքի իրականացման, օրինակ՝ արշարժ գույքի առք և վաճառք և այլ հնարավոր դեպքեր,

Պրակտիկան և աշխատանքային փորձը ցույց են տալիս, որ ցանկացած դեպքում անհրաժեշտ է իրականացնել բոլոր հայտնաբերված վնասվածքների և անսարքությունների ֆոտոֆիկսում (լուսանկարում)՝ շենքերում և կառուցվածքներում, սենքերում և դրանց առանձին կոնստրուկտիվ էլեմենտներում: Ընդ որում պետք է ձևակերպվեն որպես կատարված աշխատանքի արդյունք և դրանց տեխնիկական վիճակի գնահատմամբ կազմվեն հետևյալ հիմնական փաստափղթերը.
- ընդհանուր դիտարկումների ակտ,
- տեխնիկական վիճակի ակտ,
- շենքի (կառույցի) զննման տեխնիկական եզրակացություն:

Նկար 1-ում ընդհանուր ձևով ներկայացված է օբյեկտի հետազոտման և տեխնիկական վիճակի գնահատման ծառայությունների պահանջարկի ձևավորման կառուցվածքային սխեման:

Նկար 3.-ում ցույց են տրված հիմնական գործոնները, որոնք ապահովում են շենքերի կամ կառույցների տեխնիկական հետազոտումը եվ դրանց կոնստրուկտիվ էլեմենտները:

Եթե մենք տեխնիկական փորձաքննությունը դիտարկում ենք անշարժ գույքի շուկայական արժեքի գնահատման տեսանկյունից ապա անհրաժեշտ է, որ գնահատողն ունենա որոշակի մասնագիտական գիտելիքներ նշված բնագավառում, ինչը ցավոք սրտի բացակայում է Հայաստանում անշարժ գույքի գնահատման գործունեություն իրականացնող գնահատողների մոտ: Տեխնիկական փորձաքննության արդյունքները կարող են էապես ազդել անշարժ գույքի շուկայական արժեքի վրա, ուստ անհրաժեշտ է, որ մեր գնահատողները քիչ ավե;լի շատ ուշադրություն դարձնեն այս խնդրին: Անհրաժեշտ է, որ որակավորման դասընթացների ժամանակ այս թեմաները ևս արծարծվեն մեր գնահատողների համար: Բացի այդ ցանկալի կլիներ, որ ուսումնական ծրագրերում տեխնիկական փորձաքննության հարցերը դիտարկվեին անշարժ գույքի շուկայական արժեքի գնահատման համատեքստում, այլ ոչ՝ առանձին-առանձին:

Ինչևէ, ներկայիս փուլում խիստ կարևորվում է անշարժ գույքի շուկայական գնահատման արտասահմանյան փորձի վրա հիմնված հայրենի հեղինակների կողմից ներկայացվող մեթոդաբանություններում տեխնիկական փորձաքննության տարրերի ընդգրկման հարցը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ անշարժ գույքի շուկայական արժեքի վրա շատ մեծ ազդեցություն կարող է ունենալ գնահատվող անշարժ գույքի օբյեկտի տեխնիկական վիճակի մասին տեղեկատվությունը. այսինքն՝ կոնստրուկցիաների, տեխնիկական համակարգերի, ինժեներական սարքավորումների և ամբողջական կառույցի ֆիզիկական մաշվածության աստիճանը:

Կոնստրուկցիաների, տեխնիկական համակարգերի, ինժեներական սարքավորումների և ամբողջական կառույցի ֆիզիկական մաշվածությունը պետք է հասկանալ որպես դրանց շահագործման որակի սկզբնական պարամետրերի սպառում (շահագործման տեխնիկական պարամետրեր): Այդ պարամետրերի արժեքները որոշված ապահովված են նախագծման տեխնիկական առաջադրանքի նախագծահետազոտական աշխատանքների և շինարարության իրականացման փուլերում՝

հուսալիություն, ամրություն, կայունություն և տեխնիկական շահագործման ընթացքում բնակլիմայական, տեխնածին ֆակտորների արդյունքում առաջացած այլ բնութագրեր:

Ֆիզիկական մաշվածությունը գնահատվում է փաստացի և նախագծված հաշվարկային տեխնիկական շահագործման պարամետրերի համեմատությամբ՝ ֆիզիկական մաշվածության հատկանիշների միջոցով, որոնք հայտնաբերված են տեսողական զննման կամ գործիքային հետազոտման արդյունքում:

Երևույթն արտահայտվում է կառույցի մաշվածությամբ, ծերացմամբ, քայքայմամբ, փտելով, ժանգոտվելով, ջարդվելով և կոնստրուկտիվ թերությունների ի հայտ գալով: Մաշվածության այդպիսի տեսակները կարող են լինել ինչպես վերացվող, այնպես էլ ոչ վերացվող: Ներկայումս, տեխնիկական հնարավորությունների առումով, հայտնաբերված հնարավոր է վերացնել ցանկաց ֆիզիկական մաշվածություն: Հետևաբար չվերացվող ֆիզիկական մաշվածությունն այն է, որն առաջին հերթին կրում է տնտեսական բնույթ, այսինքն տնտեսապես նպատակահարմար է թե ոչ վերացնել տվյալ մաշվածությունը, սակայն դա ոչ մի կերպ չի կրում տեպնիկական բնույթ: Գոյություն ունեցող մեթոդները չեն ապահովում ֆիզիկական մաշվածության առանձին գնահատման երկու բաղադրիչներ՝ վերացվող և չվերացվող ֆիզիկական մաշվածություններ: Դրանք ընդամենը թույլ են տալիս գնահատել ֆիզիկական մաշվածության ինտեգրալ արժեքը: Վերացվող ֆիզիկական մաշվածությունը ներառում է օբյեկտի առանձին էլեմենտների ուժեղացում կամ փոխարինում, որը տնտեսապես ձեռնտու է:

Դա այնպիսի ֆիզիկական մաշվածություն է, որը հնարավոր է վերացնել ամենօրյա տեխնիկական շահագործում իրականացնելու արդյունքում, պլանային ընթացիկ կամ կապիտալ վերանորոգումից հետո:

ֆիզիկական մաշվածություն - բարելավման արժեքի կորուստ՝ կապված շինարարական էլեմենտների շահագործման որակի ցուցանիշների մասնակի կամ ամբողջական կորուստի հետ, ինչն առաջանում է բնակլիմայական, և տեխնածին գործոնների նախագծման սխալների կամ շինարարության և տեխնիկական շահագործման կանոնների խախտման արդյունքում:

Ընդհանուր դեպքում ֆիզիական մաշվածությունը արտահայտվում է նորոգման շինարարական միջոցառումներին արժեքի, ուղղված կոնստրուկցիաների, էլեմենտների, տեխնիկական համակարգերի, ինժեներական սարքավորումների կամ ամբողջական շենքի անսարքության ու վնասվածքների վերացման և դրանց վերականգման արժեքի հարաբերությամբ[14]:


Ֆիզիկական մաշվածության մեծության գնահատման ընթացքում որոշվում է ֆիզիկական մաշվածության մեծության ինտեգրալային արժեքը, որն իր մեջ ներառում է ինչպես վերացվող, այնպես էլ չվերացվող ֆիզիկական մաշվածությունները: Այդ իսկ պատճառով դրանց առանձին դիտարկումը նպատակահարմար չէ: Ֆիզիկական մաշվածության մեծությունը կարող է որոշվել տոկոսներով կամ դրամական համարժեքով:

Վերջում նշենք, որ այս ասպարեզում բացակայում է հայալեզու գրականությունը, բացակայում է նաև նորմատիվա-իրավական մեթոդաբանական բազան: Արտասահմանյան հեղինակներն ու մասնագետները ներկայացնում են իրենց մեթոդաբանությունները՝ հիմնվելով իրենց երկրի տեխնիկական նորմատիվային բազայի ու կանոնների վրա, ինչը դժվարացնում է մեզ տվյալ մեթոդաբանությունը կրկնօրինակել կամ ադապտացնել Հայաստանի պայմանների համար: Քիչ թե շատ ընդունելի են ռուսական հեղինակների կողմից առաջարկված լուծումները, քանի որ այսպես, թե այնպես մինչև հիմա մենք էլ, նրանք էլ օգտվում են դեռևս ԽՍՀՄ օրոք գործող նորմատիվներից:


ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ս.Շ.Ստեփանյան, Վ.Փ.Հովհաննիսյան, Ա.Լ.Գրիգորյան: »Անշարժ գույքի էկոնոմիկա և կառավարում« ուսումնական ձեռնարկ, Երևան, 2008թ.
2. Башкатов В.С., Бузова И.В.. Основы оценки стоимости недвижимости: Учебно-методическое пособие.- СПб.: Издательство Санкт-Петербурского университета, 2005, 170с.

[14] Քաղաքացիական շենքերի ֆիզիկական մաշվածության որոշման մեթոդիկա. Հաստատված ՌՍՖՍՀ Կոմունալ տնտեսության նախարարության N404, առ 27.10.1970թ. հրամանով, ВСН 53-86 (р). Բնակելի շենքերի ֆիզիկական մաշվածության գնահատման կարգ: Գերատեսչական շինարարական նորմեր: Գործողության մեջ է դրված 1987թ. հուլիսի 1-ից:




Նկ. 1. Անշարժ գույքի շուկայի գործունեության վրա ազդող հիմնական գործոնները և անշարժ գույքի օբյեկտի տեխնիկական վիճակի գնահատման իրականացումն ու կանխորոշող անհրաժեշտությունը:



Նկ. 2. Շենքերի եվ կառույցների հետազոտումների անցկացման փուլերը

Նկար 2-ում ներկայացված է օբյեկտի տեխնիկական հետազոտման պրոցեսի սկզբունքային մոդելը:



Նկ. 3. Տեխնիկական հետազոտման անցկացումը ապահովող գործոնները

Բովանդակություն

Աննա Կոստանյան Էդգար Հովսեփյան ---------- 3
ԷԿՈ ՔԱՂԱՔՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Վարազդատ Հովհաննիսյան Մարիա Ահարոնյան ---------- 7
ԷՔՍՊՐՈՊՐԻԱՑԻԱՅԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԴԵՄ ԲՈՂՔԱՐԿՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Վարազդատ Հովհաննիսյան Աշխեն Հովհաննիսյան ---------- 10
ԵՐԿՐԱՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻԿԻՐԱՌՈՒՄԸ
ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՈԼՈՐՏՈՒՄ

Արա Հովհաննիսյան Նազիկ Կարապետյան ---------- 13
ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Սարգիս Ստեփանյան Հարությունյան Կարեն ---------- 17
ԲՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ, ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ ԵՎ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ

Աննա Ավագյան Քրիստինե Միրիջանյան ---------- 20
ՀԱՐԿԱՅԻՆ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՀԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԱՊԱՀՈՎՄԱՆ ԿԱՐԵՎՈՐ ՊԱՅՄԱՆ

Անահիտ Ադամյան Տարոն Հարությունյան ---------- 26
ԱԳԼՃԿ-ՆԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

Վարազդատ Հովհաննիսյան Հովսեփ Հայրապետյան ---------- 27
ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԵԿԱՄՏԱԲԵՐՈՒԹՅԱՆ
ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Գրիգորյան Ռաֆայել Գևորգյան Գագիկ ---------- 30
ՍԱՔՍԱՅԻՆ ԳՈՐԾԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Աննա Բատիկյան Օլգա Աբովյան ---------- 33
ԿՈՄՈՒՆԱԼ ՎՃԱՐՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՈՒՄԸ ՀՀ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐՈՒՄ

Արմեն Վարդանյան Աղաբեկ Ավետիսյան ---------- 36
ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԾԱԽՍԱՅԻՆ ՄԵԹՈԴԻ ԷՈՒԹՅՈՒՆԸ

Արա Հովհաննիսյան Բեգլարյան Էլեն ---------- 38
ВОПРОСЫ ИССЛЕДОВАНИЯ ФИНАНСЫ ПРЕДПРИЯТИЙ

Վարազդատ Հովհաննիսյան Տիգրան Հայրապետյան ---------- 41
ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ
ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Տպաքանակը՝ 201օրինակ:
Տպագրված է Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարանի տպագրության և լրատվության կենտրոնի տպարանում: Հասցե՝ ք. Երևան Տերյան 105: